






ԶՄԻԱԾԻՒ





Amc 146



ԽԴ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Օգոստոս

1987




ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱԹԱՌ ԵՒ ՍՐԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ
ԲՈՒՆԱՐԵՍՏՈՒՄ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ
ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԻՐԱՅՐ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Բռնարեստ

Անհուն ուրախությամբ ստացանք բարի լուրը Նորին Սրբություն Ռումինիայի Պատրիարքի՝ Բռնարեստում հայոց թեմի եկեղեցական թանգարան կատարած այցելության մասին: Հայ եկեղեցու համար շատ մեծ պատիվ է Ռումինիայի Թեոկտիստ Սրբազան Պատրիարքի այս բարձր ուշադրությունը:

Այս երջանիկ առիթով խնդրում ենք, որ Մեր սիրեցյալ եղբայր Սրբազան Պատրիարքը ընդունի Մեր խորին շնորհակալությունն ու եղբայրական հարգալից սիրո հավաստիքը, ինչպես նաև նրա հոգևոր, լուսավոր անձնավորության հանդեպ Մեր բարձր գնահատանքը, որ Մենք պահում ենք Մեր սրտում տակավին այն օրերից, երբ մեր միջև հոգևոր եղբայրությունը շաղախվեց Ռումեն երկրի օրհնյալ երկնքի ներքո:

Խնդրում ենք, որ Նորին Սրբությունը ընդունի Մեր ջերմ մաղթանքները լիակատար քաջառողջության՝ շատ տարիներ խաղաղությամբ և պըտղառատ իրագործումներով ումեն հավատավոր ժողովրդի փառավոր եկեղեցուն ծառայելու համար:

Էջմիածնի Ս. Աթոռից բարի մաղթանքներ և օրհնություններ Ձեզ, սիրելի Սրբազան, թեմական խորհրդիդ և Ռումինիայի համայն հայ հավատացյալ ժողովրդին:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

Հոծ բազմության ներկայությամբ և խանդավառ մթնոլորտում կատարեցինք հանդիսավոր բացումը Հայ մշակույթի տան և թանգարանի:

Հայերեն և ռուսերեն լեզուներով կարդացվեց Ձերդ Սրբության հեռագիրը:

Հազար շնորհակալություն Ձեր գուրգուրանքի, գնահատանքի և օրհնության համար:

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Բոլխարեստ,
30 մայիս 1987 թ.

ՊՈՒՔՐԵԾԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Դարավոր Ռումանահայ՝ գաղութը վերջին տարիներին ապրում է իր նոր շրջանի վերածնունդը: Եթե 1966 թվականին Պուքրեժի Հայոց փողոցի վրա գտնվող Հայոց Առաջնորդարանի սրահին մեջ հաս-

տատվում էր մեր գաղութի առաջին եկեղեցական և պատմական թանգարանը, Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի ջանքերով, ապա այս տարի, 1987 թվականին վերակազմված և հարստացած թանգարա-




Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը արդասանում է բացման խոսքը

նր գտնում է իր արժանի և հարազատ տունը: 1942 թվականին կառուցված շենքը անմահացնում է Հովսեփի և Վիթթորիա Տուտյանների հիշատակը որպես վառ օրինակ հայրենասիրության և ազգասիրական: Ներշնչված զուտ հայկական ճարտարապետության փայլուն արվեստից՝ հանդիսանում է գեղեցիկ րացումը Պուրբեշի Հալոց Էջմիածնատիպ տաճարին, որի հետ միասին կազմում են Ռումանիո մայրաքաղաքի կենտրոնում գտնվող գեղեցկագույն և արժեքավոր կոթողներից: Թեև ժամանակի ընթացքին շենքը ծառայեց գանազան նպատակների, վերջին տարիներին Թեմակալ Առաջնորդ Ս. Տիրաչը արք-

Սուչավայի Հոգևոր Հովիվ Արամայիս վարդապետ Շլուկյանը:

Շաբաթ 23 մայիս 1987 տեղի ունեցավ պաշտոնական այցելությունը Ռումեն Կըրոնից Նախարար Իոն Քոմիլընաշուի՝ ընկերակցությամբ եկեղեցական խորհրդի վարիչ, Լեոն Թոստերի, որպես Ռումեն իշխանությանց ներկայացուցիչներ: Թանգարանի մուտքին առջև բարի գալուստի խոսքերով նրանց դիմավորեց Թեմակալ Առաջնորդ Ս. Տիրաչը արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, շրջապատված հոգևորականներով և Թեմական Խորհրդի անդամներով: Այցելելով լուսավոր և վերանորոգված սրահները, որտեղ գորգուրանքով և ճաշա-




Առաջնորդ սրբազան հայրը հավատացյալների բազմությանը՝ Մշակույթի Տան բացման առթիվ

եպիսկոպոս Մարտիրոսյանի աշխատանքով և շնորհիվ Ռումեն կառավարության բարյացակամության, շենքը ընդունեց իր նոր և ճշմարիտ կոչումը, որպես Գանձատուն հալոց հավատքի, մտքի և արվեստի կոթողների: Այստեղ հավաքվեցին և կենտրոնացան Ռումանիո բոլոր հայկական համայնքներից և եկեղեցիներից ամենաարժեքավոր իրերը: Այս գործին իրենց նըպաստը բերեցին Պուրբեշի Հոգևոր Հովիվ Ս. Զարեհ ծ. վարդապետ Պարոնյանը և

կով գետեղված են մեր հոգևոր և մշակութային արվեստի նշխարները, պետական հյուրերը հայտնեցին իրենց գնահատանքը. «Թեև Հայ Համայնքի թիվը փոքր է Ռումանիո մեջ, սակայն իր հնությանը, պատմությանը, մշակույթով և բարձր ճաշակով արդար իրավունքը ունի այսպիսի շքեղ մշակութային կենտրոն մը ստեղծելու»: Իր խոսքին մեջ Կրոնից Նախարարը համաձայնություն հայտնեց, որ այստեղ կազմակերպեն հայերեն դասընթացներ և

տարբեր համոզություններ և նույնիսկ խորհուրդ տվեց ներկայացված իրերով կազմել գեղեցիկ մի ակում: Բարձրաստիճան հյուրերը ստորագրեցին Ոսկե Մատյանի մեջ: Ապա հրավիրվեցին Հայոց Առաջ-

քը կատարեց հոգևոր երգեր, որից հետո ընթերցվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա-ի հետևյալ շնորհավորական Գիրը այս ուրախ առիթով.



Հայ Մշակույթի Տունը Բոխարեստում

նորդարանի սրահը, որտեղ տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն և հյուրասիրություն: Բաժանումից առաջ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանը Ռումանիո Կրոնից Նախարարին Վեհափառ Հայրապետի անունից նվիրեց «Էջմիածնի Գանձեր» շքեղ ակրումը և «Արարատ» պատկերաշարը՝ հայտնելով միևնույն ժամանակ իր գոհունակությունը և շնորհակալությունը:

Կիրակի մայիս 24-ին հավարտ Ս. Պատարագի, խոումներամ բազմությամբ, գավառի բազմաթիվ հրավիրյալների ներկայությամբ և Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանի նախագահությամբ տեղի ունեցավ Թանգարանի բացման արարողությունը: Ներկաների ջերմ ծափահարության տակ Սրբազան Սուաջնորդը կտրեց մուտքի ժապավենը: Եկեղեցական երգչախում-

«Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐԶԵՊԻՍԿՈՂՈՍ
ՄԱՐՏԻԿՑԱՆԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ՌՈՒՄԱՆԻՈ

Բոխարեստ.

Ուրախ սրտով կողջումենք բացումը տի-րախնամ Թեմիդ Թանգարանի և գրադարանի մայրաքաղաքի Հայ Մշակույթի շենքում: Սուրբ Էջմիածնից հղում ենք Մեր օրհնությունը Ձեր այս Աստվածահաճո իրազործումին, մաղթելով որ Բոխարեստի Հայ Մշակույթի Տունը այսպիսով դառնա Հայկական հոգևոր և գրական բազմադարյան արժեքների մի գանձատուն Ձերդ Սրբազնության և Թեմական խորհուրդի հովանո ներքո:

Մաղթում ենք Ձեզ սիրելի Սրբազան և Ձեր գործակիցներին, գործելու անսպառ

շինարար եռանդ, նորանոր պայծառ իրագործումներով: Այս երջանիկ առիթով առաքում ենք Մեր հայրական օրհնությունը մաս մեր շատ հարազատ Ռումանիո լուսառատ հայրենիքի հայ հավատացյալ Մեր գավակներին հայցելով բոլորի համար Սուրբ Հոգվո շնորհները:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

Ապա Թեմակալ Առաջնորդը խոսք առավ, անդրադարձավ օրվա նշանակությանը և ավարտին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Ռումանահայ գաղութի հանդեպ հոգատարության համար, շնորհակալություն հայտնեց մաս Ռումեն կառավարությանը, որ հայ փոքրամասնությանը հոգևոր և մշակութային լայն ազատություն է շնորհում: Օրհնության խոսքով և հուզումով հիշեց Սըրբազան Հայրը Հովսեփի և Վիքթորիա Տուսաններին և մեր ժողովրդի բոլոր արժանավոր գավակներին, կոչ անելով հայ երիտասարդներին արթուն լինել և անշեշ պահել մեր նախնյաց հավատքը, ոգին և միլիոնը:

Ներկաները հիացումով և հուզումով այցելեցին թանգարանի սրահները՝ գնահատելով ցուցադրված իրերի բազմազանությունը և հնությունը: Գնահատանքի արժանացան եկեղեցական հին վարագույրները բերված Սուչավա և Պոթոշան քաղաքներից, ինչպես մաս հայատիպ սրբանկարներն ու եկեղեցական սպասները Յաշ, Պաքլու և Ֆոքշան քաղաքներից: Հատուկ ուշադրության արժանացան 1851 թ. Կաֆա ընդօրինակված հայերեն ձեռագիրը, ինչպես մաս այլ բազմաթիվ ձեռագրեր ընդօրինակված Ռումանիո մեջ երբեմնի եպիսկոպոսանիստ Սուչավա քաղաքում: Հետաքրքիրության արժանացան թանգարանի այն ցուցադրվածները, որտեղ ներկայացվում են Ռումանիո հնագույն հայ ընտանիքները, կարևորագույն մշակութային, արվեստի, քաղաքական, գիտական և եկեղեցական հայագի գործիչները: Իրենց հատուկ տեղը ունին Ամենայն Հայոց Հայրապետը և Ռումանահայ Թեմի Առաջնորդը: Կան մաս բազմաթիվ եկեղեցական Կոնդակներ և պատմական արժեքավոր փաստաթղթեր: Արարողության ավարտին Սրբազան Առաջնորդը, մյուս հոգևորականները, թե-

մական և թաղական խորհրդների անդամները և ներկաները գրեցին իրենց տպավորությունները և ստորագրեցին Ոսկե Մատյանում:

Հաջորդեց Առաջնորդարանի սրահին մեջ պատվիրակների պաշտոնական ընդունելություն և հյուրասիրություն:

Նույն օրերին Ռումանահայ գաղութին հյուրը եղավ մաս Ռումեն Ուղղափառ Եկեղեցու Նորընտիր Հովվապետ Թեոկտիստ Պատրիարքը իր շքախմբով:

Պուրբեշի Հայոց Եկեղեցու զանգերի ուրախ դողանքի տակ Թեմիս Առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը ջերմորեն ողջունեց Ռումեն Եկեղեցու Հովվապետին և մյուս բարձրաստիճան հոգեվորականներին: Ներկա էին Պուրբեշի Հոգևոր Հովիվ Տ. Զարեհ Ժ. վարդապետ Պարոնյանը, Սուչավայի հոգևոր հովիվ Տ. Արամայիս վարդապետ Ծլուկյանը, Թեմական և Թաղական խորհրդի անդամներ:


Եկեղեցական աղոթքից հետո բարձրաստիճան պատվիրակությունը այցելեց Պուրբեշի Հայ Մշակույթի Տունը և Թանգարանը, որտեղ հայ երիտասարդներ ազգային զգեստներով և ծաղիկներով դիմավորեցին հյուրերին: Այցելության ընթացքին Ռումեն Հովվապետը և պատվիրակության անդամները բարձր գնահատեցին Հայոց Եկեղեցին և Հայ Ժողովրդի մշակույթը՝ ցանկություն հայտնելով ավելի ամրապնդել և սերտացնել մեր երկու ազգային քրիստոնեական Եկեղեցիների կապերը: Այս իմաստով Ռումեն Եկեղեցու Հովվապետը խոստացավ կրկին այցելել Հայոց Եկեղեցի՝ ներկա գտնվելու կիրակնօրյա արարողությանը:

Ռումեն Պատրիարքը և մյուս բարձրաստիճան հոգևորականները օրհնությամբ և սիրով ստորագրեցին Ոսկե Մատյանին մեջ:

Հաջորդեց հյուրասիրություն, որի ընթացքում Ռումանահայ Թեմի Առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը հայտնեց իր շնորհակալությունը հանուն հայության և առաջարկեց բաժակ բարձրացնել մեր Եկեղեցիների Հովվապետների կենացը, մեր ժողովուրդների բարեկամության կենացը:

Այսպիսով ավելցավ լուսավոր մի էջ ևս մեր դարավոր գաղութի պատմության վրա:

ԹՂԹԱԿԻՑ



ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

ՔԱՐՈԶ

ՏՈՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ
(16 օգոստոս 1987 թ.)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարումակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անըստ յորախտութիւն տրտմեցելոցն ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան...»:

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Սրբազան քնարերգու-շարականագիրը Սուրբ Աստվածածնին ձոնված իր տաղում Աստվածամոր կերպարը բնորոշում է հետևյալ բառերով. «Համեղաճաշակ պտղի բանական ճյուղ, որից անսպառ ողկոյզ կթվեց մեզ համար, որպէս ուրախություն գիտության ծառից ճաշակելուց տրտմածներին...»:

Հո՞ծ բազմությամբ այսօր հավաքվել ենք Ս. Էջմիածնի Մայր տաճարի կամարների տակ, տոնախմբելու Աստվածամոր Վերափոխման հիշատակը: Ինչպէս գիտեք, Ս. Էջմիածնի այս դարավոր տաճարը ևս այլ եկեղեցիների շարքին նվիրված է և կոչվում է Ս. Աստվածածնի անունով:

Երեկ, շաբաթ օրը, Հայաստանյայց Եկեղեցին տոնախմբեց Ծողակաթի հիշատակը՝ ըստ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի: Հոգեգալստյան տոնին հաջորդող երկրորդ կիրակի օրը ամեն տարի մեր Եկեղեցին հանդիսավորապէս տոնախմբում է Ս. Էջմիածնի հիմնադրության տոնը՝ «Տոն Կաթողիկէ Էջմիածնի» կոչելով այն:

Այսօր մեր Եկեղեցին մի անգամ ևս անդադաւում է Ս. Էջմիածնի տոնին, այս անգամ վերստին պանծացնելու համար այն վսեմական տեսիլքի հիշատակը, որի ընթացքում մեր հավատի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչը երկնքից ցուցող շողի և նրա կաթման վկան դարձաւ, այսինքն՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի էջքին ի Հայաստան աշխարհ:

Սուրբ Գրիգոր իբրև պատասխան իր անչափելի տենչանքին և մշտապէս աղոթքներին, իր հոգու մաքրության ու անբծության շնորհիւ արժանացաւ մահկանացուների համար անհնարին շնորհին՝ աստվածային այս փառավոր տեսիլքին:

Ծողակաթ, նվիրական մի հասկացու-

թյուն, երկնաշող մի հայտնություն, որ կարծես թե ցույց էր Ավետարանի լույսին, առաքյալների միջոցով այդ լույսի առաջին շողարձակման հայրենի հողում: Այսպիսով շողկապելու համար հավատալիոր հոգիները կենսատու մի ավանդության հետ՝ աստվածային և մարդկային հարաբերության իբրև դաշինք:

Արդարև, սքանչացած այս տեսիլքի տպավորությունից, շարականագիրը հիացազին աղաղակում է. «Ուրախ լեր, բերկրեա հարսնացեալ սուրբ եկեղեցի, պաշտանցո զմանկումս քո յօրհնաբանութիւն, ծագողին զշող լուսոյ ի քեզ մայր եկեղեցի»:

Բոլորովին էլ պատահականություն չէ, որ Շողակաթի տունը կանխում է Աստվածածնի Վերափոխման տոնին: Երանաշնորհ մեր հայրապետները իմաստուն մի դասավորությամբ այս գույգ տոները գետեղել են կողք-կողքի, հատուկ նպատակով: Ինչպես ասացինք, Սուրբ Էջմիածնի Կաթողիկեն նվիրված է Սուրբ Աստվածածնին: Այս Կաթողիկեն «Մայր եկեղեցի» է, Մայր տաճար, հայ եկեղեցիների մեջ իր ավանդական և իրավական բոլոր՝ առավելություններով, միաժամանակ խորհրդաբար նաև մայրն է հավատացյալների, որովհետև նրա ծոցից ենք ծնվում, նրան որդեգրվում ու մի օր էլ որպես աղայիսին մեր աչքերն ենք փակում նրա ծոցում:

Այսպիսով եկեղեցին դառնում է մեզ համար մայր: Ս. Աստվածածինը նույնպես մեր մայրն է, որովհետև նա է ծնունդ տվել Աստվածորդուն՝ Հիսուսին: Եվ որովհետև Հիսուս և նրա հիմնած եկեղեցին նույնն են, այսպիսով Սուրբ Աստվածածնի մայրության գաղափարը անխուսափելիորեն տարածվում է նաև եկեղեցու հավատացյալների վրա: Արդ՝ մայրության գաղափարի այս բոլոր հոգևոր ու նյութական հասկացությունները խորհրդավոր մի կապ են ստեղծում Շողակաթ-Էջմիածնի և Ս. Աստվածածնի տոների միջև:

Աշխարհում ստեղծված առաջին կինը՝ Եվան, մեղքն ու դատապարտությունը բերեց աշխարհ, իսկ Մարիամ՝ փշրեց մեղքի կապանքները՝ Աստվածորդու ծննդամբ: Նրա միջոցով Աստված մարդացավ, հողեղենի բնություն զգեցավ, երեսուներեք տարի շարունակ ապրեց մեզ հետ, հրաշքներ գործեց, սովորեցրեց և ցույց տվեց մարդկության փրկության ճանապարհը, ապա մարդկանց կողմից դատապարտվեց, խաչվեց ու թաղվեց և, որովհետև Աստվածությունը նրանից չէր բաժանվել, հրաշափառապես հարություն առավ: Հարությունից հետո քառասուն օր իր աշակերտների հետ

ապրեց, նրանց աչքի առաջ էլ երկինք համբարձավ, այնտեղ իր Հոր աջ կողմում բազմելու համար:

Մեր Տիրոջ աշխարհային կյանքի մասին ընթերցելիս Ավետարանում բազմիցս հանդիպում ենք Սուրբ Մարիամի կերպարին: Բացի ծննդյան այդ խորհրդավոր պահից, Սուրբ Աստվածածինն հանդիպում ենք Հիսուսին տաճարին ընծայելու առթիվ, Կանայի հարսանքին և Հիսուսի խաչափայտի առջև Գողգոթայի բարձունքում, ուր Հիսուս իր սիրելի աշակերտ Հովհաննեսին ասում էր. «Ահա մայր քո», ցույց տալով նրան իր մայրը՝ Մարիամ:

Սուրբ կույս Աստվածածինը մեծ դեր է խաղացել Հիսուսի կյանքում նրա անմահ շրջանին, իբրև գորովալից մայր, դաստիարակ և սնուցիչ: Հիսուսի համբարձումից հետո, ըստ առաքելական ավանդության, նրան տեսնում ենք աշակերտների շրջապատում, երբ նա նրանց հետ ապրել ու գործել է շուրջ 15 տարի, դառնալով նրանց սիրո ու գուրգուրանքի առարկան:

Երբ հասավ ժամանակը, Աստվածամայրը աչքերը փակեց՝ փոխադրվելու համար աշխարհի կյանքից նոր կյանքի: Հիսուսի աշակերտները փառքով թաղեցին նրան Գեթսեմանիի ձորակում գտնվող ընտանեկան վիմափոր դամբարանում: Ավանդությունը ասում է, որ Տիրամոր գերեզմանի վրա երեք օր ու գիշեր լսվել են հրեշտակների քաղցրաձայն երգեր: Հիսուսի աշակերտներից Սուրբ Բարթողիմեոս առաքյալը, որը հետո դարձավ Հայաստանի լուսավորիչ և անհատակ առաքյալը, Աստվածամոր թաղման շրջանին հեռու էր գտնվում: Երբ ճանապարհորդությունից Երուսաղեմ վերադարձավ, շատ նվիրված լինելով Տիրամորը, ցանկացավ այցելել Գեթսեմանի ու տեսնել նրան վերջին անգամ: Նրա ցանկությանը ընդառաջելով, նրանք եղբայրներով գնացին դեպի գերեզման և զարմանքով տեսան, որ Տիրամոր մարմինը դամբարանում չէր: Ինչպես խոստացվել էր նրան ի վերուստ, Տիրամայրը մարմնով փոխադրվել էր երկինք:

Այս իսկ պատճառով Աստվածամոր մահը մենք կոչում ենք մեջում, որովհետև նա իր մարմնով փոխադրվեց երկինք՝ իր Որդու աստվածային փառքի մեջ ապրելու: Եվ այնտեղ, իբրև մարդկության ճշմարիտ գուրգուրտ մայրը, դառնալու էր բարեխոս հանրո մարդկության մեղքերի քավության համար: Այս իսկ պատճառով այսօրվա տոնը մեր եկեղեցին կոչել է «Տոն Վերափոխման սուրբ Աստվածածնի» և իրավամբ այս տոնը Հայաստանյայց եկեղեցու հինգ զու-

խավոր տոներից՝ տաղավարներից մեկն է համարվում:

Վերափոխման տոնի հետ զուգընթաց մեր Եկեղեցին օրհնում է տարվա խաղողի բերքը: Սրբազան շարականագիրը Աստվածամոր կերպարը նմանեցրել է խաղողի, իբրև քաղցրահամ պտուղը խաղողի որթատունկի, որից կթվել է Հիսուս՝ մարդկությանը ուրախություն բերելու նպատակով, ջնջելով Ադամի բերած մեղքի տրտմությունը:

Առաջին մարդը՝ Ադամ, իր մեղանշականությամբ տրտմություն բերեց աշխարհ, իսկ Հիսուս իր զոհողությամբ մարդկանց մեղքերը սրբեց, ուրախություն բերեց մարդկությանը և վերահաստատեց կապը մարդու և Աստծու միջև: Մեր Տերը՝ Հիսուս, ասում է. «Ես եմ որթն կենդանի», այսինքն՝ ապրող, կենդանի որթատունկը, որի պտուղը պիտի բամվեր վերնատան մեջ, որպեսզի խորհրդանշեք Հիսուսի սուրբ արյունը՝ թափված մարդկության համար այս բառերով. «Արբեք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»:

Միրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Այսօր Վերափոխման տոնն է Սուրբ Աստվածածնի, իբրև տիպար մայր և կին. նրա տոնը դառնում է նաև ամբողջ աշխարհի ողջամիտ և զոհվող կանանց տոնը: Ըստ քրիստոնեական վարդապետության ուսուցումների, կինը այդ մարդու հետ հավասար իրավունքներով է օժտված, և ըստ Պողոս առաքյալի վկայության՝ «խտրականություն չկա արուի և էգի միջև»:

Հայ ժողովրդի պատմության մեջ ևս մեծ է թիվը ազնիվ մայրերի, որոնք ի սեր հայրենիքի և հայրենյաց փառքի որքան մատաղ սերունդներ են դաստիարակել: Դուք գիտեք, թե Հայ Եկեղեցին ինչքան մեծ թվով կին սրբեր ու նահատակներ ունի, ո-

րոնք գիտակցորեն իրենց արյունն են թափել և դարձել հայրենիքի փրկության ու ազատության ռաֆվիրաները:

Համամարդկային պատմության մեջ ևս տեսնում ենք, թե որքան մեծ թվով կանայք տեսիլքներով, նվիրումով և կոչմամբ կարողացել և կարողանում են պայքարել անարդարության, ցեղային խտրականության, կորիզային գեների սանձազերծման դեմ և ծառայում են համամարդկային եղբայրության վսեմ գաղափարների իրագործման: Եվ հաճախ նրանք իրենց կյանքն են զոհում աշխարհի խաղաղության և պատերազմների ընդմիջող դադարեցման վսեմ իդեալների իրագործման ճանապարհին:


Քրիստոնյա կնոջ մտապատկերի առջև միշտ կենդանի է Աստվածամոր կերպարը, նրա բարոյական կեցվածքը, զոհողությունը, նվիրումը, գուրգուրանքն ու սերը:

Սուրբ պատարագի այս սրբազան պահին, երբ Աստվածամոր Վերափոխման տոնի հիշատակով մեր բանականությունը խնդությամբ ենք լցնում և վեր հանում ու պանծացնում ենք ճշմարիտ կնոջ, մոր, բրոջ, կերպարը՝ ես շնորհավորում եմ բոլորիդ, սիրելի կանայք՝ մայրեր և քույրեր, ու մաղթում, որ ձեր ուսերի վրա ծանրացող ծառայության և զոհողության քաղցր լուծը հոծարության տանք, լինեք գիտակից ձեր սրբազան պարտականությունաց, լինեք դաստիարակ նոր սերնդին և մանավանդ լինեք այն քաղցրահամ գինին, որը համեմելու է ձեր ընտանեկան հարկերը:

Թող Սուրբ Աստվածածնի կյանքն ու կերպարը լինի մեր կյանքի ուղեցույցը, որպեսզի մենք էլ մխիթարված և հավատով կրկենք քաղցրաքնար տաղերգուի խոսքերը. «Դու հողանիթ արովք էս, հարսն ի յերկրէ յերկինս ես, գԱստուած մարմնով ծնեալ ես, Աստվածածին մեղայ քեզ»:

Ամեն:





ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎԶՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 30-ին, հինգշաբթի օրը, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերազնորի Տ. Սիոն արքեպս. Մանուկյանի, տեղի ունեցավ վարդապետական թեզի պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներ, ուսանողներ և բազմաթիվ հյուրեր:

Մայր Աթոռի երիտասարդ միաբան Տ. Ասողիկ արք. Արիստակեսյանը նախապես իր պատրաստած թեզը ներկայացրել էր Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբության հանձնարարությամբ կազմված հանձնախումբը, որի կազմում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերազնորի Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը (նախագահ), «Էջմիածին» ամսագրի խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու, հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Երվանդ Մելքոնյանը և Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Արտաշես Մաթևոսյանը, քննելով թեզը, իրենց զեկուցագիրը ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին:

Վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունն սկսվեց ժամը 11-ին: Նախ իր կատարած աշխատանքի և ներկայացրած ուսումնասիրության մասին բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Տ. Ասողիկ արք. Արիստակեսյանը, որի թեզի թեման էր «Սողոմոնի տաղերը կամ քրիստոնեական հնագույն երգեր»: Զեռնարկելով

այս գործին, Հայր Ասողիկն իր առջև նրպատակ էր դրել հայ ընթերցողին ներկայացնել վերոհիշյալ երգերի հայտնագործման ու ուսումնասիրման պատմությունը, ինչպես նաև դրանց հայերեն թարգմանությունը՝ ֆրանսերենից:

Բանավոր պաշտպանությունից հետո հանձնաժողովը Տ. Ասողիկ արքեպ. Արիստակեսյանի կատարած աշխատանքը գնահատեց «լավ»:

Օգոստոսի 1-ին, շաբաթ օրը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվեց վարդապետական աստիճանի տվչության արարողությունը: Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Տ. Ասողիկ արք. Արիստակեսյանին վարդապետական աստիճանի տվչությունը կատարեց գերազնորի Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը: Արարողության ավարտից հետո արքայան հայրը հետևյալ բովանդակային խոսքն ուղղեց մորընձա վարդապետին.

«Հոգևորականը ձեռնադրության ժամանակ երեք ուխտ կկատարե.

ա. Ծառայել Աստուծո:

բ. Ծառայել Եկեղեցիին:

գ. Ծառայել Քրիստոսի բանավոր հոտին:

Ինչպես ըսած է Ս. Գրիգոր Լուսավորիչ՝ «Ծառայք եմք ծառայիցն Աստուծոյ»: Պողոս առաքյալ կհայտարարե, թե՝ «Զորս ետ Աստուած յեկեղեցուջ այս են. նախ զԱռաքելս, երկրորդ զՄարգարէս, երրորդ զՎարդապետս» (Ս. Կորնթ. ԺԲ 28): Հիսուս իշխանություն տվավ 12 առաքյալներուն քարոզելու Ավետարանը, մարգարեները գուշակեցին Մեսիայի գալուստը և վարդապետները իշխանություն ունին շարունակելու առաքյալներու պաշտոնը:

Այսօր հոգեկան ուրախության օր մըն է Մայր Աթոռին և մեզի համար: Հայ Եկեղեցւոյ վարդապետներու թիւին վրա նոր վարդապետ մը կապելնա հանձին Ս. Ասողիկ վարդապետին, որ պաշտոն ստացաւ քա-

Յ 15): Ավետարանի քարոզիչը իր խոսքն ավելի իր կյանքի օրինակով պիտի ուսուցանէ հավատացյալներուն Աստուծոյ խոսքն ու պատգամները՝ օրինակ ըլլալով հավատացյալներուն «քանիք, գնացիք, սիրով,



Մի պահ տվչության արարողությունից

րոզելու, Ս. Ավետարանը և Հայ Եկեղեցւոյ ողղափառ վարդապետությունը հայ հավատացյալներուն:

Հայ Եկեղեցին հավատարիմ մնաց Ս. Ավետարանին ու Քրիստոսի պատգամներուն և քարոզության: Հայ Եկեղեցւոյ աստվածաբան վարդապետները անաղարտ պահեցին Եկեղեցւոյ ողղափառ դավանությունը և մերժեցին հերետիկոսներու և հերձվածողներու մոլար քարոզությունները:

Ինչպէս Պողոս առաքյալ իր աշակերտին՝ Եփեսոսի Եկեղեցւոյ երեց Տիմոթէոսին կրպատվիրէ, մենք ալ կրափագինք թելադրել Հայր Ասողիկ վարդապետին՝ «Փութասջիր գանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ողիղ համառօտել զբան ճշմարտութեան» (Բ Տիմ.

հաւատով և սրբութեամբ» (Ա Տիմ. Դ 12):

Կօրհներք Հայր Ասողիկը և կմաղթենք, որ վարդապետական գավազանը միշտ ծաղկյալ մնա իր ձեռքին մեջ և ջանա առաջնորդել և մխիթարել հայ հավատացյալները շնորհօք Ս. Հոգւովն: Ամեն:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Հայր Ասողիկին Հայ Եկեղեցւոյ վարդապետի բարձր աստիճանին արժանանալու համար և հույս հաշտում, որ այսուհետեւ ևս նա իր ջանքերն ի սպաս կդնի Հայ Եկեղեցւոյ բարգաւաճման ու հայ ժողովրդի ծառայության սրբազան գործին:

Տ. ԱՍՈՂԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ



Ծնվել է 1959 թ. Էջմիածնի շրջանի Հայթաղ գյուղում: Ավագանի անունը եղել է Սմբատ:

1976 թ. բարձր առաջադիմությամբ ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել Ա. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1980 թ. դեկտեմբերի 25-ին, Ա. Ստեփանոսի տոնի օրը, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրուքյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1982 թ. փայլուն հաջողությամբ ավարտել է հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը և հաջորդ տարվա մարտ ամսին, հոգևոր ճեմարանի հարկի տակ, պաշտպանել «Գրիգոր Նարեկացին և Թոմարակյան շարժումը» թեմայով իր ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1983 թ. հոկտեմբերի 16-ին Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանի:

1983 թ. մինչև 1985 թ. կատարել է Վեհափառ Հայրապետի գավազանակրի պաշտոնը:

1985 թ. Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ հայր Ասողիկը մեկնել է Փարիզ՝ իր ուսումը կատարելագործելու: Այժմ նա սովորում է Փարիզի «Institut catholique»-ի աստվածաբանական ֆակուլտետում, ինչպես նաև իր ծառայությունն է բերում տեղի համայնքին:

Հեղինակ է չորս բանաստեղծական ժողովածուների («Աստվածամայր», 1986, Փարիզ, «Էջմիածին», 1986, Վենետիկ, «Փշե ծաղիկ, քալության ցող», 1987, Վենետիկ, «Երկինք, սեր, հույսեր», 1987, Փարիզ):





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 26-ին, կիրակի.—Վարդավառ:
Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, և պատարագ մատուցեց Ս. Կոմիտաս վրդ. Հովնանյանը: «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Փարիզի «Institut catholique»-ի աստվածաբանական ֆակուլտետի ուսանող Ս. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

.*.*

Հուլիսի 27-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Ս. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

.*.*

Հուլիսի 28-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնեց «Մերձմուտ»

կովյան» առողջարան՝ հանգստանալու: Նորին Սրբությանը բարի ճանապարհ մաղթելու համար «Զվարթնոց» օդանավակայան էին եկել Մայր Աթոռի միաբանությունը և ՀՍՍՀ Միգիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանն ու տեղակալ տիար Ռաֆիկ Զարգարյանը:

.*.*

Օգոստոսի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Ս. Սերովբե արք. Իսախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ընդհանուր ինձ քահանայական փառք մտանել ի պաշտօն սրբութեանց քոջ» (Խորհրդատետր) բնաբանով:

.*.*

Օգոստոսի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Ս. Նավասարդ արք. Կոնյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Տէր, ուղղեա զգնացս իմ ի ճանապարհս խաղաղութեան, Տէր, առաջնորդեա



ՎԵՀԱՓԱՆՈՂ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖՐԱՆՍԻՍԿԱՆ ՈՒՅՏԱՎՈՐՆԵՐՈՎ, ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ:
ՎԵՀԱՓԱՆՈՒ ԶԱՅԻՑ՝ ՀԱՅՐԱՊԵՏ ԴՐՈՖ, ԺԱՆ ՄԱԶԵ

(25 հուլիսի 1987 թ.)



ինձ ի ճանապարհ արդարութեան և ի կեանս յախտեմից» (Ժամագիրք) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 16-ին, կիրակի.—Վերափոխումն Սուրբ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Համեղաճաշակ պղծողն բանաւոր քարունակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ յորախորթին տրտմեցելոցն ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան...» (Ծարական) բնաբանով (տես էջ 8):

Պատարագի ավարտին սրբազան հայրը կատարեց «Օրհնութիւն խաղողոյ» կարգը:

*
* *

Օգոստոսի 17-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քնն. Կյուրեղյանը:

*
* *

Օգոստոսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Նիկոգիայի հայոց հոգեվոր հովիվ Տ. Վազգեն քնն. Սանդրունին:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Լեւոնգրադի հոգևոր ակադեմիայում կատարելագործվելու մեկնած Տ. Եզրաս արք. Ներսիսյանը:

*
* *


Օգոստոսի 24-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ վերադարձավ «Մերձմուկովյան» առողջարանից: «Զվարթնոց» օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Մայր Աթոռի միաբանությունը և ՀՍՍՀ Միմիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանն ու տեղակալ տիար Ռաֆիկ Զարգարյանը:


*
* *

Օգոստոսի 30-ին, կիրակի.—Տօն գիտի գօտոյ Սրբոհոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպս. Քեշիշյանը և «Հայր Մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ընդէ՛ր այդպէս վատասիրտք էք, չե՛ք ևս ունիք հաւատս» (Մարկ. Դ 40) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:





ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

**ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

Ս. Թ. Թուլիսի 12-ին, բարձր կարգադրությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի և ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական Փոխանորդ Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի, քահանայական աստիճան տուացավ հոգևոր ճեմարանի շրջանավարտ բարեշրճորի Աղասի սարկավագ հարույշանը:

Ս. Թ. Թուլիսի 11-ին, շաբաթ օրը, երեկոյան, կատարվեց «Կոչումն քահանայության» կարգը, խարտավիականությամբ Տ. Կարապետ ավագ քահանա Գրըճյանի, որը ի լուր ներկա հավատացյալների վկայեց ընծայացուի հոգևոր, մտավոր պատրաստվածության և ուղղափառ դավանության մասին:

Այս անորոշման խոստացավ «առանց ձանձրանալու կալ ի պաշտօնն Աստուծոյ»

և պահել ուղղափառ դավանությունը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

Վերջում անորոշման ընթերցեց Առաքելական Եկեղեցու ուղղափառ դավանությունը ըստ ձեռնադրության մաշտոցի:

Հուլիսի 12-ին, կիրակի օրը, բազմամարդ էր առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցին: Օրվա պատարագիչն էր թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը: Պատարագին սպասարկում էին՝ Տ. Կարապետ ավագ քահանա Գրըճյանը, Տ. Սարգիս քահանա Թաշչյանը, սարկավագներ և դպիրներ:

«Զի ողորմած և մարդասեր ես Աստուած» աղոթքից հետո դարաց դասը հանդիսավորությամբ սկսում է երգել «Այսօր Աստուածայինն զուարճանայ» շարականը:

Նորընծան խարտավիակ Տ. Կարապետ ավագ քահանա Գրըճյանի ողեկցությամբ դուրս է բերվում և ծնկաչոք առաջնորդվում է Սուրբ Սեղան հարավային աստիճաններով:

Մի քանի հարցումներից և աղոթքներից հետո նորընծան ձեռքերը վեր բարձրացրած ծնկաչոք դառնում է դեպի ժողովուրդը, որպես նշան աշխարհից հրաժարվելու:

Հնչում է «Աստուածային և երկնաւոր շնորհ...» շարականը, և ժողովրդի հոծ բազմությունը երիցս վկայում է «Արժանի է»:

Նորընծան ծնկաչոք դառնում է դեպի Ս. Սեդան, և ձեռնադրող սրբազանը ձեռքը դրնելով նորընծայի գլխին կարդում է աղոթքը, որով խնդրում է Ս. Հոգու շնորհները «գի կեցցէ անքիծ և անարատ վարուք...», ստանց գայթակղութեան յամենայն նենգութենէ չարին»: Այնուհետև սրբազան հայրը «ձեռամբն քերէ զուրարն ի ձախէն ի յաջ»:

Ընթերցվում է օրվա գիրքը, ավետարանը, ավում է հավատամքը և վերաբերվում է սուրբ ընծան:

Նորընծան սրբազանից ստանում է փիլոն և մատարագիչի զգեստ: Մինչ նորընծային Ս. Սեդանի ետևում կզգեստավորեին, խարտավիլակ քահանան մկրտության ավազանի վրայից բուրվառակրի և մոմակալների ողեկությամբ վերաբերում է ս. մյուռոնը:

Հանդիսավոր հնչում է «Առաքելոյ աղանոյ» շարականը, և սրբազան հայրը ս. մյուռոնով օծում է նորընծայի ճակատը՝ «Օրհնեցի, օծցի և արքեցի ճակատ Ս. Համազասպ քահանայի այս նշանաւ...» ասելով, որից հետո օծում է ձեռքերը: Եվ այսպես ս. մյուռոնի օծմամբ Աղասի սարկավագ Բարուշյանը դառնում է Ս. Համազասպ քահանա: Այնուհետև սրբազանը նորընծային է հանձնում կենարար մարմնով և արյամբ ս. սկիհը, որից հետո Ս. Համազասպ քահանան երիցս ժողովրդին է տալիս իր առաջին օրհնությունը և «Խաղաղութիւն ամենեցունը»:

«Պահպանիչ»-ով ավարտվում է ձեռնադրության և օծման կարգը:

Ձեռնադրությունից հետո սրբազան հայրը խոսում է շատ բովանդակայից մի խրատական, կոչ անելով նորընծա քահանային հավատարիմ լինել սրբազան կոչմանը ի պայծառություն ս. Եկեղեցու և հայ ժողովրդի: Մաղթում նրան անասան հավատք, ուժ և կարողություն:

Պատարագի վերջում ներկա հավատացյալները աջահամբույրով և բարի մաղթանքներով շնորհավորեցին նորաօծ քահանային:

Պատարագից հետո Ս. Համազասպ քահանան մեկնեց Մայր Աթոռ, ուր պետք է անցկացնի ավանդական քառասնօրյա շրջանը:

Տ. ՀԱՄԱԶԱՍՊ ԲԱԶԱՆԱ ԲԱԲՈՒԶՅԱՆ



Ծնվել է 1957 թ. սեպտեմբերի 6-ին Ախուրյանի շրջանի Սարիար գյուղում, բանվորի ընտանիքում (ավազանի անունն է Աղասի):

1958 թվականից ընտանիքով ապրում են Էջմիածնի Զվարթնոց թաղամասում:

Միջնակարգ դպրոցն ավարտելով ընդունվում է հոգևոր ճեմարան: 1975 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հունիկ արքեպս. Սանթրույանի, ձեռնադրվում է սարկավագ: Ապա, վերջին լսարանը կիսատ թողնելով, մեկնում է գինվորական ծառայության:

1976—1978 թթ. ծառայել է Սովետական բանակում:

1979—1984 թթ. սովորել է Կազան քաղաքի Վ. Ի. Լենինի անվան համալսարանի բանասիրական ֆակուլտետում:

1985 թ. հունվարից նորից վերադառնում է Եկեղեցի և ծառայության անցնում Երեվանի Ս. Սարգիս եկեղեցում որպես ամենօրյա սարկավագ:

1986—1987 թթ. սովորում է հոգևոր ճեմարանի վերջին լսարանում և ավարտում այն:

1987 թ. հուլիսի 12-ին, ձեռամբ Ս. Գա-

րեզին եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվում է քահանա Երևանի Ս. Սարգիս եկեղեցում:

Տ. Համազասպ քահանա Բաբուջյանը, ձեռնադրության քառասնորյա շրջանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում անցկացնելուց հետո, ծառայության պետք է անցնի Հրազդանի Սուրբ Աստվածածին եկեղեցում:

*
* *

Հուլիսի 19-ին, կիրակի օրը, Երևանի առաջնորդանիստ եկեղեցում իր անդրանիկ պատարագը մատուցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան՝ նորընծա Տ. Սեբովքե արքեպիսկոպոսը: Հոգեշնորհ հայրը քարոզեց՝ «Տեր ամենակալ արժանի

արա և զիս ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ և մերձեցնամ ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց» բնաբանով (Խորհրդատետր, 1880 թ., Վարդապատ, «Կանոն զգեստաւորելոյ պատարագիչ քահանայի»):

*
* *

Հուլիսի 26-ին, կիրակի օրը, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում պատարագեց Բուենո Արես քաղաքի (Արգենտինա) Ս. Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Մատթեոս ավագ քահանա Գույումջյանը և քարոզեց՝ «Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրան լսեցեք» (Մատթեոս ԺԷ 5) բնաբանով:

ԵԳԻՊՏՈՍ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՅՑԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Սույն թվականի հունիսին եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոն իրեն ընկերակցող խմբով այցելեց Մերձավոր Արևելքի մի շարք երկրներ, ի մեջ այլոց՝ նաև Եգիպտոս:

Հունիսի 4-ին Նորին Ամենապատվություն Օմուդա Գ. Դպտիների պատրիարքը ԵՂԻՍ-ի ընդհանուր քարտուղարի պատվին պաշտոնական ճաշկերույթ տվեց, որին հրավիրված էր ի թիվս բարձրաստիճան պետական և եկեղեցական գործիչների նաև Եգիպտոսի Հայոց առաջնորդ, գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչիյանը:

Հունիսի 6-ին, առավոտյան ժամը 11-ին, դոկտ. Էմիլիո Կաստրոն իր շքախմբով այցելեց Հայոց ազգային առաջնորդարան, ուր հարգո հյուրին դիմավորեցին գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոսը, Կահիրեի թեմական ժողովի անդամներ և արժանապատիվ Տ. Նարեկ խաչակիր քահանա Ֆրունջյանը:

Գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչիյանը իր բարիգալստյան խոսքում ասաց. «Մերձավոր Արևելքի կարգ մը երկրներ այցելելու առիթով սուրբ գրական երկիրներու ժողովուրդներեն, անոնց դավանանքներեն, համայնքներեն զանազան

տպավորություններ կրեցիք: Այսօր երջանիկ ենք և հանուն Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Վազգեն Ա Հայրապետի հոգևոր ուրախությամբ Ձեզ կողջունենք Եգիպտոսի և Հյուսիսային Աֆրիկեի Հայոց հոգևոր այս կեդրոնին մեջ: Հայերը շատ հին ժամանակներեն կապված են ս. գրական երկիր, օրհնյալ Եգիպտոսին: Այս երկրին մեջ Աստված խոսեցավ Մովսեսի և ս. կույս Մարիամն ու Հիսուս մանուկ այստեղ ապաստանեցան: Մեր եկեղեցվո հայրերը լուսավորության կեդրոն Աղեքսանդրիո դպրոցին աշակերտելու համար ուսանողներ դրկեցին: Անոնք թարգմանեցին նշանավոր Աթանաս, Որոգինես և Կյուրեղ Աղեքսանդրացի հայրապետներու գործերը, որոնք ընտիր դասական գործեր են մատենագրության:

Ուրիշ հոգևորականներ վերին Եգիպտոսի և այլ վայրերու վանքերում մեջ աղոթքով անցուցին իրենց կյանքը: Տասներորդ դարեն ասդին ավելի սերտ են երկու երկիրներում հարաբերությունները գրավոր պատմությամբ:

Իսկ ծանոթ է Ձեզի 20-րդ դարու սկիզբը հայ ժողովուրդի վրա գործադրված եղեռնը:

Եկեղեցվո համաշխարհային Էկումենա-

կան խորհրդի նպատակն է նաև և բնականաբար աշխարհիս վրա հաստատված տեսնել արդարությունն ու խնդիրությունը: Արդ՝ հայ ժողովուրդին դեմ գործադրված անմարդկային արարքներուն համար արդարություն չէ եղած ցարդ: Ուստի մեր խնդրանքն է, որ Եկեղեցաց Համաշխարհային Խորհրդի հեղինակավոր բեմին, երբ առիթը ներկայանա, հայ ժողովրդի արդար դատին հանդեպ համակրությամբ վերաբերվիք:

Այստեղ եմ մեր գաղութային ժողովի անդամները, որոնց հետ հաճույքով կգործակցիմք ի բարօրություն մեր համայնքներու: Բոլորս ալ Ձեզի կմաղթենք Աստվածահաճ Ձեր գործերուն հաջողություն: Ուրախ ենք, որ դուք՝ սիրելի դոկտ. Կնաստրո և պրոֆ. Իոն Պրիս, գտնված եք մեր հայրենիքին մեջ և այցելած եք Ս. Էջմիածին և պատմական մեր վանքերը, իբրև սիրելի հյուրերը Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին»:

Ապա խոսք առավ դոկտ. Կաստրո.

«Ուրախ ենք, որ գտնվում եմք Եգիպտոսի Հայ Եկեղեցու կենտրոնում: Իմ հարաբերությունները հայերի հետ շատ ետ եմ գնում, մինչև մանկությանս տարիները, երբ հայերը գալիս էին հաստատվելու Ուրուգվայ և Արգենտինա:

Ինչ վերաբերում է Ս. Էջմիածնին, զգացումներով շատ մոտ եմ զգում ինձ և խոր համակրանք և հարգանք ունեմ Ամենայն Հայոց Վազգեն կաթողիկոսի հանդեպ: Ուրախ եմ, որ պրոֆ. Իոն Պրիսն էլ, ես էլ գտնվել ենք այնտեղ, իբրև Վեհափառի հյուրերը:

Եվրոպայի մեջ հրատարակվեց Հայկական Եղեռնի մասին փաստական տվյալներով հատոր: Այդ դժբախտ պատահարի մասին մենք գիտեինք արդեն: Հավաստիացնում եմ Ձեզ, որ թե՛ Եվրոպայի խորհրդարանում և թե՛ ԵՀԽ-ում մենք այդ մասին հայերին նպաստավոր կարծիք պիտի հայտնենք արդարության համար, երբ առիթը ներկայանա»:

Հյուրասիրությունից հետո հյուրերը առաջնորդվեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Ցույց տրվեցին նաև Եղեռնի հիսնամյակի առիթով կանգնեցված մատուռը,

խորանն ու խաչքարը, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից նվիրել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

* *

Մայիսի 22-ին Կահիրեի Ազգային առաջնորդարան այցելեց Կաթողիկ Եկեղեցու և Արևելյան Եկեղեցիների միջև միության Էկումենիկ շարժման Պրո-Օրիենթե կազմակերպության ընդհանուր քարտուղար դոկտ. Ալֆրեդ Օթիրման, ընկերակցությամբ Կահիրեում Ավստրիական դեսպանատան մշակութային կցորդի:

Հյուրերին ընդունեց Եգիպտոսի հայոց առաջնորդ գերազնորի Տ. Զավեն արքեպս. Զինչիճյանը:

Բարեկամական մթնոլորտում սիրալիր զրույց տեղի ունեցավ քույր Եկեղեցիների փոխհարաբերությունների, պատմական անցյալի, ներկայի և ապագայի մասին՝ առանցք ունենալով քույր Եկեղեցիների մերձեցումը Քրիստոսով:

* *

Մայիսի 24-ին, կիրակի օրը, Կահիրեի Հույն Ուղղափառ պատրիարքարանի պետ-նանիստ Ս. Նիկողայոս եկեղեցում տեղի ունեցավ Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենապատվություն Դեմետրիոս և Ալեքսանդրիայի ու համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք Նորին Ամենապատվություն Պարթենիոս Պատրիարքների համատեղ ս. պատարագը:

Քրիստոնյա քույր համայնքների պետերի և պետական ու պաշտոնական անձանց հետ ս. պատարագի սրբազան արարողությանը հրավիրված էր նաև Եգիպտոսի հայոց առաջնորդ գերազնորի Տ. Զավեն արքեպս. Զինչիճյանը:

Արարողություններից հետո գերազնորի Տ. Զավեն արքեպս. Զինչիճյանը Պատրիարքներին քարեմաղթություններ ներկայացրեց հանուն Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի:

ՖՐԱՆՍԻԱ—ԼԻՈՆ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՆՏ ԷԹԻԵՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ
 ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՎՈ ՕԾԾԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ
 ԱՌԹՎ

Մայիսի 24-ին Սենթ Էթիենի գաղութը տոնեց իր եկեղեցիին օծման երրորդ տարեդարձը։ Այս առթիվ տեղվույս հոգևոր հովիվ հոգեշնորհ Ս. Զատիկ արեղա Ավետիքյանին և եկեղեցվո վարչության հրավերով այստեղ ժամանած էր Լիոնի և շրջակայից Հայրապետական պատվիրակի փոխանորդ գերաշնորհ Ս. Նորվան եպս. Զաքարյան։ Սուրբ պատարագին ընթացքին, «Զի ողորմած»-են առաջ պատարագիչ սրբազան հայրը ուրար կրելու իրավունք շնորհեց եկեղեցվույս երկարամյա սպասարկող տիար Մանվել Հելվաճյանին։

Սրբազան հայրը իր քարոզին մեջ հատկապես շեշտը դրավ վարչական և կազմակերպչական աշխատանքի վրա, Սենթ Էթիենի և Սեն Ծամոնի հավատացյալներեն խնդրելով, որ մոտեն հետևին իրենց եկեղեցիին կյանքին, որպեսզի «պարզ հանդիսատեսներ չլլան», ամեն ինչ թողնելով հոգևոր հովիվին և վարչության ուսերուն վրա ու ավելցուց. «Եկեղեցվո շենքը շինելը բավական չէ, պետք է, որ յուրաքանչյուրդ դառնա այս եկեղեցիին համար կենդանի քար մը»։

Պատարագին երգեցողությունը կատարեց Վիեն քաղաքի մորակազմ դպրաց դասը։ Պատարագին ավարտին եկեղեցվո սրահին մեջ, ի պատիվ սրբազան հոր, տեղի ունեցավ ընդունելություն։

ՈՒՐԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Հոյակապ ավանդություն դարձած է արդեն Պոլսո Ս. Խաչ դարեվանքին շրջանավարտներուն հավաքը Հոգեգալստի տոնի օրը։ Այս տարի դարեվանքիները իրենց հանդիպումին համար ընտրած էին Լիոն քաղաքը։ Շրջանիս բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Ս. Նորվան եպս. Զաքարյանի հրամանով եկեղեցական վարչությունը անոնց տրամադրած էր Ս. Հակոբ Մայր եկեղեցվո հանդիսությանց մեծ դահլիճը, ուր երեք օր իրարու հաջորդեցին աշխատանքային միստերը և խրախուսանքի պահերը։

Հունիսի 7-ին, կիրակի օր, Հոգեգալստյան տոնին առթիվ, ներկա գտնվեցան Եվրոպայի չորս անկյուններեն եկած մոտ հարյուր հիսուն դարեվանքիներ (Ֆրանսա, Մեծ Բրիտանիա, Զվիցերիա և Գերմանիո ֆեդերատիվ Հանրապետություն)։ Ս. Պատարագին ընթացքին սրբազան հայրը դպրության աստիճան և ուրար կրելու իրավունք տվավ երեք մախկին պոլսեցիներու, որոնք տարիներե ի վեր կծառայեն Լիոնի և Բոն Տը Ծերյուիի եկեղեցիներուն մեջ։

Պատարագիչն էր Պոլսո Պյուլյութներե թաղամասին մախկին հոգևոր հովիվ, այժմ Լիոնի Ս. Հակոբ Մայր եկեղեցվո ծրխատեր քահանա արժանապատիվ Ս. Իսահակ խաչակիր քահանա Հեքիմյան։ Օրվա պատգամը տվավ Մարսելիո Մայր եկեղեցվո հովիվ հոգեշնորհ Ս. Գարեգին վրդ. Պեքճյանը։ Ս. խորանին կապասարկին դարեվանքին սաներեն խումբ մը սարկավագներ և ուրարակիրներ։

Ս. պատարագեն վերջ մասնավոր հոգեհանգստյան պաշտոն կատարվեցավ դպրեվանքին հիմնադիր և Կ. Պոլսո արժանընտիր պատրիարք հոգեվույս Ս. Գարեգին սրբ. արքեպիսկոպոս Խաչատուրյանին հոգվույն համար։

• •

Այս տարվան հունիսեն ի վեր ֆրանսերեն լեզվով լույս կտեսնեն Լիոնի հայոց եպիսկոպոսարանի «Եկեղեցի» լրատուն, որուն նպատակն է մեր եկեղեցվո համար լրատվության աղբյուր մը ըլլալ ֆրանսական կրոնական և հանրային, ինչպես նաև Ֆրանսայի մեջ լույս տեսնող լատինատառ հայկական թերթերուն համար։ Այս թերթիկին մեջ գլխավորաբար տեղ կգտնեն Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռի դիվանատան կողմեն հղված կոմյակներն ու հաղորդագրությունները, շրջաբերականներ, հայտարարություններ, ինչպես նաև լուրեր մեր բոլոր թեմերեն և հատկապես Լիոնի շրջանեն։ Այս թերթիկը արդեն մեծ հետաքրքրություն ստեղծած է թե՛ էկյումենիկ ջարժման և թե՛ թերթերուն խմբագրություն-

ներում մոտ, որոնք շատ անգամ անտեղյակ կմնան մեր եկեղեցական կյանքեն:

ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՁԱՅՆԱՍՓՅՈՒՐ

Ապրիլի 1-ին Լիոնի բոլոր եկեղեցիները տոնեցին շրջանիս մեջ գործող Ռադիո Ֆուրվիեր համաքրիստոնեական ձայնասիւյունին հիմնադրության հիմնգերրոդ տարեդարձը: Այս ձայնասիւյունին հիմնադիրներն են՝ Կաթողիկե, Հույն Օրթոդոքս, Բողոքական (Ավետարանական և Լատինական), Անգլիկան և Հայ Առաքելական Եկեղեցիները: Կայանը ունի վարչական, պատասխանատու ղեկավարներու հանձնախումբ

մը, որուն կմասնակցի գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյան:

Մեր եկեղեցին զանազան հաղորդումներ կսփռե, կրոնական և մշակութային հայտագրեր, ինչպես նաև լուրեր Մայր Աթոռէն և Մայր Հայրենիքէն: Սուրբ Ծնունդին առթիվ հայերեն և ֆրանսերեն լեզվով կկարդացվի Վեհափառ Հայրապետին ուղերձը:

Ձայնասիւյունը 1986-են ի վեր իր ունկընդրության սահմանները ընդլայնած է մինչև Ռոն Ալփ շրջանին հարավային քաղաքները՝ Վիենն, Գրընոպլ, Սենթ Էթիեն և Վալանս:

ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ





ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Հետևողությամբ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ

Եկեղեցին Հայկական հոգու խորանն է պայծառ,
Որի առջև ծնրադիր աղոթում եմ անդադար
Նախնիներին, պապերին պերճ լեզվով իմ քաղցրաբառ,
Որոնք սիրով ջամբեցին իրենց հոգու կայծը վառ:

Եկեղեցին Հայկական սրտիս բուրվառն է ոսկի,
Որի բոցը երկնառաք իմ պապերը վառեցին
Իրենց շնչով բուրավետ՝ քույրանքով կնդրուկի,
Աղոթանվեր միմունջով մտքին աչքերը բացին:


Եկեղեցին Հայկական ճակտիս ճշանն է խաչի,
Որի լույսով Հայրը մեր ջահը վառեց հավատքի
Ու երկնաձիր պարգևով, հոգիներին անհաշիվ
Բերեց հույսը փրկության, անանցավոր վեճ կյանքի:

Եկեղեցին Հայկական կաթսան է Սուրբ Մյուռոնի,
Որի վրա Աստված Իր ձեռքը դրեց հովանի,
Եվ խաչանիշ դրոշմամբ ճակատն օծեց մեր ազգի՝
Ջանով երկնից օրհնառաք կոչեց ժառանգ երկնքի:

Եկեղեցին Հայկական օրրանն է սուրբ մայրության,
Որ շեփորեց միություն՝ բխող ծոցից խանդակաթ
Եվ մոր մման անխարդախ՝ անդավաճան իր անվան,
Դարե ի դար անվարան վառեց Հույս, Սեր ու Հավատ:

ԱՐԱՄ ԱԲԵՂԱ





ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը բազմադարյան իր գոյությամբ միշտ եղել է հայ մշակույթի զարգացման դարբնոց՝ գրերի գյուտից և Աստվածաշնչի թարգմանությունից մինչև մեր օրերը:

Հայ հոգևոր մշակույթի պաշտամունքն ունեցող Ամենայն Հայոց Հայրապետը վերջին տարիներին հախաձեռնեց ազգօգուտ մի գործ՝ հրատարակումովը հայ եկեղեցական արվեստին նվիրված պատկերազարդ հատորների:

Առաջին գեղարվեստական հրատարակությունը եղավ «Հայկական եկեղեցիներ» հատորը:

Գիրքը լույս տեսավ 1970 թվականին՝ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ծախսով: Գրքի տեքստի հեղինակն է ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը: Գրքի գեղարվեստական ձևավորումը կատարել է ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը՝ լավագույնս համադրելով Մովսես Ծլուկյանի, Թորոս Խորենյանի, Վաչե Խաչատրյանի, Հակոբ Հեքեքյանի և Անդրանիկ Քոչարի կողմից իրականացված լուսանկարները:

Ելնելով գրքի ընդգրկումից, եռալեզու Հառաջաբանում (հայերեն, ռուսերեն, անգլերեն) Բ. Արզումանյանը կատարել է հայ ճարտարապետական մտքի հետևյալ պարբերացումը. Ա. Նախաքրիստոնեական շրջան, Բ. Քրիստոնեական շրջան, որն իր հերթին բաժանվում է՝ ա. 4—7-րդ դարեր, բ. 9—11-րդ դարեր և 12—14-րդ դարեր: Վերոհիշյալ գլխաբաժանումներում հեղինակը հակիրճ, բայց համապարփակ ձևով

խոսում է յուրաքանչյուր պարբերաշրջանի առանձնահատկությունների, ճարտարապետական մտքի ուղղվածության մասին: Առանձնացվում են հատկապես Չվարթնոցի տաճարը և Անի քաղաքը իբրև հայ ճարտարապետական մտքի անկյունաքար՝ ձայնի թոփաթեղներ: Պատահական չէր գեղարվեստական ալբոմների շարքն սկսել հայկական եկեղեցիներով, քանի որ «Հայաստանի հնագույն մշակույթի մեջ հատուկ տեղ է գրավում ճարտարապետությունը, որ մարմնավորվել են հայ ժողովրդի երեվակայությունը, մտքի թոփաթն ու կառուցողական արվեստը»:

Սև-սպիտակ հոյակապ վերատպություններով այստեղ են միջնադարյան Հայաստանի բոլոր նշանավոր տաճարներն ու վանական համալիրները մինչև 19-րդ դար, ընդհանուր համայնապատկերով և ակնառու, կարևոր մանրամասնություններով: Գիրքը թերթեյիս և կարդալով առաջաբանն ու բժախնդի ծանոթագրությունները, ընթերցողը կարող է ունենալ ամբողջական պատկերացում ճարտարապետական մտքի ձևավորման և զարգացման մասին:

1973 թվականին, նորից «Հրամանա Ս. Տ. Վազգէն Ա Վեհափառ և Սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց» և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության արդյամբ լույս տեսավ «Հայկական խաչքարեր» ալբոմը: Տեքստի հեղինակն է Լևոն Ագարյանը: Գեղարվեստական խմբագիր Գրիգոր Խանջյանը լավագույնս է առադրել Մանուկ Ալեմյանի հրաշալի լուսանկարները: Հրատարակությունը իրականացրել է «Էրեբունի» հրատարակչությունը:

Ինչպես հայտնի է, խաչքարային արվեստը բուռն ծաղկում է ապրում 9—10-րդ դարերից սկսյալ, բազմամշակալ բովանդակությամբ. ուսումնական հաղթանակների, պատմական կարևոր իրադարձության, շինարարական աշխատանքների ավարտի, վանական մկրտավորությունների հավերժացում և մանավանդ տապանաքարեր:

Այս 1980 թվականին եկավ «Լուսամատեանը»: Հայ Եկեղեցու մարմնավոր կառույցից հետո՝ սնուցիչ բանավոր կառույցը՝ հավատի խոսքը: «Լուսամատեան» այս հատորս յղացումն է Ամենայն Հայոց Հայրապետին՝ Ս. Ս. Վազգէն Ա. կաթողիկոսին, որ ընտրեց բնաբանները, իր ներշնչումով առաջնորդեց արուեստագետը և իր նրբագագացութեամբ ոգևորեց հեղինակը: Այսպես համեստորեն է նշվել Վեհափառ Հայրապետի «յղացումը»: Ինչպես իր շատ գեղեցիկ առաջաբանում գրում է Թահեար Քեյսա. Ամենայն. «Ներկա հատորը գինն է Հայ Մշակույթին և Հայ Արուեստին հանդէպ անսահման այն խանդավառութեան, զոր վաղ պատանութենէն մինչև այսօր, Նորին Ս. Օծութիւն Ս. Ս. Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը ունեցած է, բանի և գործով:

Նման հին իշխաններուն և բարձրաստիճան եկեղեցականներուն, որոնք Ռուսիայի կամ Պիծակի մօտն ակարիչներու ձեռքով ծաղկել կու տային իրենց Աստուածաշունչը կամ Մաշտոցը, գեղեցիկ գիրքին նոյն սերն է որ, հայկական ասանդութիւն դարձած, մղեց Նորին Սրբութիւնը «Լուսամատեան»-ի գաղափարին, որ է ներկայացնել Աստուածաշունչը թարմ վրձնի մը գոյներով և բանաստեղծական շունչի մը ջերմ հաղորդականութեամբ:

Ավելացնենք, որ Վեհափառ Հայրապետը աշալուրջ կերպով հետևեց, որ ակարիչ Ալբերտ Յարալյանի մանրանկարները լինեն խորապես հայկական, և Եղիվարդի (Եղիշե Պատրիարք Տերտերյանի) խոսքը հասանելի՝ հոգևոր խոսքի ծարավն ունեցող իր հոտին: Արդյունքը եղավ մի սքանչելի հատոր, իսկապես լույսի մատյան՝ Եղիվարդի հարուստ և պատկերավոր արևմտահայերեն պատումով և Յարալյանի գեղեցիկ արվեստով: Հավատացյալ ժողովուրդը ընդունեց և ընթերցանեց հոգևոր հացը՝ օրհնելով հղացքը և իրագործումը:

1981 թվականին, այս անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն էր արտացոլվում «Էջմիածին» արժույթ: Ընդհանուր պատկերացում տալու նպատակ ունեցող այս հատորը ուրիշ իմաստով ամփոփում էր Մայրավանքի պատմությունն ու այսօրը, ոչ միայն Մայր

տաճարը իբրև ճարտարապետություն, արվեստի գանձեր՝ իբրև մշակութային ժառանգություն, այլև Մայր Աթոռը իբրև կենդանի գոյություն՝ արարողական նկարներ, հավատացյալների բազմություն, հոգևոր ճեմարան:

Այբովը բովանդակում է սրբանկարներ, հին ձեռագրերի մանրանկարներ, ասեղնագործական, պղնձյա և արծաթյա աշխատանքների, եկեղեցական սպասքի և վարագույրների, հայկական գորգերի և գեղարվեստական նկարների նմուշներ: Բայց այս այբովը եկավ հաստատելու մի բան, որ Մայր Աթոռում պահվող հայ մշակույթի գանձերը համեմատաբար ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է ավելի մեծ ծավալի աշխատանք:

Եվ Վեհափառ Հայրապետը ձեռնամուխ եղավ նաև այդ աշխատանքին երկու ուղղությամբ. նախ ապահովել այդ գանձերի թանգարանային ցուցադրությունը և ապա դրանք համատեղել մի մեծադիր այբովի մեջ:

Այսպիսով մարմին առավ Ալեք և Մարի Մանուկյան Գանձատունը՝ իշխանական մկրտաբերումով ազգային բարերար տիար Ալեք Մանուկյանի: Այս եզակի շինությունը կարող է զարդարել իր պատմությամբ հպարտ յուրաքանչյուր ժողովրդի ներկան:


Սակայն Մայր Աթոռի թանգարանում ցուցադրվող գանձերը սպասում էին իրենց հրապարակային ներկայացման: Եվ մորից Վեհափառ Հայրապետի հղացքով ծնունդ առավ Մայր Աթոռի գեղարվեստական հրատարակությունների պատկեր՝ «Էջմիածնի Գանձերը»:

Միայն երկու վկայություն այս բացառիկ հրատարակության մասին. Վեհափառ Հայրապետին ուղղված նամակներից.

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԱՐՍԵՍԱՆ


Վեհափառ Տեր,

Մեծապես շնորհակալ եմ Էջմիածնի Գանձերու փառավոր հատորին համար, որ երկու օր առաջ ստացա, ամենաշքեղ հրատարակությունն մը, արժանի իր պարունակության: Գունավոր նկարները շատ հաջող են և, դատելով ինձի ծանոթ առարկաներեն, շատ հավատարիմ: Զանազան բաժիններու համար գրվածները ամփոփ տեղեկություններ տալով և չսահմանափակվելով արտատպված օրինակներուն՝ հորիզոնը կը նդայնեն: Այս հրատարակությունը կարևոր նպաստ մը կբերե, մասնավորաբար մոտակա դարերու հայ արվեստի ուսումնասիրության համար: Ամեն կերպով հաջող




Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

СВЯТОЙ ЭЧМИАДЗИН
SAINT ETCHMIADZINE







UNURS

• APAPAT | ARARAT •

հրատարակություն մը, որ վստահաբար պիտի արժանանա բարձր գնահատանքի, ինչպես գնահատվեցան նախորդները:

ԺԱՆ ՊԻԵՌ ՄԱՀԵ

Այս տարի, որպես Ս. Ծնունդի անակրկալ նվեր, Գալուստ Կուլպենկյանի հիմնարկության միջոցով ստացա Ջեր նախաձեռնությանը կազմած Էջմիածնի Գանձերի հրաշագարդ մատյանը: Անհագորդ հիացմունքով մի քանի անգամ ծայրից ծայր նայեցի այս շքեղ ժողովածուին, որը ոչ միայն հայերի արվեստագիտական հանճարի մի լիառատ հուշարձան է, այլև ընդգծում է Էջմիածնի Ս. Աթոռի կատարած գերիշխող դերը հայ ազգի պատմական ու մշակութային զարգացման մեջ:

...Թվում է ինձ, թե ճշմարտությունը չի ուզում, որ իր մասին վիճենք, այլ ուզում է, որ իրեն նայենք իբրև մի փայլուն աստղի, որպեսզի ինքը՝ Էսկի և Կյանքի աղբյուրը առաջնորդի մեզ դեպի հասկացողությունը: Ահա ինչ զգացի Էջմիածնի Գանձերի այդ սքանչելի մատյանին նայելիս:

«Էջմիածնի Գանձերը» նախորդ հրատարակություններից տարբերվում է երեք կարևոր հատկանիշներով. ա. գիտականորեն մտածված և մասնագիտորեն է պատրաստված, բ. առավել համապարփակ է, թերևս բոլոր նախորդ հրատարակությունների բոլոր լավագույն տարրերը ի մի բերող, գ. ունի ամենածավալուն ժամանակագրական ընդգրկում. Մայր տաճարի հիմքում գտնվող հեթանոսական ատրուշանի մնացորդից մինչև 1983 թ. ստեղծված Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» գորելները:

Ա. Գիտական մակարդակն ապահովող առաջին վկայությունը բյուզանդական և հայկական արվեստների լավագույն մասնագետի համաշխարհային ճանաչում ունեցող դոկտ. Սիրարիի Տեր-Ներսեսյանի ներածականն է, ուր համբավավոր գիտնականը հակիրճ, բայց սպառնալից կերպով բնութագրում է «Գանձերը»՝ հաստատելով, որ «Այբովը հիմք պիտի հանդիսանա հայկական արվեստի ամեն մի բնագավառում խոր ուսումնասիրություններ կատարելու, ինչպես նաև այլ երկրների արվեստների հետ բաղդատական ուսումնասիրությունների համար, այս կերպ հնարավոր դարձնելով ազգային հատկանիշների դրսևորումը»:

Ապա հետևում են եռալեզու թեմատիկ բաժանումները. Ճարտարապետություն՝ Վարազդատ Հարությունյան, Խաչքարեր՝

Սուրեն Սաղումյան, Դրամների հավաքածու՝ Խաչիկ Մուշեղյան, Մետաղյա գեղարվեստական իրեր՝ Արմիկ Սամվելյան, Փայտի գեղարվեստական փորագրություն, Գորգագործություն, Դաշարվեստ, Գեղանկարչություն՝ Մանյա Ղազարյան, Ասեղնագործություն՝ Սերիկ Դավթյան, Մանրանկարչություն՝ Վիգեն Ղազարյան. բոլոր հեղինակներն էլ իրենց ասպարեզի լավագույն մասնագետները, այլ խոսքով Հայաստանի այդ ոլորտի գիտական մտքի ընտրանին: Հեղինակները ոչ միայն ներկայացնում են ալբոմում ընդգրկված նմուշները, այլև կատարում են ընդհանրացումներ, որոնք ամբողջական պատկերացում են տալիս հայ գեղարվեստական մտքի զարգացման մասին:

Բ. Ինչպես ասվեց, այս ալբոմը ամենամեծ ընդգրկումն ունի. ճարտարապետություն, կիրառական արվեստ՝ իր բազում ճյուղերով, գեղանկարչություն, քանդակագործություն: Այդ բոլորը այսպիսի գեղեցիկ ձևավորումով ու համատեղումով մատուցելը հայ ժողովրդին և համաշխարհային արվեստասեր հասարակայնությանը՝ մեծ ծառայություն է: «Ներկա հատորի պարագային ոչ միայն գրքի նյութը Նորին Սրբության նախաձեռնությունն է, այլև նրանում մարմնավորված գաղափարը, այն է՝ ստեղծել մի Գանձատուն», ներածականում գրում է դոկտ. Սիրարիի Տեր-Ներսեսյանը: Հիրավի այս գիրքը ճոխ ու հարուստ մի գանձատուն է, ուր հավաքված ու ցուցադրված է հայ ստեղծագործական մտքի դարավոր ժառանգությունը, որի պաշտամունքով է տոգորված Վեհափառ Հայրապետի սիրտը:

Վեհափառ Հայրապետի՝ գեղարվեստական գրքի հրատարակման հղացումների մեջ յուրահատկորեն բացառիկ է «Արարատ» ալբոմը: Եթե նախորդ հրատարակությունները սնուցում էին հայ մարդու հրապարտությունը իր ժողովրդի ստեղծած գեղեցիկի նկատմամբ, ապա այստեղ հայ ժողովրդի դարավոր գոյության խորհրդանիշ Արարատն է օրվա տարբեր պահերին և տարբեր դիրքերից առնված քառասուն ճակարներով, որոնք մեծ վարպետությանը իրագործել է Մայր Աթոռի լուսանկարիչ Սարգիս Համբարձումյանը: «Արարատ լեռը հայ ժողովրդի ազգային գիտակցության ու երազանքների սրբազան խորհրդանիշն է, որ երգել ու փառաբանել են բազմաթիվ հայ բանաստեղծներ հնագույն դարերից մինչև մեր օրերը»: Հայ մարդու համար Արարատը ավելի քան լեռ է, Սրբազան Ավանդ՝ սերնդից սերունդ եկող»:

տի ծեր կատարին դար է եկել վայրկյանի պես ու անցել», գրել է Ավետիք Իսահակյանը:

Արարատ լեռը մտասնեռում է դարձել յուրաքանչյուր հայ երեխայի համար, մայրական կաթի հետ՝ մայրական կաթի չափ հարազատ: Այս մտասնեռումն է անշուշտ, որ Նորին Սրբության հոգու մեջ արձագանքվել է տարիներով՝ վերածվելու համար բանաստեղծական բյուրեղացման.

Սուրբ Էջմիածնի լույս բարձունքներից
Հայրորդներին քերում եմ այսօր

Սուրբ լեռն Արարատ,

Մեր ազգի հոգու պատկեր, երազանք՝
Քառասուն դեմքով, քառասուն գույնով,
քառասուն կանչով:

Եվ թող քառասուն Արարատներն այս
խոսեն, բարբառեն քառասուն լեզվով
Հեռավոր պանդոխտ մեր զավակներին
Եվ դառնան ամենքի, ամենքի համար
Հրավեր Հայրենյաց,

Կոչ արդարության

Եվ ստուգություն գալիք հաղթությանց:

Վեհափառ Հայրապետի հոգու այս բյուրեղացումին զուգակցվել են Մովսես Խորենացու, Գրիգոր վրդ. Օշականցու (ԺԸ դար), Հայր Ալիշանի, Րաֆֆու, Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի, Վահան Տերյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, Վահան Թեքեյանի, Պարույր Սևակի, Հովհաննես Ծիրազի, Սարմենի, Վահագն Դավթյանի, Սիլվա Կապուտիկյանի, Գևորգ Էմինի, Մարո

Մարգարյանի, Արշալույս Մարգարյանի, Ֆրիդրիխ Պարրոտի, Պուշկինի, Վալերի Բրյուսովի, Եվգենի Եվտուշենկոյի, Վերա Զվյագինցևայի, Ռասուլ Համզատովի, Սիմոն Զիքովանու, Միգուս Ալեքսանդրոպուլոսի և Դեսանկա Մաքսիմովիչի ասույթները սրբազան լեռան մասին, որոնք գեղեցիկ դափնեպսակ են կազմում Արարատի հավերժապես ձյունասպիտակ գագաթին:

Յուրաքանչյուր հայի հոգի յուրովի է թըրթրոում այս ալբոմը թերթելիս, անքին հրապարտության, նվիրականի հետ հաղորդակցման թրթիռ է դա, որ անպայմանորեն վերածվում է հավատի՝ այսօրվա նկատմամբ և հույսի՝ «գալի յաղթութեանց» ստուգության նկատմամբ: Վեհափառ Հայրապետի հրամանով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իրագործած այս բոլոր հրատարակությունները դառնում են «Հրավեր Հայրենյաց» տարագիր հայ սերունդների համար՝ ճանաչելու իրենց ինքնությունը, վերադառնալու իրենց արմատներին և վերագտնելու օտար ափերում և օտար մշակույթների մթնոլորտում ոտնահարված իրենց ազգային արժանապատվությունը: Ահա թե ինչու այս գրքերը ավելին են, քան նկարագրող գեղեցիկ ալբոմները: Նրանք Հայրենյաց Կոչ են մեզ և հետագա բոլոր սերունդների համար:

Նորանոր պայծառ հղացքներ և քեղմնավոր իրագործումներ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ



A long, narrow decorative border featuring a repeating geometric pattern of interlocking circles and triangles, enclosed within multiple concentric rectangular frames. The pattern consists of a series of interlocking circles and triangles, creating a complex, tessellated design. The entire border is framed by several concentric rectangular lines.

խան ազգային հողի: Մնում էր անորոշ հույսի, անվերջ երազանքի ձգվող ճանապարհի, որ առայժմ անհայտություն էր տանում: Այդ անհայտության ճանապարհորդն է դառնում նաև պատանի Եղիշեն Սողոմոնյանը՝ ապագա Չարենցը:

Վաղ է սկսել նա իր բանաստեղծական փորձերը. ընդամենը տասնհինգ տարեկան էր, երբ «Պատանի» ամսանախում լույս է տեսնում նրա առաջին ոտանավորը: Բայց այստեղ իսկ արդեն ակնհայտ են չարենցյան տարերքի հիմնական որոշիչները՝ անձկության թախիծն ու հեռուների անզուսպ երազանքը, մեհակության մորմոքն ու բուռն կրքերի կարոտը: Արթնացող հոգու այս լարումները խորանում ու ծավալվում են «Երեք երգ տխրադալով անջկան», «Կապուտաշյա հայրենիք», «Ծիածան» քնարական շարքերում: Թափառական տենչը հաստատուն հեմարան է որոնում կյանքում ու չգտնելով՝ ինքնակամ հանձնում է իրեն կապույտ երազների ցնորքին: Խորհրդապաշտ բանաստեղծության օրորող թախիծն ու նրբամոլ տարերքը ամբողջապես ողողում են երիտասարդ Չարենցի աշխարհը: Դա սովորական տուրք չէր ստեղծագործական ուսումնառության անհրաժեշտությանը, այլ սերնդի աղավաղված ճակատագիրն էր՝ բեկված քնարեգության զգայուն հայելու մեջ: Բանաստեղծը որոնում էր՝ իր նետի սրությունը փորձելով հայրենի և օտար երգարվեստի կայծքարերի վրա, որոշելով իր համար բանաստեղծության գլխավոր թիրախը:

Բազմաթիվ ու բազմապիսի խոհեր են հուզում Չարենցի պատանեկան քնարը: Արևի երազանք ու գունատ գիշեր, «արեվանման, արնավառ խոսքի» խրոխտություն ու թախծոտ շշուկների մեղեդի՝ Վահան Տերյան, «ձյունապատ լեռներում» հնչող զրնգուն կարոտ և «աստղային մույթի» տանջող լուսություն... Հակասություններ էին սրանք, որոնց խաչողիներում իսկապես մոլորված էր բանաստեղծի ուղին: Մեծագույն ցավը, սակայն, հայրենիքի ցավն էր: Չարենց բանաստեղծի ծնունդն ու առաջին մկրտությունը կատարվել է այդ ցավի մեջ:

Այս տեսակետից ուղենշային արժեք ունեն վաղ ջրջանի երկու բանաստեղծություն: Իրանցից առաջինը՝ «Վահագնը», մի ամբողջ սերնդի դառը վերապահությունն է հայոց ճակատագրի հանդեպ: Անցել է դարերի միջով Վահագնի առասպելը, սերունդների համար դարձել է փրկության հույսի խորհրդանշան: Երգել են պոետներն այդ հույսը, իսկ առասպելը առասպել էլ մնացել է: Դաժան իրականություն

նր ցրել է բոլոր պատրանքները՝ ջնջված երազի տեղ թողնելով արյունոտ մի վերք:

Եվ հավատացի՞նք հարբած ու գինով, Որ դու կա՛ս հոգր, մարմնացում Ուժի — Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով Մեր երկիրը հին դարձրին փոշի... Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ, Որ նետեն քաղցած ոհմակներին կեր — Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ...

Ողբերգական նույն թեման է հնչում նաև «Հարդազողի ճամփորդներում»: Աչքերի մեջ պահած «երկնային ճամփաների հեռուները դյուրական», սիրահարված սեփական հոգու տրտմությանը, տարված «հավերժական հեռուների երազով», գորշ օրերի տաղտկության դեմ պարզելով «ողջակիզվող սիրտը»՝ անտարբեր աշխարհի դրժվարին ուղիներով քայլում է երազողների սերունդը, քայլում է ժողովուրդը՝ որոնելով «պատահական աչքերում հարդազողի ուղիները ոսկեման»: Մութ, անհեթեթ կյանքը դառնում է «հավերժական մի փնտրում»: Բայց գոց են հույսի արահետները, հավատի «լուսավոր հեռուները»՝ անհաս: Անկենդան հայացքներից սառչում է սիրտը, ցնդում է «կապուտաշյա երջանկության առասպելը»:

Չէ՛ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ, — Ու խնդացին լուսավոր մեր աչքերին, Բութ հեզանցին մեր կարոտները հրկեզ — Ու հեռացան: Ու ոչ մի լույս չբերին...

Իր առաջին բանաստեղծական շարքերում Չարենցն իսկապես խորհրդապաշտ է: Բայց եթե բուն արվեստում նա փրճուրում էր պատկեր-նշանի բազմաշերտ խորհուրդը, ապա կյանքում նրա որոնումների նպատակը հայրենիքի ճակատագրի առեղծվածն էր: Ո՛վ ենք մենք, որտեղի՞ց ենք եկել, ո՛ր ենք գնում, ինչո՞ւ է պատմությունն այսքան դաժան եղել մեր հանդեպ, ինչպե՞ս ենք կարողացել այդ արհավիրքների մեջ տոկուն ու բարձր պահել նաիրյան ոգին, անվերադարձ մահացել է նա, թե հարություն պիտի առնի մի օր... Հարցեր էին սրանք, որոնց երիտասարդ բանաստեղծը առայժմ չէր կարող պատասխանել արվեստի լեզվով:

Սկսվում է, սակայն, առաջին համաշխարհային պատերազմը: Ամենուրեք կամավորական ջոկատներ են կազմակերպվում: Հայրենիքի փրկության հույսը առավել քան երբեք իրական էր թվում: Տաս-

նութամյա Չարենցը խանդավառ միանում է կամավորական խմբերին, չէ՞ որ վերջապես ներկայացել էր առիթը՝ կյանքով ու գործով լուծելու տանջող հարցականների հանգույցը: Սակայն այդ նորածագ հույսը ևս հողմացրիվ պիտի լիներ պատերազմի արյունոտ ճանապարհներին: Բանաստեղծը գրում է «Դանթեական առասպել» պոեմը՝ լուսավոր երազների փլուզման մի նոր սլորտաույ՝ դրամա: Գնում են ոգեշնչված պատանիները՝ անծանոթ աշխարհի ուղիներով, գնում են՝ «կապույտ երկնքի խորությամբ արթած», արտներում պահած ազատ հայրենիքի սրբազան տեսիլը: Բայց դրա փոխարեն քայլ առ քայլ թանձրանում է սարսափի մոծավանքը՝ նրանց «ջահել ու բազմերազ» հոգիները մատնելով ծանր տարակույսի:

Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն:
Ինչո՞ւ են փոում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս չար երբ պիտի լռեն:
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր—
Կյանքը դարձնում նգովյալ գեհեն:

Պատերազմից հիստորիական, արդեն քանիներորդ անգամ անհայտ ուղիների գայթակղությամբ մատնված բանաստեղծին իրադարձությունների պիքը նետում է հեռավոր Ռուսաստան: Նրա հայացքի առջև մի նոր ու անծանոթ աշխարհ է բացվում, որ նման էր և նման չէր իր երազների ուսկի եզերքին, այն երևակայական կյանքին, որ նրա վաղ շրջանի քնարական երգերում «երկնքի պես անհո՞ւն, անհո՞ւն» էր, «կորած աստղի պես հազարանուն...»: Դա ոչ թե հեքիաթային, այլ իրական հրաշք էր: Անծայրածիր երկիրը բռնված էր հեղափոխության բոցերով: Ելել էին «հուսավառված ու կրակոտ» ամբոխները, զարկվածների ու զրկվածների անվերջ բանակները, ելել էին, որ թոթափեն դավալոր ստրկության լուծը, կառուցեն նոր աշխարհ: Հանճարեղ արվեստագետի խորաթափանցությամբ Չարենցն զգում էր, որ այդ իրադարձություններից պետք է սպասել նաև կիսով չափ բնաջնջված իր ժողովրդի փրկությունը: Բնագրական այդ զգացողությունը վերաճում է խորին համոզմունքի, և հայ բանաստեղծը գրչով ու կլանքով զինվորագրվում է հեղափոխության երթին:

Միանգամից փոխվում են բանաստեղծի աշխարհի գույներն ու ձայները: «Ողջակիզվող կրակ» բանաստեղծությունների շարքը նոր սկիզբ էր: Չարենցը մուտք էր գոր-

ծում կրակոտ ավյունով եռացող մի աշխարհ, ուր հարազատ ժողովրդի բախտի արահետը ձուլվում էր բովանդակ մարդկության լայնահուն ճանապարհին: Նպատակի հեռուն տարտամ էր դեռ, խորհրդանշական պատկերները դեռ «երեք, անմարմին, անձև» էին: Բայց բանաստեղծական խոսքը դարձել էր հատու, կապույտի և սպիտակի օրորող գունախաղերին փոխարինել էին ալ կարմիրի, բոցագույնի այրող երանգները, ծուլ երազային ուրիշները էր տալիս արագընթաց չափի շառաչում շեշտերին:

... Երկիր իմ, սիրտդ արդյոք
Զգո՞ւմ է հուրը երգիս:

Զգո՞ւմ է տենդը հոգուս,
Երկունքս կարմիր ու մառ.
Երկնում է այսօր հոգիս,
Երկիր իմ, քույր իմ ու մայր...

Հեռու եմ,—ո՞ր եմ հիմի...
Երգում եմ: Երգս-կրակ:—
Մորիկ է կյանքը այս մի,
Թոչում է հողմից արագ...

Չարենցի քաղաքացիական դիրքորոշումը վերջնականապես ճշգրտվում և հաստատվում է հեղափոխական պոեմներում: Այդ պոեմները, հատկապես «Ամբոխները խելագարված»-ը, գաղափարական, ժանրային, ոճական առումով՝ նոր որակ էին հայ բանաստեղծության մեջ: Հարստացած կենսափորձը, կատարված հեղափոխության անհերքելի փաստը՝ մի կողմից, մյուս կողմից՝ խորհրդապաշտական դարոցի դասերը, օգնում են հայ բանաստեղծին՝ նվաճելու արվեստի մի այնպիսի մակարդակ, ուր խորհրդանշանն իր բազմիմաստությամբ արդեն կապվում է ոչ թե անհայտ ու անմարմին եզերքների, այլ միանգամայն իրական ուժերի հետ: Չարենցի խորհրդապաշտությունը գործունե կենսական բովանդակությամբ է ստանում:

Արդեն «մոտիկ, մոտիկ էր այնքան երազած աշխարհը գալիք»: Բանաստեղծը, իբրև հասարակ զինվոր, այդ գալիքի համար կոչողների շարքերում է: Նա անցնում է քաղաքացիական կոիվների փորձություններով: Սա արդեն արյունահեղության այն դանթեական ճանապարհը չէր, որին կույր հավատով զինվորագրված հայ պատանին շուտով պիտի հասներ մի դառը ճշմարտության՝ «մենք՝ զոհ, մենք՝ դահիճ՝ ուրիշի ձեռքում...»: Հին աշխարհի դեմ մղվող աշխատավորական կոիվը խորապես

գիտակցական էր, ուներ իր հստակ ու վր-
սեմ նպատակը: Հայ բանաստեղծի համար
այդ նպատակը նաև իր «հնամյա ցեղի»
ազատությունն էր, իր ավերված երկրի
այնքան սպասված վերածնունդը: Եվ պատ-
մությունն այս անգամ չար կատակ չարեց
հազար անգամ խաբված ժողովրդի հետ:
Իրականացավ բանաստեղծի երազը, որ
նաև ժողովրդի երազն էր: Չարենցը կա-
րող էր հպարտանալ, իրոք, որ ինքն էլ իր
երիտասարդ արյունից կաթիլ է տվել, որ-
պեսզի «իսկական մարմին առած» կանգ-
նի «խանդավառ Նաիրին»: Կարող էր
հպարտանալ նաև, որ առաջինը ինքն է
երգել «կարմիր ընկերների» ազատության
կոհվել, առաջիններից մեկը ինքն է եղել,
որ խանդով ու ավյունով նվիրվել է իր նոր
հայրենիքի հոգևոր կյանքի կառուցմանը:
Բայց եթե կյանքի ճանապարհը ուղիղ էր՝
ճառագայթի պես, ապա արվեստի ուղին
երբեմն խտրորվում էր՝ ժամանակի դժվա-
րին անցուղարձերից:

20-ական թվականներին Չարենցի ստեղ-
ծագործության մեջ կատարվում են դրա-
մատիկ տեղաշարժեր: Առժամանակ տար-
վելով ձախ արվեստի «միտինգային» ժա-
րով, «երկաթե երազների» երգով՝ նա իս-
կական ներշնչանքի «պայծառ, մաքուր
շունչը կենդանի» փոխում է «քետոնի
հետ», սիրտը դառնում է «պողպատե ա-
նիվ», իսկ ինքը՝ «անկիրք աշխարհի պո-
ետ»: Բանաստեղծը հետագայում խոր ափ-
սոսանքով պիտի գրեր.

Երեխայական մի խանդաղանքով
Ես Իրն ընտրեցի իբրև հարսնացու,
Եվ երգս դարձավ անուծ ու անթով,
Եվ մոլորվեցի իրերի բանտում:

Մոլորությունը, սակայն, երկար չի տե-
վում: Հոգևոր անկման այդ օրերին իսկ
Չարենցին այցելում է Սայաթ-Նովայի լու-
սավոր ուրվականը: Մեծ գուսանի «հան-
գով» նա ստեղծում է «Տաղարան» շարքը՝
հայ քնարերգության գոհարներից մեկը,
գրում է «Ես իմ անուշ Հայաստանի»-ն, որ
Ավետիք Իսահակյանի խոստովանությամբ՝
հայ հայրենասիրական երգի գլուխգործոցն
է: 1925 թ., Սովետական Հայաստանի կա-
ռավարության առաջին նախագահ Ալեք-
սանդր Մյասնիկյանի նախաձեռնությամբ,
Չարենցն ստեղծագործական ճամփորդու-
թյան է մեկնում արտասահման: Եվրոպայի
խոշորագույն թանգարաններում նա դիտում
է համաշխարհային արվեստի անմահ կո-
թողները, հաղորդակցվում է մեծ արվես-
տագետների հետ և, հոգով հարստացած,

վերադառնում է հայրենիք: Բանաստեղծի
հզոր տաղանդը հաղթանակով է դուրս գա-
լիս ձախության փորձություններից՝ ապրե-
լով մի նոր շուալ վերածնունդ: Դիպուկ է
ասել ինքն իր մասին.

Քո անկումները եղել են միշտ
Եղանակի պես պատահական,
Այդպես երկինքն է թափում հանկարծ
Թե՛ կարկուտ, թե՛ ձյուն, թե՛ փոթորիկ:

Բայց հետո, հետո, — հետո կրկին
Բացվում է օրը — և վերևից
Պայծառ արևն է ժպտում էլի
Հրով սրբած ու մաքուր երկրին:

1930 թ. լույս է տեսնում «Էպիկական
լուսաբաց» ժողովածուն: Գրական միտքը
մի պահ շլանում ու շփոթվում է: Մեծ աղ-
մուկ է բարձրանում բանաստեղծի անվան
շուրջը, ինչպես լինում է հաճախ, երբ
ստեղծագործական շատ բարձր թռիչքները
միանգամից հասանելի չեն դառնում ժա-
մանակակիցներին: Խոռվահույզ գիշերից
հետո՝ Չարենցն ապրում էր իր նոր երգի
խաղաղ ու վճիտ լուսաբացը: Դա սովե-
տական հայ բանաստեղծության տասնամ-
յա որոնումների հանրագումարն էր, ապա-
ցույցն այն բանի, որ հայրենի երգի ա-
կունքները դեռ չեն ցամաքել:

Մեծ արվեստի դիրքերից բանաստեղծը
բանավեճ է մղում ինքն իր հետ և ժամա-
նակի գրական հոգեբանության հետ: «Թե
ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը
դարձիր... ու մի դավիր քո քնարին», —
իբրև ծրագիր՝ պարզ ու բնական այս պա-
հանջը հեշտ չէր իրագործել ստեղծագոր-
ծական փորձի մեջ: «Ինչո՞ւ է դարը այս-
քան ահագին, և մարդիկ այսքան փոքրիկ
ու չնչին», — դնելով այս հարցը՝ Չարենցն
ըստ էության մատնացույց էր անում գրա-
կան կյանքի բնորոշ դրաման: Երկրում կա-
տարվել էին իսկապես դարաշրջանային
նշանակության փոփոխություններ: Մարդ-
կանց կեցությունն ու բարքերը հեղաշրջ-
վում էին գլխավորապես արագությամբ: Ձե-
վավորվում էր նոր անհատը՝ իր ներքին
աշխարհով շատ ավելի բարդ ու հակասա-
կան, քան երբևէ եղել է պատմության մեջ:
Հոգևոր կյանքը, սակայն, դանդաղ էր վե-
րակառուցվում: Մանավանդ՝ բանաստեղ-
ծական նոր գիտակցությունը ինքնահաս-
տատման ճանապարհին ենթակա էր կրկ-
նակի փորձության՝ մի կողմից պետք է
հաղթահարեր հին ավանդույթի կաշուն
ձգողությունը, մյուս կողմից՝ նորամուլ ծա-
րահեղությունների վտանգը: Հատկապես

այս վերջինները անխուսափելի էին, քանի որ իրոք անհնար էր կյանքում ծավալվող իրադարձությունների արագությամբ լուրացնել նաև ժողովրդի բազում դարերի հոգևոր փորձը և բարձրացնել այն մի հոր աստիճանի: Այդպիսի պահերին կյանքը հաճախ ինքն է ծնում հախտոն ժխտումի հոգեբանությունը, որ կարող են կրել ինչպես միջին ձորքերը, այնպես էլ իսկական մեծությունները: Խնդիրն այն է միայն, որ եթե առաջինների համար այլևս չի կարող լինել վերադարձի ուղի, ապա վերջինները հենց այդպիսի իմաստուն «վերադարձի» մեջ են հայտնաբերում ժամանակի խորհուրդը: Պատահական չէ, որ 20-ական թվականների կեսերից ի վեր Չարենցի ստեղծագործության մեջ անդադար արժարժվում է վերադարձի թեման: «Էպիկական լուսաբացի» սկզբում ևս բանաստեղծը ողջունում է իր մաքուր ներշնչանքի ոգու վերադարձը.

Վերադարձել ես դու կրկին ահա
Անչափ դժվարին մի ճանապարհով.
Ջերքիդ ծանրաձուլ մի քնար պահած՝
Կանգնել ես կրկին դու կողքիս, սակայն
Համառ ես հիմա ու խստաբարո:

Անցել էր հեղուկախական փոթորիկների դարաշրջանը՝ թմբուկի ու «վարար կրքերի» երգով, սկսվել էր խաղաղ կառուցումի «մեծ առօրյան», որ ստիպում էր ձեռք քաշել «զգացմունքների հորձանքից անձև» և վերստին մտնել «խոհով ծանրացած» երգի հունը: Բանաստեղծի դեմ աղմկում է ներկան, իբրև «անքուն կրքերի, զգացմունքների լայն, անծայրածիր օվկիան»: Հեշտ չէր, իրոք, այս ամենի միջով օրերի ճշգրիտ նպատակակետին ուղղել երգի առաջատու: Հենց այդպիսի դժվարին երթի է դուրս գալիս վերածնված հայ բանաստեղծը: Հարցն, իհարկե, չէր վերաբերում միայն բանաստեղծության թեմատիկայի փոփոխությանը: Չարենցի մտահոգություններն ավելի խոր գեղագիտական քովանդակություն ունեին: Խոսքն իրերի անշունչ աշխարհում արմաքամվող գրականությունը՝ նորից կյանքի իրական հոգսերին, մարդկային ճշմարիտ ապրումների կենսաբար ակունքին մոտեցնելու հրամայական պահանջի մասին էր.

... Միաշքանի, միոտանի
Մարդն են երգում հիմա անթև.
Մարդն են երգում, որի կրծքում
Երգեհոն է դրված կարծես,
Որ ճիշեր է միայն փղձկում,
2ուճի ո՛չ խանդ, ո՛չ խիճ, ո՛չ սեր:

Արվեստը մեռնում էր, հարկավոր էր հարություն տալ նրան: Այս դեպքում էլ գործի ծանրության ճնշող բաժինը պիտի կրեին մեծերը, նրանք, ովքեր չէին վախենում դժվարին վերելքից ու անկումներից, ում համար նաև սարսափելի չէր առաջընթացի օրենքներից մեկը՝ վերադարձը դեպի հարկադրաբար թողած եզերքները: Իսկ ի վերուստ սահմանված այդ առաքելության մեջ մեծերին միշտ էլ զորավիգ են լինում անցյալի մեծերը: Հոգևոր մաքառումների ճանապարհին Չարենցի համար վերստին արվեստի փարոս են դառնում Դանթեն ու Գյոթեն, Պուշկինն ու Հայնեն, Թումանյանն ու Տերյանը... Կյանքի վերջին օրերից մնացած մի ձեռագիր պատահիկում բանաստեղծը ետադարձ հայացքով ներկայացնում է իր հոգևոր հասունացման ճանապարհը, որ ձգվում է ազգային ու համամարդկային մշակույթի անչափելի հեռուները՝ «մեր հին հանճարեղ վեպից» մինչև «մեր միջնադարյան հայրենները սեզ», մինչև Հովնաթան ու Սայաթ-Նովա, «Փարսի Ֆիրդուսուց մինչև ռուսական ֆետ», «Սիդի երգերից մինչև Պատետնակ», պուշկինյան երգի պայծառ ափերից մինչև խորհրդապաշտություն: Բանաստեղծն իրեն հզոր ու առնական է զգում ազգային համամարդկային և հակառակը տանող ուղիների հանգույցում.

Կանգնել եմ ձեր դեմ—
Ե՛վ պոետ, և՛ այր —
Դեմքով ժպտադեմ
Ե՛վ երգով պայծառ —
Կանգնած եմ ահա՝
Երգասան վերջին՝
Իմ նայիրական
Երգի կամուրջին,
Ու շուրջս եմ նայում —
Ու հեռուն պայծառ՝
Համայն աշխարհի
Երգասան դարձած:

Մեկ անգամ ևս հաստատվում է այն մեծ ճշմարտությունը, թե արվեստագետի և իր ժամանակի կապի գլխավոր հանգույցը անցած սերունդների հոգևոր փորձի յուրացումն է, պարտքի ու պարտականության խոր գիտակցությունը՝ ինչպես ներկայի ու գալիքի, այնպես էլ անցյալի հանդեպ:

Որքան ավելի էր Չարենցը մերձենում կատարյալ արվեստի բարձունքներին, նրա ստեղծագործության մեջ այնքան ավելի էր խորանում պատմության ու ներկայի կապը: Բանաստեղծի իմաստնացած հայացքը ներկայի մեջ տեսնում է պատմության շարու-

նակությունը, պատմության մեջ՝ ներկայի հետավոր խորհուրդը: Նրա բանաստեղծական մտորումների կիզակետում հայտնվում է պատկեր-խորհրդանշանների մի նոր համակարգ: Եթե «Էպիկական լուսաբացում» քնարական աշխարհի բոլոր եզերքները իրար հետ կապվում էին այգաբացի առանցքային գաղափարով, ապա 1934 թ. լույս տեսած «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ միավորիչ առանցք է ճանապարհի թեման: Չարենցն այն բանաստեղծներից է, որոնց համար զարգացումը ոչ թե հանդարտ ու համաչափ ընթացք է, այլ՝ ավելի ու ավելի բարձր ու հեռահար թռիչքների շղթա: Նրանց ստեղծագործության մեջ լուրաքանչյուր նոր էջ բաց է անում անծայրածիր աշխարհի մի նոր անձանոթ եզր, նրանց ստեղծագործական տարբեր հասակները գրեթե անճանաչելիորեն տարբեր են իրարից: Այս տեսակետից՝ Չարենցի հետ կարող է համեմատվել թերևս միայն Դանիել Վարուժանը:

«Գիրք ճանապարհի»-ում Չարենցին, ինչպես իր մեծ նախորդներին, ամենից առաջ հետաքրքրում է մայր ժողովրդի դավաճան մաքառումների ուղին: Հատկապես «Մահվան տեսիլ» և «Պատմության քառուղիներով» պոեմներում բանաստեղծը փորձում է նորագույն ժամանակների բարձրությունից վերափաստավորել սերունդների հոգևոր տքնության խորհուրդը: Այսօր, իհարկե, չի կարելի ամպերապահ ընդունել հայ անցյալի արժեքներին Չարենցի տված հակասական գնահատականները, որոնք ցավալի տուրք էին ժամանակի հոգեբանությանը: Ինչպես՝ կարելի է, օրինակ, համաձայնել բանաստեղծին, երբ նա իր հզոր խոսքի անդիմադրելի գրավչությամբ ուզում է ներշնչել, թե միջնադարի մեր հոգևոր մեծերի՝ Խորենացու և Եղիշեի, Նարեկացու և Ծնորհալու «տքնությունը եղել է գուր, որքան էլ հմուտ ու հանճարեղ»: Սակայն բարեբախտաբար «Գիրք ճանապարհի»-ի անկրկնելի դեմքը որոշում են ոչ թե այսպիսի մասնակի վրիպումները, որոնք, ի դեպ, բանաստեղծը վերանայում է իր վերջին երգերում, այլ այն տիրապետող գաղափարը, թե ժողովրդի հոգևոր պատմությունը միասնական է, այդ պատմության շարունակությունն ու զարգացումն է ստեղծագործական որոնումների այն ոգեշունչ երթը, որ սկսվել էր սովետական դարաշրջանում:

«Գիրք ճանապարհի»-ում բանաստեղծը հասնում է այն մեծ ճշմարտությանը, որ մի փոքր ավելի ուշ, «Կոմիտասի հիշատակին» պոեմում հնչում է այսպես.

Այն, ծաղկի սերմն՝ հայրենի
Հող չի հաճախ ճանաչում,—
Բայց սերմն հոգու—միայն իր
Հայրենիքում է աճում...

Չարենցը հայ երգի նոր հայրենիքում՝ Սովետական Հայաստանում, բարձրացող կյանքի երգիչն էր, նրա հոգևոր վերելքի նախանձախնդիրը: Նրա վերջին գիրքը ծայրից-ծայր իրոք թրթռում է հոգեղեն շնչով. «Ոգին նաիրյան երգի», նոր օրերի հողմերով տարված, թևածում է աշխարհի հեռախոսներում, կիզվում է «հողմերում հանուր», որպեսզի «ամբարի իմաստ ու խորհուրդ»: Բայց միշտ «հարազատ է մընում մեզ Տերյանը»: Մեր բանաստեղծական թռիչքը, որքան էլ հեռու եզերքների ձգտի, կենդանի և ուժեղ է իր ինքնությամբ միայն: Այսպես իրար են ձուլվում «թռիչքը մեր լայնահուն» և մեր «բարբառը նաիրյան», որպեսզի մեր երգը՝

...ելնող աշխարհի համերգում
Ինքնահուն նվագներ ծնի:

Հզոր ու ինքնահուն այդ նվագներից մեկը «Գիրք ճանապարհի» էր: Հոգու հազար թելերով բանաստեղծը կապված է իր մեծ օրերի երթին: Բայց նույն թելերի մյուս ծայրերը, արյունատար երակների մեջ, անում են նրա հանճարը հայրենի հազարամյա երգի իմաստուն ավանդներով, մարդկության հոգևոր փորձի անհուն հարստությամբ: Լինելով «այդ շնորհիվ ի վերուստ»՝ նա իրեն զգում է նախորդների ժառանգորդ ու պարտապան: Իր հոգևոր առաքելության ինքնավստահ գիտակցությունը մեծ բանաստեղծին՝ մարգարեական պայծառատեսություն է ներշնչում.

Ինչ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցյալում—լուսավոր ու վեհ,
Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ —
Ողջը հավաքել ու քեզ է տվել:—
Տվել է, որ դու այդ ամենը այս
Օրերին խառնած, խոր հավատով լի՝
Պարզես գալիքի ցնորքին անհաս—
Եվ ընդմիշտ մնաս մեծ ու սիրելի:—

Եվել էր հոգևոր հատուցման ժամը: Իր «քառասունամյա կյանքի քարն ուտերի վրա», իր «արարչական գործի անագործուն կեսին»՝ Չարենցն ստեղծագործական հաշիվ էր տալիս գալիքին՝ անցյալից ու ներկայից ժառանգություն ստացած հարստությունների դիմաց: «Իբրև սերմնացան՝ շրոպլ» բանաստեղծը ժլատ էր դարձել՝ «ել-

նելով հնձի»։ Եվ իրոք, չարենցյան նոր երգերի սակավաքանակ տողերում խոր ու լայնահուն իմաստություններ էին ծավալվում։ Այժմ հանճարավայել արժանապատվությամբ էր վարվում նա իրեն «լիաբուռ ձոնած շնորհների» հետ։ «Գիրք ճանապարհի»-ի լավագույն էջերի խորքը ծանրացած է ժամանակի ճշմարիտ հոգսերով, այդ երգերում եռում է նոր կյանքի կառուցման հզոր տարերքը, իսկ ներշնչանքի վրա հանդարտ թևածում է Նարեկացու և Ծնորհալու, միջնադարյան տաղերգուների, անանուն ժողովրդական երգիչների ոգին ու ոճը։ Բանաստեղծի ներքին լեզուն հիմա արդեն համահունչ է մեր հազարամյա դպրության, «հին այրերի» բարբառին։ Նըրանց հավաքական կերպարը բանաստեղծը ոգեշունչ արվեստով գծում է վերջին օրերի անավարտ ձեռագրերից մեկում։ Ամայացած վանքում, մոմի դողդոջում լույսի տակ, եղեգնյա գրչով նա՝ «փառահեղ ու վեհ» ծերունին, «մազադարձի վրա ջինջ» դրոշմում է «անջնջելի երկաթագրեր»։ Դեմքին «անեղծելի խոհ» կա, աչքերի մեջ շողում է «անարատ ու անաղարտ ոգին վկայի»։ Վերացած ու վեհացած՝ նա անշտապ ու հանգիստ թերթում է «մարդկային կյանքի» գիրքը։

Խորասուզված իր անեղ
Մտքի օվկիանոս,—
Օրերի վեպն է անէ
Նա բառ-առ-բառ հանում...

Ակամա հիշում ես մի ուրիշ, ժամանակով մեզ ավելի մոտ ու սիրելի կերպար՝ «Դեպի լյառն Մասիս» պոեմից։ Խաչատուր Աբովյանն է դա, որի լուսավոր կյանքն ու գործը մեր նորագույն դպրության հիմքն ու հեմարանն են։ Հիշում ես նաև մեծ Կոմիտասին, որ Չարենցի պաշտամունքն էր, «մեր որբ հանճարի ձայնը»։ Իբրև հոգե-

զավակ՝ բանաստեղծը նրա հետ դեգերում է աշխարհից աշխարհ՝ հոգևոր հաց փրկությունով իր և իր ժողովրդի համար։ Հորդաբուխ քնարականությամբ են շնչում մեծ երգահանին նվիրված չարենցյան տողերը։

Վերադարձել ես դու, հա՛յր,—
Եվ հիրավի՝ իմ ձեռքով
Ես չե՛մ արդյոք մի խաղար
Ու ցրտահար երեկո—

Փակել աչքերդ հանգած —
Եվ իմ սրտով գոհանել,
Որ հայրենիք մինչև գաւ՝
Հեռունեղում չմոռես...

Այս կերպարներում 20-րդ դարի բանաստեղծն, անշուշտ, որոնում էր նաև սեփական կյանքի ու գործի խորհուրդը։ Նըրան էլ վիճակված էր իր «դժվար դարում» ծանր մաքառումներով առաջ տանել հայրենի երգի արահետը, որ «դարի բորբոքում սրտի» միջով գնում էր ձուլվելու մարդկության մտքի լայնահուն պողոտային։ Բնությունը շռայլ շնորհներով էր օժտել մեծ բանաստեղծին, հարազատ ժողովուրդը առատորեն սնել էր հոգեղեն կաթով, իր փոթորկուն դարը նրա հանճարի նետին տվել էր թռիչքի անձայրածիր ասպարեզ ու վսեմ նշանակետ։ Եվ այս ամենի հանդեպ նա պարտք չմնաց ժողովրդին ու ժամանակին։ Իր գործի անմահության արժանապատիվ գիտակցությամբ Չարենցն իրավունք ուներ գրելու.

Ծնվեցի ես Ղարսում, սակայն՝ իմ հոգում
արևն Իրանի
Հար հուրհրաց, իբրև հին, հայրենի կարոտ
մի անմար,—
Բայց հայրենիքը ոգուս—բովանդակ
աշխարհը եղավ։—





Գ Ր Ա Ն Ո Ս Ա Կ Ա Ն

ԿՐՈՆԱՇՈՒՆՉ ԳՈՐԾԵՐԻ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1986 թվականին հեղրություն (Տպարան **Կ. Տոնիկյան և Որդիք**) լույս տեսավ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի «Անետարանի պատգամներ» ժողովածուի երկրորդ հատորը: Սույն ժողովածուի առաջին հատորը ունեցել է երկու հրատարակություն. առաջինը՝ Բուենոս Այրես, 1953 թ., և երկրորդը՝ Երուսաղեմ, 1965 թ.:

Հեղինակ սրբազան հայրը ներկա հատորը բաժանել է առանձին «յողուածնե-րի», որոնք թեև մեկը մյուսից բոլորովին անկախ են, սակայն կազմում են միասնական ամբողջություն: Հստ հեղինակ սրբազան հոր, այդ հոդվածները հավակնություն չունեն գրական գործեր համարվելու, այլ դրանք «աստուածային սիրոյ պատգամներ (են)՝ վշտաբեկ սիրտերուն և Աստուծոյ խօսքին կարօտ ու ծարաւի հոգիներուն» (էջ 6):

Այսպես, օրինակ, եթե «Սուրբ Ծննդեան պատգամ» հոդվածում հեղինակ սրբազան հայրը ողջունում և շնորհավորում է բովանդակ հայությանը՝ խաղաղության իշխանի՝ մեր Տեղ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնի առթիվ, ապա «Ապրիլեան Եղեռնի Եօթանասունամեակին» շարադրանքում ցավ ի սիրտ գրում է.

«Մեր հոգին կ'ըմբոստանայ այդ անմախքն առհրին դէմ, և կը բողոքէ «քաղա-

քակիրթ» կոչում անսիրտ աշխարհին դէմ, որ արդարութիւնը կը խաչէ ու փոքր ազգերը վաճառքի կը հանէ իր փառքին ու շահերուն համար» (էջ 18):

Եվ այսպես, «Մուտք»-ից հետո, հաջորդաբար, ներկա հատորն ընդգրկում է հետևյալ նյութերը. «Սուրբ Ծննդեան պատգամ», «Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին», «Վարդանանց Հոգեմարտը», «Ապրիլեան Եղեռնի Եօթանասունամեակին», «Մեծ Պահքի Նպատակը», «Արևագալի Երգերը», «Աղօթքի Կիրակի», «Ծաղկազարդ», «Աւագ Ծաբաթ - Ոտնուայ», «Ահաւոր Գիշերը», «Աւագ Ուրբաթ — Խաչելութիւն», «Յարութիւն և Ամմահութիւն», «Ծնորհաբաշխ Ս. Հոգին», «Ս. Կոյսի Առաքինութիւնները», «Խաղողի Օրհնութիւն», «Մեծագոյն Պատուիրանը», «Ս. Յակոբ Մծբընացի՝ Հրաշագործ Հայրապետը», «Առատ Կեանքը», «Երկիրդ և Հաւատք», «Մարմին և Հոգի», «Ծալրագոյն Վարդապետի Իշխանութիւն» և «Աստուածաշնորհեան Խորհուրդը»:

Այս վերնագրերից յուրաքանչյուրի ոգուն համապատասխան, հեղինակ սրբազան հայրը հանգամանորեն խոսում և պարզաբանում է շարադրվածի էությունը և նպատակը:

Ծարադրանքի լեզուն հստակ է, անմիջական ու տպավորիչ, որը պայմանավորված է հեղինակ սրբազան հոր մտքի հրա-

տակությամբ ու նյութի քաջ իմացությամբ:

«Աշխատանքը փոխելու համար պետք է նախ մարդոց հոգիները փոխել. մինչև որ մարդիկ հոգեպես չփոխուին, նոր հոգիով (Ս. Հոգիով) չլեցուին, չեն կրնար աշխարհքը փոխել: Աշխարհքը փրկելէ առաջ պետք է հոգիները փրկել: Եւ հոգիները կեանք կը ստանան վերէն եկած զօրութեան մը, որ իրենց ներսը յառաջ կը բերէ, ինչպէս բնութեան մէջ՝ կեանքը ներսէն դէպի դուրս կը յորդի՝ արևի կենսատու ճառագայթներուն շնորհիւ» (Էջ 55):

Այս տողերը տիպար խաղաղասեր հայ, և ոչ միայն հայ, քրիստոնյա մարդու մտքի արդյունք են և անխամբելի խոսք-պատգամ, որը թեև արտացոլում է առաքելական շրջանի իրականությունը, բայց և այնպէս այն ի գործու է նաև մեր օրերին, երբ մարդկությունը այնպէ՛ս կարոտ է խա-

ղաղության և եղբայրական համագործակցության:


Այս առումով պատահական չէ, որ գրքի շապիկի վրա հեղինակ սրբազան հայրը գետեղել է մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետևյալ պատգամը՝ «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմիանս» (Հովհ. ԺԳ 34):

«Անետարանի պատգամներ» գրքի երկրորդ հատորը բաղկացած է 104 էջից: Վերջում տրված է հեղինակի՝ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի հրատարակած գործերի ցանկը:

Ներկա հատորը հեղինակ սրբազան հոր մի նոր ու տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է՝ ճշմարիտ կյանքի ուղեցույց լինելով բարեսեր ու հավատավոր հայ ընթերցողի համար:

ՎՈՒՈՂՅԱ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ





ԳՈՂԹՆ, ԵՐՆՋԱԿ, ԾԱՀՈՒԿ, ՆԱԽԾԱՎԱՆ...

Եթե պատմությունը ժողովրդի ընդհանրացված կենսագրությունն է ժամանակի ու տարածության մեջ, ապա մշակութային ժառանգությունը արժևորման այն տեսանկյունի և ստույգ չափանիշն է, առանց որի դժվար է պատկերացնել որևէ ճշմարիտ պատմություն:

Հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի ստեղծած հոգևոր և նյութական մշակույթի հուշարձանները, թե՛ Սուլեյմանյան Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս՝ տասնյակ հազարներով են հաշվվում: Պատմա-մշակութային արժեքների մի անկրկնելի թանգարան է Նախիջևանի ԻՍՍՀ տարածքը, որի կազմում են Մեծ Հայքի Վասպուրական և Սյունիք աշխարհների մի քանի գավառներ (Գողթն, Երնջակ, Նախճավան, Ծահուկ, Ծարուր), միջնադարյան քաղաքներ (Նախճավան, Զուղա, Ագուլիս), նշանավոր վանական համալիրներ ու մշակութային կենտրոններ (Մեսրոպավան, Աստապատ, Աբրակունիս, Ծոռոթ, Ցղնա և այլն):

Արգամ Արվազյանի 1978 թ. հրատարակած «Նախիջևանի պատմա-ճարտարապետական հուշարձանները» գիրքը փաստորեն առաջին անգամ ամբողջության մեջ ներկայացրեց երկրամասի հուշարձանների հիմնական մասը: Եռանդով և մխրվածությամբ շարունակելով իր ուսումնասիրու-

թյունները, հեղինակը շուտով հրապարակի վրա դրեց նոր, հուշարձանների ընդգրկմամբ ավելի ընդարձակ աշխատություններ. «Հայկական ճարտարապետության հուշարձանները Նախիջևանի ԻՍՍՀ-ում» (ռուսե-



րեն, Երևան, 1981), «Ագուլիս», «Զուղա» (Երևան, 1984), իսկ բոլորովին վերջերս՝ «Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները» համահավաք ցուցակը («Հայաստան» հրատ., Երևան, 1986): Այն ընդգր-

կում է հնագույն ժամանակներից մինչև մեր դարի սկզբները կառուցված պատմա-ճարտարապետական և հնագիտական 610 հուշարձան: Համահավաք ցուցակում հուշարձանները ներկայացված են որոշակի համակարգով, համարակարգված, ըստ հեղինակի մշակած հարցակարգի, որի պարտադիր կետերն են՝ հուշարձանի անվանումը, կառուցման ժամանակը, տեղը, ճարտարապետը, պատվիրատուն կամ մեկեմասը, հորինվածքը, շինանյութը, վերականգնումները, մուտքը, արքիդը, մույթերը, ավանդատները, գմբեթը, արձանագրությունները, որմնանկարները, պատկերաքանդակները, զարդաքանդակները, շրջակայքը, վիճակը: Այս հիմնական հարցերից բացի գյուղատեղերի, գերեզմանատների, հնագիտական նյութերի և բերդերի համար կան լրացուցիչ հարցեր, որոնց շուրջ հյուսվում է հուշարձանի նկարագրությունը անհրաժեշտ տեղեկություններով ու մանրամասներով:

Համահավաքն ընդգրկում է Նախիջևանի շրջանի գլխավոր հուշարձանները (200 վանք և եկեղեցի, 60 մատուռ ու սրբավայր, 84 գյուղատեղի ու քաղաքատեղի, 41 բերդ և այլն), սակայն, ինչպես առաջաբանում

նշում է հեղինակը, «խաչքարերի ու պատկերաքանդակներով տապանաքարերի հետ միասին Նախիջևանի հայկական պատմա-ճարտարապետական, կոթողային և այլ հուշարձանների թիվը անցնում է 4500 միավոր-հուշարձանից»:

Գրքում առանձին ենթավերնագրով ներկայացված է Նախիջևանի ԻՍՍՀ բնակավայրերի ցանկը՝ պատմական, հին, նոր և հաճախ փոփոխված անվանումներով: Համահավաքին կցված է «Նախիջևանի պատմության և մշակույթի հիմնական հուշարձանները» քարտեզ-ուղեցույցը, որը ևս խիստ կարևոր է նման կարգի աշխատության համար:

Արգամ Ալվազյանի երկարամյա հետազոտությունների արդյունք հանդիսացող համահավաք ցուցակը, որի հրատարակությունը իրականացրել է ՀՍՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ընկերությունը, արժեքավոր ներդրում է Նախիջևանի հայկական հուշարձանների հետագա ուսումնասիրության, դրանց մասսայականացման գործում:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՅԱՆ
(Արվեստագիտության թեկնածու)

**Ն. Կ. ԹԱՀՄԻԶՅԱՆ.—ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՀԱՅ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ 5—15-ՐԴ ԴԴ.
Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986 թ., 344 էջ**

Նարեկացիագիտությունը, հիրավի, վերջերս է ապրում վերջին տարիներին: Հայ միջնադարյան խոշորագույն բանաստեղծ-փիլիսոփայի հմայքը, ստեղծագործության բազմաբովանդակ և անսպառ բնույթը, նրա համամարդկային հնչեղությունը շարունակում են գրավել նորանոր գիտնականների, որոնց ջանքերով լուսաբանվում են Գրիգոր Նարեկացու հանճարի դեռևս քիչ ուսումնասիրված կողմերը: Ահա այդպիսի աշխատություններից է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանի «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5—15-րդ դարերում» մեծածավալ մենագրությունը, որը վերջերս դրվեց ընթերցողի սեղանին: Նշենք, որ սույն մենագրության ստեղծմանը նախորդել են վաստակաշատ երաժշտագետի լայն ճանաչման արժանացած այնպիսի ուսումնասիրություններ, ինչպիսիք են «Թամբուրի Հարութինի «Ձեռնարկ արևելյան երաժշտության» (1968), «Ներսես Ծնորհալին երգահան ու երաժիշտ» (1973), «Երաժշտության տեսությունը հին և միջնադարյան Հայաստանում» (1977, ռուս.), «Մակար Եկմայան» (1980), շուրջ 150 հոդվածներ գիտական տարբեր պարբերականներում և այլն:

Ուշագրավ է գրախոսվող մենագրության մտահղացումը: Հեղինակը չի սահմանափակվել Նարեկացու լոկ երաժշտական ստեղծագործության մասնագիտական ման-

րակրկիտ հետազոտմամբ, այլ սկզբից ևեթ նպատակ է ունեցել դիտելու նրա ստեղծագործությունը լայն պատմական խորքի վրա, հետևելով տաղային արվեստի գոյացման նախադրյալներին 5-րդ դարից սկսած մինչև ուշ միջնադարը հասնող փայլուն երաժշտա-բանաստեղծական դրսևորումներով հարուստ՝ զարգացած ավատատիրության ժամանակաշրջանը: Այդ նպատակին է ծառայեցրել հեղինակը իր երաժիշտ-միջնադարագետի ողջ փորձն ու վարդապետությունը:

Արդեն գրքի նախաբանում հատակորեն ուրվագծվում են հեղինակի հիմնական նպատակադրումներն ու հարցադրումները: Այստեղ Ն. Թահմիզյանը անդրադառնում է Նարեկացու երաժշտական գործունեությանը վերաբերող պատմական և գրական աղբյուրներին (Ներսես Լամբրոնացի, Սամվել Անեցի, Հայսմավուրք և այլն), այնուհետև տալիս է նարեկացիագիտության տարբեր շրջանների համառոտ ակնարկը, նշելով միախառնումների վաստակը, Ա. Չոպանյանի, Մ. Աբեղյանի և այլոց ներդրումը: Նախաբանում հատկապես ընդգծվում են Կոմիտասի՝ Նարեկացու տաղերի հայտնաբերման և ձայնագրման ուղղությամբ կատարած աշխատանքների նշանակությունը, ինչպես և Բ. Քուշմարյանի հայ միջնադարյան երգարվեստի պատմատեսական հետազոտման մեթոդի մշակման կարևորությունը, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ գիտականորեն հաստատելու Նարե-

կացու մի քանի տաղերի երաժշտական բաղադրիչի պատկանելությունը 10—11-րդ դարերին:

Հեղինակը միաժամանակ չի շրջանցում Գրիգոր Նարեկացու երաժշտական ստեղծագործության ուսումնասիրմանը կապված որոշակի լուրջ դժվարությունները, մշելով դրանց սկզբունքներն հաղթահարելի լինելու հանգամանքը և դրական լուծման ուղիները:

Մենագրության առաջին գլուխը, իրենից ներկայացնելով հայ միջնադարյան երաժշտության պատմության սեղմ, սակայն շատ հագեցված մի ակնարկ, գաղափարված է որպես ներածություն՝ գրքի կենտրոնական, կարևորագույն մասին անցնելու համար: Դարձյալ պատմամշակութային լայն խորքի վրա, հեղինակը անդրադառնում է 5—15-րդ դարերի հայ երաժշտության զարգացման հանգուցային դեպքերին ու դեմքերին, խոսում հեթանոսական և քրիստոնեական, ժողովրդական ու մասնագիտացված, տեղային ու դրացի երաժշտական մշակույթների մերթին կապերի և փոխազդեցությունների մասին: Եթե վաղ միջնադարի մասնագիտացված երգարվեստի համար որոշիչ դեր խաղացին Սահակի և Մաշտոցի կողմից իրագործված եկեղեցական ու ծալնեղանակների կարգավորումը, երաժշտածիսական մատյանների հայացումը, ապա զարգացած ավատատիրության շրջանում արդեն ծաղկում են քաջամուտ երաժիշտ-փիլիսոփաներով հայտնի բարձրագույն տիպի դպրոցներ, ինչպիսիք էին Անիի, Նարեկա, Հաղպատի ու Սանահինի, Գլաձորի ու Տաթևի, ինչպես և Կիլիկիայի բազմաթիվ վանքերը: Հաղաքային աշխարհիկ ու պալատական կյանքի վերելքը, ժողովրդական և ժողովրդա-արոֆեսիոնալ արվեստների մշտական կապը եկեղեցական հետ հանգեցրին երաժշտա-բանաստեղծական նոր տեսակների գոյացմանը, ինչպիսիք էին գանձը, տաղը, որոնց կազմավորումը առաջին հերթին կապվում է Գրիգոր Նարեկացու անվան հետ: «Հիրավի,— գրում է Թահմիզյանը,— Հայաստանի երաժշտական կյանքում 10—11-րդ դդ. իրագործված մեծագույն տեղաշարժի մերթին բովանդակությունը կազմում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության կերպավորումը ու տաղերի արվեստի ծաղկումը առհասարակ: Այդ արվեստի ոլորտում է, որ քննարկվող ժամանակաշրջանում մի կողմից՝ հիանալիորեն դրսևորվում ու շարունակվում է 7—8-րդ դդ. հայկական մասնագիտացված երգաստեղծության բնականոն զարգացման ընդհատված գիծը, և մյուս կողմից՝ հաստատուն հիմքեր են ստեղծվում նրա հե-

տագա թոփչքի համար» (էջ 37): Եվ իսկապես, եթե հիշենք, որ վաղ միջնադարի պայմաններում արդեն մշակվել էին հայ հոգևոր երգարվեստի հիմնական տեսակները՝ սկսած պարզագույն սաղմոսատիպ եղանակներից մինչև մեղեդային և կշռության թավական բարդ նկարագիր ունեցող «ծանր» շարականները, որ Դավիթ Անհաղթից սկսած մշակվում և հետագա գիտնական-վարդապետների կողմից լրացվում ու զարգանում էր ուսմունքը ձայնի, ներդաշնակության հենքի, երաժշտության էության մասին, ապա պարզորոշ կրառնա այն պատմա-մշակութային հարուստ և պարարտ հիմքը, որը նախապատրաստեց տաղային արվեստի ճոխ ծաղկումը Նարեկացու ժամանակաշրջանում:

Մենագրության երկրորդ՝ կենտրոնական և հիմնական գլուխը նվիրված է Գրիգոր Նարեկացուն և նրա ժառանգության երաժշտագիտական քննությանը: Այն բացվում է հայոց պատմության «հարյուրամյա խաղաղության շրջանի» ընդհանուր քաղաքական-տնտեսական և մշակութային բնութագրումով: Գրիգոր Նարեկացու կյանքին և գործին վերաբերող հակիրճ ենթաբաժինը ի մի է բերում նրա անձի և անմիջական շրջապատի մասին առ այսօր հայտնի բոլոր տվյալները: Մեծ հետաքրքրությամբ է կարդացվում «Մերձավոր Արևելքի գրական շարժումները 9—11-րդ դարերում և Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանը» ենթաբաժինը, որը դարձյալ թույլ է տալիս դիտելու Նարեկացուն ոչ թե որպես տեղային անբացատրելի մի երևույթ, այլ իր և նախորդող ժամանակաշրջանի գրական-փիլիսոփայական միտումներին և շարժումներին խորապես կապված և քաջատեղյակ մեծատաղանդ արվեստագետ: Ընդ որում, այդ կապերն ու ընդհանրությունները Թահմիզյանը քննում է ինչպես քրիստոնեական-բյուզանդական, այնպես էլ՝ մահմեդական-սուֆիական գրականության նյութի հիման վրա:

Կարևոր նշանակություն է ձեռք բերում Ողբերգության մատյանի վերաբերության հարցը հայ երգարվեստի միջնադարյան ավանդույթներին: Այս տեսանկյունով Նարեկացու ստեղծագործության հիմնական կոթողը առաջին անգամ է ներկայացվում ընթերցողին: Ձեռագրական նյութի մանրամասն ուսումնասիրությունը, Ողբերգության մատյանի տարբեր ընթերցանություններում բանեցված տրոհության, առոգանության և խազագրության նշանների քննությունը, հետազոտողին բերում է այն եզրակացության, որ «Ողբերգության մատյանը, ամբողջապես առած, միջնադարում ե-

դանակավոր արտասանվել ու հատվածաբար մասերով է» (էջ 75):

Ուշագրավ է Ողբերգության մատյանի կապը այլ երաժշտա-ծիսական ժողովածուների հետ: Հայտնի է, որ դեռևս 11—12-րդ դարերից Ողբերգության մատյանի առանձին գլուխներ կամ հատվածներ մուծվել են Պատարագամատուցի, Ժամագրքի, Մաշտոցի և այլ գրքերի մեջ: Ըստ Ն. Թահմիզյանի կատարած հաշվումների վերոհիշյալ ժողովածուներում կայուն տեղ գրաված այդ հատվածների թիվը հասնում է 12-ի (էջ 80): Սակայն սրանց թերևս կարելի է ավելացնել Մաշտոց գրքում հանդիպող ևս չորս հատված. դրանք են՝ Դ գլխի Ա հատվածը «Բարեբանեալ Սատուած երկնաւոր»¹, ԶԳ գլխի Ա հատվածը «Արքայ երկնաւոր...», Գ գլխի Բ ամբողջությամբ «Տէ՛ր իմ, Տէր, տուի՛շ պարգեւեաց» և ԻԸ գլխի Ե հատվածը «Արդ, այսբանեացս անբաւից հրաշից»¹ (վերջին երկու հատվածը Աղոթագրքից և Ժամագրքից են փոխանցվել Մաշտոցի մեջ): Բացառված չէ տակավին, որ երաժշտա-ծիսական մատյանների հետագա հետազոտումը կբացահայտի Ողբերգության մատյանից մասնաճյուղի վերևում բերված ցուցակը: «Ողբերգության մատյանի սույն նյութերը,— եզրահանգում է հեղինակը,— միջնադարում անցնելով հայկական ծիսական գրքերի մեջ, վերջիններիս միջնորդությամբ ևս կապվել են հայ հոգևոր թվերգի ու երգեցողության տարբեր ձևերի հետ: Միաժամանակ, սակայն, և հատկապես ուշ միջնադարի պայմաններում, Ողբերգության մատյանի ու նրա տարբեր հատվածների երաժշտական կենցաղավարման հետ կապված շատ բան մոռացության է մատնվել հետզհետե» (էջ 81):

Անցնելով Նարեկացու բուն երաժշտական ժառանգությանը, Թահմիզյանը առաջին հերթին անդրադառնում է Ողբերգության մատյանից Ժամագրքի մեջ փոխանցված «Ընկալ քաղցրութեամբ» աղոթքին: Այն երաժշտական քաղաղիչով հանդերձ տեղ է գտել 19-րդ դարի 70-ական թվականներին էջմիածնում հրատարակված Ջալալ-գլըյալ Ժամագրքում: Մեղեդիական արտաքին հյուսվածքի առումով, ըստ բոլոր եղանակների, այդ աղոթքին հարում էին Նարեկացու գանձերից մի քանիսը, որոնցից ոչ

մեկի եղանակը չի պահպանվել: Սակայն այն փաստը, որ սրանք ևս ժամանակին երգվել են (և ոչ թե, ասենք, կատարվել թիվ), ապացուցվում է նրանով, որ Նարեկացու գանձերին հատուկ պարզ խազավորումն ունեն շատ շարականներ (էջ 84): Նույն բանն են ապացուցում և գանձերի տնագլուխ տառերը, որոնք հոդում են «Գրիգորի երգ», «Գրիգորի է երգս այս» խոսքերը:

Բազմակողմանի ու մանրակրկիտ վերլուծության նյութ են դառնում Գրիգոր Նարեկացու գրչին վերագրվող միակ շարականն ու տաղերը, թե՛ պատմաբանասիրական խնդիրների և թե՛ երաժշտագիտական քննության առումով: Այստեղ արժարժվում են այնպիսի ուշագրավ հարցեր, ինչպիսիք են Նարեկացու տաղերի հարաբերությունը Ողբերգության մատյանին, «Հավիկ» տաղի հեղինակային պատկանելիությունն ու այդ տաղի կապը ժողովրդական ստեղծագործության հետ և այլն:

Ամբողջ մենագրության ընթացքում հեղինակն իր տեսադաշտում է պահում հայ միջնադարյան երաժշտության ամենակրճառու խնդիրը՝ խազերի դեռևս չվերծանված լինելու պարագան, հնարավորին չափով դիմում ձեռագրական նյութին, հետաքրքիր դիտարկումներ կատարելով՝ տարբեր խազավոր մատյանների համեմատության հիման վրա:

Գրքում գետեղված են նաև միջնադարյան ընտիր Գանձարաններից քաղված Նարեկացու գանձերն ու տաղերը պարունակող ամբողջական խազավոր էջեր, որոնք ավելի ակնհայտ են դարձնում այդ երկերի խազավորման ու կենցաղավարման պարագաները:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ Նարեկացու տաղերը, մասնավորապես, կենցաղավարման տարբեր պայմաններում են հարատևել Կիլիկիայում և կենտրոնական Հայաստանում: Այսպես, օրինակ, ընդհանուր առմամբ վերցված, Կիլիկյան ձեռագրերը բնորոշվում են այդ տաղերի ավելի բարդ խազավորումով, որի դեպքում գրական խոսքի տվյալ վանկի հետ զուգորդվում են ավելի մեծ թրվով երգչային նշաններ (էջ 98): Ինչպես նշում է Թահմիզյանը «սուկա տարբերություններն արտահայտում են թե՛ կիրառված խազագրության մասնագիտական մակարդակը, և թե՛ Կիլիկյան ու հայաստանյան երգչային դպրոցների ինքնահատուկ գծերը (առաջինը՝ ավելի զարդոտորուն, երկրորդը՝ ավելի ամփոփ մեղեդիական)» (էջ 100):

Մեծ ուշադրություն է հատկացնում հեղինակը Գրիգոր Նարեկացու մեղեդիներով

¹ Մատյանի հատվածների աչպիսի միակցության ենթ հանդիպում, օրինակ, 16—17-րդ դդ. մի զբրչակիր Մաշտոցում: Տե՛ս, Ցուցակ հալերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, կազմեց Հ. Յակոբսոն վ. Տաշյան, Վիեննա, 1895, էջ 813, ձև. № 360:

հանդերձ հասած ստեղծագործությունների արդի ձայնագրություններին (հայկական ու եվրոպական ձայնանիշերով): Խոսքը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի ըսկրգներին կատարված ձայնագրությունների մասին է, որոնց մեջ առանձնանում են մախ Ն. Թաշչյանի և հետո՝ Կոմիտասի իրագործած ամենավատահետի և արժեքավոր գրառումները: Հենվելով թաշչյանական ձայնագրությունների երաժշտաոճական բնույթյան վրա, հեղինակը եկել է այն համոզման, որ Նարեկացու «Աչքն ծովի ծով» և «Հաւուն, հաւուն» տաղերում արտացոլված է 12—13-րդ դարերի հայ երգատեղծության-երգեցողության կիլիկյան երաժշտական նուրբ ճաշակը: Հետևաբար, դրանք վերանայվել, վերաեղանակավորվել են Կիլիկիայում ըստ նոր գեղարվեստական պահանջների, թեև պահպանել են մեծ բանաստեղծի մեղեդիական ոճի մի քանի էական գծերը (էջ 109): Ծատ բան են հուշել Նարեկացու տաղերի ներկա հետազոտողին Կոմիտասի ձեռագրերը, որոնք վկաներն են հայ երգարվեստի ճյուղերի, ոճերի և տեսակների լավագույն գիտակի դժվարին ու ունեւնների՝ «մեղեդիական կերպարի ավելի հարագատ դրսևորմանը հասնելու նպատակով» (էջ 113): Կոմիտասի ձեռագրերի և խազավոր գրչագրերի ընձեռած արտաքին տվյալների համեմատությունը թույլ է տվել Թահմիզյանին ճշտելու և լրացնելու «Սայլն այն իաջներ» տաղի նախնական կառուցվածքն ու ծավալը:

Մենագրության երրորդ գլուխը կարծես կամար է ստեղծում առաջինի հետ: Սակայն ի տարբերություն առաջին գլխում պարփակված պատմական ակնարկի, այստեղ շեշտը դրված է տաղային արվեստի զուտ երաժշտական բաղադրիչի նախապատրաստության և հետագա զարգացման առանձնահատուկ գծերի վերլուծության վրա: Առհասարակ աշխատությունը խարսխվում է նախնական հարցադրումների աստիճանական ընդլայնման սկզբունքի վրա, որը քանի գնում, խորանում և մանրամասնվում է:

Ընթերցողներից շատերին հավանաբար ծանոթ են երկրորդ գլխի ենթավերնագրերը, որպես նախորդ տարիներին Ն. Թահմիզյանի կողմից լույս ընծայած ինքնուրույն հոդվածների խորագրեր: Այստեղ, սակայն, դրանք շարադրված են վերամշակված, ամփոփ տարբերակով, լրացված՝ բազմաթիվ նոր տվյալներով ու համեմատություններով: Այդ նյութի ներգրավումը ավելի ցցուն է դարձնում այն խնդիրները, որոնց լուսաբանմանը ենթարկված է ողջ շարադրանքը: Ահա այդ խնդիրներից հիմնականը. երգաչ-

նության սկզբունքի դրսևորման բնույթումը վաղ միջնադարի ծանր և զարդոյորուն երգերից (ներառյալ հայոց հնագույն աղոթամատույցի, հանդիսավոր օրերի կանոնագրությունների ոլորում եղանակները, հնագույն Սաղմոսարան-Ժամագրքին կապված երգեցողությունները և այլն) մինչև «մեղեդիական նոր (ութձայնի հին համակարգի կաշկանդումներից ձերբազատված) ոճի բյուրեղացումն ու երաժշտական բովանդակության կազմակերպման ձևերի բարդացումը» 11—15-րդ դարերի տաղերգուների ստեղծագործություններում (էջ 118—119):


Երևի չարժե ամենայն մանրամասնությամբ անդրադառնալ երրորդ գլխի բովանդակությանը, թողնելով ընթերցողին ինքնուրույն դատելու նրա արժեքների մասին: Ասենք միայն, որ այստեղ գետնդված են հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստի լավագույն նմուշները (նոտային օրինակներով), նրանց համակողմանի վերլուծությամբ, ինչպես և այդ նմուշները ըստեղծող երաժիշտ-բանաստեղծների կյանքին ու գործունեությանը վերաբերող հետաքրքրական տվյալներ: Հնգնելով իրենց ժամանակվա համար չափանմուշային կոթողներ հանդիսացած այդ երկերը, հեղինակը բնորոշում է մի շարք կարկառուն շարականագիրների ու տաղերգուների տեղը ու դերը ինչպես հայ երաժշտության պատմության մեջ ընդհանրապես, այնպես էլ տաղային արվեստում մասնավորապես:

Եզրափակման մեջ ամփոփելով մենագրության հիմնական դրույթները, հեղինակը ընդգծում է, որ սպառված չի համարում իր առջև դրված խնդիրները, քաջ գիտակցելով, որ ներկա աշխատությունը միջնադարյան երաժշտաբանաստեղծական հարուստ արվեստի ուսումնասիրության հետ կապված բազմապիսի կնճոռոտ հարցերի հետագա լուսաբանման նախապայմաններից մեկն է: Իսկ նման հարցերը շատ են: Դրանց թվին են պատկանում առկա ձայնագրյալ ժողովածուներում համապատասխան վստահելի նմուշների հայտնաբերման, դրանց հեղինակային պատկանելության ուրոշման, ինչպես և հիշյալ ժողովածուների ու միջնադարյան խազավոր ձեռագրերի հետազոտության հիման վրա միաձայնային տարբեր կոթողների վերականգնման և ուսումնասիրության հետ կապված բազմապիսի կնճոռոտ հարցերը (319):

Ի դեպ, հեղինակային պատկանելության խնդրի մասին, Տվյալ խնդիրը, ավելի ճիշտ՝ հեղինակային տիպերի խնդիրը միջնադարյան կանոնական մշակույթի պայմաններում, հանդիսանում է միջնադարագիտության առաջօր քիչ հետազոտված և հետագա լայն

ուսումնասիրման կարոտ հանգուցային հարցերից մեկը, որը միանշանակ չէ և տարբեր ազգային մշակույթների պայմաններում լուրովի է դրսևորվում: Ն. Թահմիզյանը տարբեր առիթներով բազմիցս անդրադառնում է այդ խնդրին գրքի էջերում: Սակայն, թեև անվիճելի են նրա դրույթները և ընդհանրացումները, մեր կարծիքով, միշտ չէ, որ մինչև վերջ համոզիչ են մի քանի որոշակի պնդումները, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է 5—6-րդ դդ. հայ շարականագիրներին վերագրվող երաժշտական հեղինակումներին: Այստեղ թերևս

դեռ շատ բան տակավին ստուգելի է մնում: «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5—15-րդ դարերում» մենագրությունը, անկասկած, հանդիսանում է վաստակաշատ երաժշտագետի նոր գիտական նվաճումը: Այն, մեր կարծիքով, ամփոփում է նրա գիտական քրտնաջան պրպտումների մի մեծ փուլը: Հանդիսանալով ընդհանրացնող բնույթի խորը ուսումնասիրություն, այն նորովի է լուսաբանում հայ միջնադարյան երաժշտության լայն համայնապատկերը և այդ խորքի վրա փայլող Գրիգոր Նարեկացու երաժշտաբանաստեղծական հանճարը:





ՌԱՖԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՄԻԱՐԱՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻՒԻԿՅԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ (11—14-ՐԴ ԴԱՐԵՐ) *

12-րդ դարի 60-ական թվականների կեսերից մինչև դարավերջն ընդգրկող 30-ամյա շրջանում հայ-հունական միարարական բանակցություններում որպես հիմնական գործող անձինք հանդես են եկել հայկական կողմից Ներսես Ծնորհալի (1166—1173 թթ.) և Գրիգոր Տղա (1173—1193 թթ.) կաթողիկոսները, ինչպես նաև Տարսուցի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին (1175—1198), իսկ հունական կողմից՝ բյուզանդական կայսրերը և պատրիարքները, մասնավորապես Մանվել Կոմնենոս կամ Կիո Մանվել (1143—1180 թթ.), Իսահակ Բ Անգելոս (1185—1195 թթ.) և Ալեքսեյ Գ Անգելոս (1195—1203 թթ.) կայսրերը։ Նրանց միջև կայացած թղթակցությունից մեզ են հասել մոտ երկու տասնյակի չափ նամակներ և զուտ դավանաբանական բնույթի թղթեր, որոնք առատ լույս են սփռում միության խնդրի շուրջը կատարված իրադարձությունների վրա։ Այդ առումով պակաս կարևոր չեն նաև այն նամակները²³, որ փոխանակել են Գրիգոր

Տղան և Հաղպատ-Սանահինի վարդապետները։

Վերլուծել մեկ առ մեկ այս ամենը, ինչպես նաև հետևել բանակցությունների ողջ ընթացքին, հարկ չկա։ Միության խնդրում մեր կարծիքով կարևոր է պարզել հետևյալ հարցերը՝

— միարարական բանակցությունները ծնող շարժառիթները, այլ կերպ ասած, կողմերից յուրաքանչյուրը ինչպիսի՞նչ նպատակներով էր ձեռնամուխ եղել դրանց և ի՞նչ սպասելիքներ ուներ դրանցից։

— կողմերի բռնած դիրքորոշումը և սրբան հարակից այն բախումները, որ տեղի ունեցան հայ հոգևորականության կիլիկյան և հյուսիսային (Հյուս. Հայաստանի) հատվածների միջև։

— 30-ամյա հայ-հունական բանավարությունների արդյունքներն ու հետևանքները։

Հայ-հունական միարարական բանակցությունները ծնող շարժառիթների վերաբերյալ մասամբ արդեն խոսվել է Գրիգոր Գ Պահլավունու կապակցությամբ։ Ուղղակիորեն ասած, Բյուզանդիան ձգտում էր «իրացնել» իր համար բարենպաստ այն ռազմա-քաղաքական իրադրությունը, որ ստեղծվել էր Հայկական Կիլիկիայում 12-

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1987 թվականի № № 5—2-ից։

²³ Ն. Ծնորհալի, Ընդհանրական թուղթ, էջ 307—329։

րդ դարի 60-ական թվականներին: Բայց կար նաև մեկ այլ կարևոր գործոն: Ինչպես արդեն ասվել է, 1054 թ. տեղի էր ունեցել վերջնական խզում հունական և հոռոմեական եկեղեցիների միջև: Այդ իրադարձությունից անցել էր մեկ դար, որի ընթացքում կողմերը ժամանակ առ ժամանակ բանակցությունների, իսկ ավելի ճիշտ բանակցիվների մեջ էին մտնում միմյանց հետ՝ ձևականորեն միությունը վերականգնելու, իսկ իրականում մեկ-մեկու նկատմամբ գերիշխանության հասնելու նպատակով: Հունա-հոռոմեական մերձեցման նման մի փորձ էլ ահա կատարվում էր մեզ հետաքրքրող ժամանակահատվածում (12-րդ դարի 60-ական թթ.): Կ. Պոլսում Մանվել Կոմնենոսի և պապական պատվիրակների միջև ընթացող բանակցությունների մասին որոշակի վկայություն²⁴ կա Ներսես Շնորհալի կաթողիկոսի՝ ճույն կայսեր 1167 թ. ուղարկած իր առաջին նամակում: Այդ բանակցությունները, ինչպես և սպասվում էր, արժանացան իրենց նախորդների բախտին: 1168 թ. կայացած Կ. Պոլսի հունական եկեղեցական ժողովը մերժեց հունահոռոմեական ունիան, Հռոմի առաջադրած երեք պայմանների անընդունելիության հետևանքով (Հռոմի Աթոռի գերագահություն և այլն)²⁵: Հենվելով այս փաստի վրա որոշակիորեն կարող ենք ասել, որ Բյուզանդիան միաժամանակյա միարարական բանակցություններ վարելով հոռոմեական և հայկական եկեղեցիների հետ, ձգտում էր ձեռք բերել վերջինիս հետ միության գործը՝ ուժեղացնելու համար Հռոմի հետ բանակցություններում սեփական դիրքերը:

Ինչ վերաբերում է հայկական կողմին, ապա նրա համար այդ բանակցությունները և՛ ստիպողական էին, և՛ ցանկալի: Ստիպողական էին, որովհետև դիմացինն էր դրանք իրեն պարտադրել: 1165 թ. Մամեստիայում Ն. Շնորհալու (դեռևս եպիսկոպոս) և Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ Ալեքս Դուքսի միջև հանդիպումը, որից էլ սկիզբ առան միարարական բանակցությունները, պատահական չէր, ինչպես կարծում է Մ. Չամչյանը²⁶: Բյուզանդական կողմից դա նախապատրաստված և ծրագրված քայլ էր, մի հանգամանք, որ ժամանակին չէր վրիպել Մ. Նալբանդյանի ուշադրությունից: «Անհայտ չէ հայերից, որ սուրբ Ներսես Շնորհալու ժամա-

նակ, ինչպես նաև նորա եղբոր Գրիգոր կաթողիկոսի ժամանակ, հունաց Մանվել կայսրը շատ և շատ ցանկանալով Հայոց եկեղեցու հունաց հետ միավորության, քացել էր մի շարունակ դավանաբանական գրագրություն այս առարկայի վրա...»²⁷:

Ինչպես ասացինք, այդ բանակցությունները նաև ցանկալի էին հայերի համար, որովհետև դրանց միջոցով հայ բարձրաստիճան հոգևորականությունը հույս ուներ մեղմել այն ազգային-կրոնական բռնությունները, որ պարբերաբար կիրառում էին բյուզանդական իշխանությունները կայսրության սահմաններում բնակվող հայության նկատմամբ:

Բացառված չէր, որ հայ կղերը թեև շատ փոքր, բայց սպասելիքներ ուներ հունական կողմից ողջախոհություն հանդես բերելու դեպքում, կարգավորել եկեղեցական խնդիրը և միասնական հույն-հայկական ճակատ հակադրել գնալով աճող սելջուկյան սպառնալիքին: Բայց սա, կրկնում ենք, թերևս առավել քիչ հավանական տարրն էր բանակցություններից հայկական կողմի ունեցած սպասելիքների մեջ: Իզուր չէ, որ ժամանակի հայ պատմիչները (Սր. Լաստիվերտցի, Մ. Ուոհայեցի, Սմբ. Գունդատար և այլք) թուրք-սելջուկյան հորդանների կողմից Մեծ Հայքի նվաճման մեջ ամենից առաջ և ամենից շատ միաբերան մեղադրում էին հայալուծման քաղաքականությունն որդեգրած Բյուզանդական կայսրությանը: Այնպես, որ ճիշտ չէր լինի անվերապահորեն պնդել, թե «Ներսես, վեհ և բարձր զգացումներով վառուած սիրտ մը, քրիստոնեության միաբարեկրթից իբր պայման կը նկատէր այդ չարիքին (կարդա՛ սելջուկյան), և անոր արդիւնատրման աշխատիլը իրեն նուիրական պարտք սեպելով, գործին կը ձեռնարկէր»²⁸: Հայերի կողմից այդ բանակցություններում և՛ հետապնդածը, և՛ սպասվածը ավելի քան համեստ էր: Ծառ ավելի ճիշտ կլիներ ասել, որ հայ հոգևոր հայրերն այդ բանակցությունները դիտում էին որպես միջոց, ժամանակ շահելու և խուսանալելու համար, Կիլիկիայում և նրա շուրջը իրադրության փոփոխման դեպքում (իհարկե՛ հոգուտ ռուբինյան իշխանապետության) ձեռքազատվելու բանակցություններից: Պատահական չէ, որ 30 տարվա ընթացքում հայ կաթողիկոսներից և ոչ մեկը (Ն. Շնորհալի, Գրի-

²⁴ Ն. Շնորհալի, Ընդհանրական թուղթ, էջ 117:

²⁵ Մ. Չամչյան, Հայոց պատմություն, Բ. Գ, էջ 134:

²⁶ Նույն տեղում, էջ 97:

²⁷ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու 4 հատորով, Բ. 1, Ե., 1945 թ., էջ 482—483:

²⁸ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ. Ա, էջ 1413:

գոր Տղա, Գրիգոր Ապիրատ) չգնաց Կ. Պոլիս՝ թեև բյուզանդական կողմից հրավերներ եղան:

Այժմ տեսնենք, թե բանակցություններում կողմերն ինչպիսի՞ դիրքորոշում ունեին: Սկսենք հունական կողմից: Այն, ինչպես արդեն ասվել է, միության խնդրում առավել շահագրգռված կողմն էր: Իսկ ինչպիսի՞ միության և ի՞նչ ուղիներով էր նա ձգգտում հասնել դրան: Ծանոթությունը հայ-հունական եկեղեցական միության խնդրին վերաբերող (հիշյալ 30 տարում) առկա ողջ փաստական նյութին երկմտելու տեղիք չի տալիս, որ սկզբից մինչև վերջ, այն է՝ 1165 թվականի Մամեստիայի հանդիպումից մինչև 1197 թվականին Ն. Լամբրոնացու վարած բանակցությունները Կ. Պոլսում, բյուզանդական կողմն անհարկի կերպով իրեն վերադարձել է հրամայողի և թելադրողի դերը: Ընդ որում իրեն հատուկ ավանդական ճկունությամբ Բյուզանդիայի աշխարհիկ և հոգևոր ղեկավարությունն անընդհատ փոխել է ճնշման ու հարկադրանքի երանգավորումը, կախված Փոքր Ասիայում տիրող ռազմա-քաղաքական իրադրությունից: Այսպես, բանակցությունների սկզբնական փուլում, երբ կողմերը դեռևս ծանոթանում էին մեկմեկու դիրքորոշմանը, բյուզանդացիները գերադասում էին հնարավորին չափ վարագուրել սեփական մտադրությունները՝ չնայած Կիո Մանվելի Հոռմկլա ուղարկված նամակներում քիչ չէին հունական գերակայության վերաբերյալ աներկմիտ ակնարկները: Դրանք թերևս կոչված էին ցրելու բանակցություններում հավասարության վերաբերյալ հայերի ունեցած պատրանքները, նախապատրաստելու նրանց, որպեսզի վճռական պահին վերջիններս հանկարծակիի չգային, երբ բյուզանդական կողմը ներկայացնելու լինեի իր պահանջները:

Նախնական ծանոթությունից հետո, որի ընթացքում բյուզանդական աշխարհիկ և հոգևոր ղեկավարությունը թյուր կարծիք էր կազմել Ներսես Ծնորհալու մասին, որպես միության անվերապահ կողմնակցի²⁹, Կիո Մանվելը որոշեց դեմ նետել դիվանագի-

տական չքմեղանքը և լույս աշխարհ հանել այն, ինչ բավական ծամանակ պահում էր իր ուղեղում և սրտում: 1172 թ. դեկտեմբերին, հերթական անգամ գալով Հոռմկլա, հունական պատգամավորները կայսեր կողմից Ծնորհալուն հանձնեցին մի փաստաթուղթ, որը կրում էր «Գլխակարգեալ խընդիրք առ ի Հոռոմոց առաքեալ ի թագաւորէն...» վերնագիրը³⁰: Սա բյուզանդական կայսեր կողմից Հայոց եկեղեցուն ներկայացված 9 կետանոց մի ամենամանրատկառ վերջնագիր էր, որի ընդունումը կնշանակեր Հունական եկեղեցու մեջ Հայ եկեղեցու անհետ տարրալուծում: Վերջնագրով նախատեսվում էր վերջինիս կողմից քաղկեդոնիկ դավանանքի, ծեսերի և տոնացույցի անվերապահ ընդունում, և ի լրումն այս ամենի հայոց կաթողիկոսը պետք է նշանակվեր բյուզանդական կայսեր կողմից. «Եւ զի ընդունեցիք զառաջարկութիւն կաթողիկոսին» միայն ի թագաւորէն Հոռոմոց»:

Վերջնագիրը բնականաբար չընդունվեց հայերի կողմից: 1173 թ. օգոստոսին մահացած Ծնորհալուն փոխարինած Գրիգոր Դ Տղան Կիո Մանվելից խնդրեց թեթևացնել ներկայացված պահանջները, ինչը և կատարվեց: 1177 թ. հունվարին Հոռմկլա հասան կայսերական և պատրիարքական նամակները, որոնցում արդեն Հայ եկեղեցուն ներկայացվում էր մեկ, բայց ամենագլխավոր պահանջը՝ ընդունել Բրիստոսի երկու բնության վերաբերյալ բանաձևը: Ինչո՞վ էր բացատրվում բյուզանդական կողմից ցուցաբերված այս «մեծահոգությունը»: Արդյո՞ք միայն կաթողիկոսական խնդրանքով և կամ բանակցությունները հաջող և արագ ավարտելու մտահոգությամբ: Բյուզանդական կայսրության գոյության ողջ ընթացքում նրա վարած քաղաքականությունը ոչ քաղկեդոնիկ եկեղեցիների նրկատմամբ եղել է ուղիղ համեմատական իր ռազմա-քաղաքական հզորությանը: Դրա լավագույն ապացույցը քննարկվող դրվագն էր: Խնդիրն այն է, որ 1170-ական թվականները կայսրության համար նշանավորվեցին մի շարք խոշոր ռազմական պարտություններով փոքրասիական թափառաբեմում: Հայկական Կիլիկիայի իշխան Մլեհը (1170—1175 թթ.) նվազագույնի հասցրեց բյուզանդական տիրապետությունը Կիլիկիայում, իսկ 1176 թվականին Մերսինի ֆեյդի Դակատամարտում Կիո Մանվելի կողմից գլխավորած բյուզանդական բանա-

²⁹ Նման կարծիքի ձևավորման գործում մեծ դեր էին խաղացել Կ. Պոլսի և Հոռմկլայի միջև բանագնացի դեր կատարող հույն հոգևորական Թեոփիանոսի միտումնավոր, Ն. Ծնորհալուն որպես հունական եկեղեցու ջատագով ներկայացնելու գեկույցները: Այդ մասին տես՝ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու 4 հատորով, հ. 1, էջ 488—485 և Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1421—1422 :

³⁰ Ն. Ծնորհալի, Ընդհանրական թուղթ, էջ 156—157:

կը Իկոնիայի սուրբանությունից կրեց մի այնպիսի կործանիչ պարտություն, որը շատերը որակեցին որպես երկրորդ Մանագլետոս: Դա վերջակետ դրեց դեպի Արևելք Բյուզանդիայի առաջխաղացման հուսահատ փորձերին: Անտարակույս հենց այս պարտությունների վրա էր խարսխված բյուզանդական «մեծահոգությունը»:

1179 թ. ապրիլին երկարատև նախապատրաստական աշխատանքներից հետո ի վերջո տեղի ունեցավ Հոռմկլայի եկեղեցական ժողովը, որը պետք է վերջնական պատասխան տար բյուզանդական կողմին: Այն կարելի է համարել հայ-հունական 30-ամյա բանավարությունների գագաթնակետը: Այդ ժողովին անհամբեր սպասում էին Կ. Պոլսում, այդ ժողովը խիստ բորբոքեց կրքերը հայ հոգևորականության շրջանում:

Հոռմկլայի եկեղեցական ժողովից մեզ են հասել երկու փաստաթղթեր, այն է կայսրին և պատրիարքին հղված ժողովական պատասխանի երկու օրինակները³¹: Այդ պատասխանը տարբեր կերպ է մեկնաբանվել հայ պատմագիտության մեջ: Ոմանք, հիմնականում Մխիթարյան միաբանության ներկայացուցիչները (Մ. Չամչյանց, Ա. Պալճյան, Հ. Կոզյան և այլք) այդ պատասխանի մեջ տեսնում են Քրիստոսի բնության վերաբերյալ հունական հայտնի բանաձևի, այն է՝ քաղկեդոնական դավանանքի լիակատար ընդունում: Իսկ ոմանք էլ (Ա. Տեր-Միքելյան, Մ. Օրմանյան և նրանց հետևորդները) գտնում են, որ Հոռմկլայի ժողովում հայ հոգևորականությունն ընտրել է «միջին ճամպան», ընդառաջ քալ կատարելով հունական կողմին: Կարծում ենք ճշմարտությանն ավելի մոտ են երկրորդ խմբի ներկայացուցիչները: Իրոք, պատասխանում բերված հետևյալ նախադասությունը՝ «Արդ խոստովանիմք համաձայն ձեզ ի Քրիստոսի անճառ միությունն երկու բնութեան տեսությոն...»³² բնավ էլ հունական բանաձևի կրկնությունը չէ:

Մեծ նախաձեռնողությամբ և արժանապատվությամբ բյուզանդական կողմին մատնացույց է արվում նաև այն հանգամանքը, որ ի սկզբանե Հայ Եկեղեցին եղել է ուղղափառ. «...կարելուր համարեցաք առաքել առաջի ձեր առ ի գիտել հաստատությամբ թե՛ ոչ նորոգ նմուտ ի մեզ ուղղափառությոնս, այլ ի հարցն առաջնոց իջանէ...»³³:

³¹ Ն. Ծնորհայի, Ընդհանրական թուղթ, էջ 181—199:

³² Նույն տեղում, էջ 198:

³³ Նույն տեղում, էջ 191:

Եվ վերջապես, մեր կարծիքով, ամենագլխավորը հետևյալն է: Պատասխանի մեջ Քաղկեդոնի ժողովի մասին չկա և ոչ մի հիշատակում, նույնիսկ ակնարկ: Խոսելով նրան նախորդած երեք տիեզերական (Նիկիայի, Կ. Պոլսի, Եփեսոսի) և մի շարք այլ (Ամկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի և այլն) եկեղեցական ժողովների մասին, հայ հոգևորականությունը շեշտում է, որ հայրենի դաստիարակության մեջ այդ ժողովներում ընդունված որոշումներով «ուղեկից լինիմք զգուշացեալք առ ի յոչ խոտորել յաջ և ոչ յահեակ յարքունական պողոտայէն զոր ցուցին մեզ»³⁴: Ինչպես տեսնում ենք, հայրենի դաստիարակության մեջ (կարդա՛ Հայ Եկեղեցու դավանանքի և ծեսերի մեջ) հայոց հոգևոր հայրերը քաղկեդոնյան որոշումների համար տեղ չեն թողնում, իսկ դրանց ընդունումն էլ անուղղակի կերպով որակում են որպես խոտորում «յարքունական պողոտայէն»: Այսքանից հետո կարծում ենք, որ առնվազն անհամոզիչ են հնչում Ա. Պալճյանի այն տողերը, թե Հոռմկլայում հայ հոգևորականության ներկայացուցիչները «գրկատարած ընդունեցան Քաղկեդոնի ժողովը...»³⁵: Հոռմկլայում Քաղկեդոնի ժողովը գրկատարած չընդունելու անուղղակի վկայություն չէ՞ին արդյոք նաև այն կրոնական բռնությունները, որոնց դիմեց Բյուզանդական կայսրությունը հայերի դեմ Մանվել Կոմնենոս կայսեր մահվանից (1180 թ.) անմիջապես հետո:

Հայ-հունական միության ձախողումից և Մանվել Կոմնենոսի մահից հետո «անկաւ կրկին ցրտութիւն ի մէջ յունաց և հայոց՝ և մրցումըն հակառակութեան...»³⁶: Մանվել Կոմնենոսի հաջորդները և մասնավորապես Անգելոսների կայսերական նոր հալածողության հիմնադիր Իսահակ Բ Անգելորս (1185—1195 թթ.), աչքի առաջ ունենալով միության խնդրում դիվանագիտական ուղու ձախողումը, որոշեցին այն լրացնել իրենց շատ ավելի հարիր բռնի ուժի կիրառմամբ: Կայսրության տարածքում հայերի բռնի դավանափոխության մասին մենք իմանում ենք Գրիգոր Տղայի և Իսահակ Բ Անգելորսի միջև եղած նամակագրությունից³⁷:

³⁴ Նույն տեղում, էջ 183:

³⁵ Ա. Պալճյան, նշվ. աշխ., էջ 48:

³⁶ Մ. Չամչյանց, Պատմություն հայոց, հ. 9, էջ 135:

³⁷ Հ. Բարթիկյան, Նոր Այություն Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, Ե., 1958 թ., էջ 289, հմմտ.

12-րդ դարում հայ-հունական եկեղեցական միության վերջին փորձն արվեց 1196—1197 թթ., կապված հայկական Կիլիկիայի իշխանապետ Լևոն Բ-ի թագադրման հետ: Վերջինս թագ ստանալու խնդրանքով դիմել էր Հռոմի պապին և գերմանական կայսրին: Ձգտելով առաջ անցնել Արևմուտքից՝ բյուզանդական կայսրը Ալեքսիոս Գ Անգելոսը (1195—1203) 1196 թ. ականակոտ մի թագ ուղարկեց Լևոն Բ-ին, ասելով, որ «Հռոմեացիների թագը մի դնիր քո գլուխը, այլ մերը դիր, որովհետև մեզ ավելի մոտիկ ես, քան Հռոմին»³⁸: Բյուզանդական արքունիքն իր այս աներկմիտ քայլով նպատակ էր հետապնդում ձեռք բերել մի այնպիսի ուժեղ դաշնակցի, ինչպիսին էր 12-րդ դարի վերջին իր հզորության գագաթնակետին հասած ռուբինյան պետությունը: Այդ դաշինքը Բյուզանդիայի համար խիստ ցանկալի էր թե՛ Իկոնիայի սուլթանության և թե՛ հատկապես լատին Արևմուտքի դեմ հաջող պայքար մղելու համար, քանի որ վերջինին հետ հարաբերությունները խաչակրաց երկրորդ արշավանքից (1147—1149 թթ.) սկսած հարաճուն կերպով վատանում էին, ընդունելով ավելի ու ավելի չարագուշակ բնույթ:

Ալեքսիոս Գ Անգելոսը թագի առաքման հետ միաժամանակ վերստին արժարժեց եկեղեցական միության խնդիրը: Որպես հետևանք 1197 թվականի սկզբին Ներսես Լամբրոնացու գլխավորած պատգամավորությունը մեկնեց Կ. Պոլիս՝ քննելու այդ հարցը: Բյուզանդական մայրաքաղաքում տեղի ունեցած թեժ բանավեճերը ցույց տվեցին, որ միությունն այս անգամ էլ չի կայանալու:

Ընդունված է ասել, որ բանակցությունների ձախողման պատճառը բյուզանդական կողմի մեզ քաջ ծանոթ մեծապետական դիրքորոշումն էր: Իրոք, կայսրության աշխարհիկ և հոգևոր առաջնորդների անսահման ամբարտապանությունը խանգարեց նրանց բանակցություններ վարելու՝ հաշվի առնելով իրական կացությունը. Լևոն Բ-ի Կիլիկիան այն երկիրը չէր, որի հետ խաչակիրների կողմից իր ջախջախման նախօրյակին գտնվող Բյուզանդիային հնարավոր լիներ խոսելու ավագի և առավել ուժեղի իրավունքով: Բայց սա ճշմարտության միայն կեսն է:

Գալով միության խնդրում հայկական կողմի ունեցած դիրքորոշմանը՝ Շնորհալուց մինչև Լամբրոնացի, եթե չասենք, որ այն տրամագծորեն հակառակ էր բյուզանդականին, ապա համեմայն դեպք ընդհանուր գրեթե ոչինչ չունեւ նրա հետ: Թերևս միակ ընդհանուրը երկու կողմերի դիրքորոշման մեջ այն էր, որ երկուսն էլ միության հարցում ամենից առաջ և ամենից շատ հետապնդում էին քաղաքական շահը: Բոլոր երեք տասնամյակների ընթացքում Հայ Եկեղեցին ապարդյուն կերպով ձգտում էր հայ-հունական բանավարությունների հիմքում դնել կողմերի հավասարության և իրավունքների փոխադարձ հարգանքի սկզբունքը: Այն կարմիր թելի մման անցնում է Հայ Եկեղեցու երեք ականավոր գործիչների միության խնդրին վերաբերող բոլոր թղթերով: Խոսենք փաստերով:

1167 թ. Կիո Մանվելին ուղարկած իր առաջին իսկ մամակում Շնորհալին մեծ արժանապատվությամբ, աշխատելով չըզրգոել դիմացինին, ուղղակի և աներկմիտ կերպով հասկացնել է տալիս բյուզանդական կայսրին, որ նա ձեռնպահ մնա ուժի կիրառումից, Հայ և Հույն Եկեղեցիների հարաբերությունները չդիտի որպես ծառայի և տիրոջ հարաբերություններ և որ, վերջապես, միության խնդրի լուծումը հնարավոր է ոչ թե միակողմանի, այլ միմիայն երկուստեք փոխգիշտումներով. «Այլ և զայս ես հայցեմք՝ ի ներող քաղցրութենէ ձերմէ, զի թէ տնօրինեսցէ Աստուած խօսել մեզ առ միմեանս, մի եղիցի որպէս տեսուն առ ծառայս և ծառայից առ տեսարս. զի դուք զմերն պակասութիւն դնէք մեր առաջի, և մեք ոչ համարձակիմք ի ձերոց ինչ՝ յորոց զաղթակղիմք, ծանուցանել ձեզ»³⁹:

Ահա հենց այս և մնան այլ տողերի մեջ է Հայ Եկեղեցու և հայ մշակույթի մեծ երախտավոր Ներսես Շնորհալու հոգու հանգանակը: Այդ դիրքերում նա մնաց մինչև իր կյանքի վերջը, և բոլորովին զուր են այն մարդկանց ջանքերը, ովքեր միտումնավոր կերպով, աղավաղելով ու զանց առնելով փաստերը և նույնիսկ կեղծիքի առջև կանգ չառնելով, դարեր շարունակ (Թերթիանոսից ու Գալանոսից մինչև Ա. Պալմյանն ու Հ. Կոզյանը) ձգտել են նրան ցույց տալ որպես հունական և... նույնիսկ Հռոմեական Եկեղեցիների հետ Հայ Եկեղեցու անվերապահ միավորման՝ ասել է ձուլման կողմնակցի. «Ներսէսի զգացած միութենական ձգտումը՝ ճշմարիտ քրիս-

Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վեներիկ, 1862 թ., էջ 183:

³⁸ Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 120:

³⁹ Ն. Շնորհալի, Ընդհանրական թուղթ, էջ 117:

տոնէի անկախ զգացումն էր, և չենք գիտեր թէ ինչպէս անոր մէջ ոմանք լուսնաւանութիւն տեսան, և ոմանք հոռոմեադաւանութիւն գտան: Ներսէս կրնար մտածել, որ հայերը միութեան սիրոյն ինչ ինչ գիշողութիւններ կարենան ընել, բայց փոխադարձ գիշողութիւններ, և ոչ թէ Հայ Եկեղեցին Յոյն Եկեղեցիին մէջ ընկղմելու ենթադրութիւն»⁴⁰:

Միութեան խնդրում Գրիգոր Տղան և Ներսէս Լամբրոնացին շարունակեցին Ծնորհալու գործը: Դրա լավագոյն վկայությունը նրանց գլխավորությամբ 1179 թ. տեղի ունեցած Հոռոմկալի ժողովն էր, որի մասին արդեն խոսվել է: Այդ ժողովը, որի գումարմանն իսկ դեմ էին Հյուսիսային Հայաստանի, այն է՝ Հաղպատ-Սանահինի հոգևորականները, է՛լ ավելի սրեց հարաբերությունները նրա և կիլիկյան բարձրաստիճան հոգևորականության միջև: Վերջինս անարդար կերպով մեղադրվում էր քաղկեդոնականությանը հարելու մէջ: Բայց Գրիգոր Տղայի կողմից Գրիգոր Տուստերդուն՝ Սանահինի միաբանության առաջնորդին ուղղված նամակում կան տողեր, որոնք անկախ որևէ հանգամանքից, կոչված են ցրելու ամեն մի կասկած հայոց կաթողիկոսի կողմից Հայ Եկեղեցու դարավոր դավանանքից հրաժարվելու վերաբերյալ. «Զհաղկեդոն ոչ գիտեմ, և ոչ զկոնստանդնուպոլսոս... Զորէնսն նորա ոչ գիտեմ, և դատող մեղաց նորա ոչ լինիմ ՚ի վկայութենէ այլոց»⁴¹:

Վերևում ասվածի համար որպէս անուղղակի վկայություն կարող է ծառայել նաև այն, որ Հոռոմկալի ժողովից և Մանկել Կոնստանդինոպոլսի մահից հետո հայերի դեմ Բյուզանդիայի վերսկսած կրոնական հալածանքները դադարեցնելու հոգսով, հայոց կաթողիկոսը օգնության խնդրանքով դիմեց Հռոմի Դոմինիոս Գ պապին⁴²: Կարծում ենք, այսքանը բավական է միութեան խնդրում Գրիգոր Տղայի գրաված դիրքի վերաբերյալ ճիշտ կարծիք կազմելու համար:

Գալով Ներսէս Լամբրոնացուն, պետք է ասենք, որ նա Հայ Եկեղեցու բոլոր ժամանակների առավել գործունէյա, առավել ինքնատիպ և զարգացած դեմքերից մեկն է: Նա մի ուժեղ անհատականություն էր, որն առնվազն մի գլուխ բարձր էր կանգնած իր դարից ու շրջապատից: Իսկ բոլոր նրանք, սա արդեն անառարկելի ճշմարտություն է, ովքեր առաջ են անցնում ժամանակից,

«քնականաբար» չեն ներվում ետ մնացողների կողմից և քարկոծվում են: Բացառություն չէր նաև Լամբրոնացին:

Միութեան խնդրում Լամբրոնացու գրված դիրքորոշման մէջ կարելի է հանդիպել ամենատարբեր և մույնիսկ ամենահակասական դրսևորումների: Այսպէս, իր հռչակավոր «Ատենաբանության» մէջ, որը քրիստոնեական լայնախոհության, համամարդկային սիրո, անխտիր բոլոր ժողովուրդների բարքերի ու ավանդույթների հանդէպ խորը հարգանքի մի անգուցական հուշարձան է, նա դրվատանքով է խոսում հայոց Եզր կաթողիկոսի (630—641 թթ.) մասին⁴³, որն ինչպէս հայտնի է, 633 թվականին Կարնո եկեղեցական ժողովում, Հերակլ կայսեր հետ բանակցություններից հետո ընդունեց քաղկեդոնականություն: Քիչ հետո, արդեն նա զայրույթի պաքներ է ուղղում նրանց դեմ, ովքեր Հայ Եկեղեցին բաժանեցին հունականից, «Ուստի և գտանք մեմ գոսս»՝ թէպէտ սուրբս և իմաստունս, սակայն ոչ ՚ի սիրոյն օրենս ճշմարտութեամբ վայելողս որք ոչ վարկանէին իւրեանց լանցանս՝ զմիութեան եկեղեցոյ Քրիստոսի սնտի խորհրդով քակտումն. ուստի և լանդգնաբար ՚ի մոյն մխեցան»⁴⁴:

Եթէ ասվածին ավելացնենք նաև արդեն հիշատակված «Վրացական» ակնարկը, ապա թվում է, թէ ամեն ինչ պարզ է. Լամբրոնացին հոգով ու սրտով քաղկեդոնական է և պատրաստ է Հայ Եկեղեցին «ընկղմելու» հունականի մէջ: Բայց... Լամբրոնացին Լամբրոնացի չէր լինի, եթէ այդքան հեշտ ու արագ ընկալվեր:

Հոռոմկալի ժողովից և Մանկել կայսեր մահից հետո, երբ հայ-հունական միութեան ճախողումն ակներև էր, Տարսուզի արքեպիսկոպոսը Ոսկան անունով ոմն հույն ճգնափորի գրած նամակում այդ ճախողման մէջ մեղադրում է բյուզանդական կողմին: Իրեն հատուկ շիտակությամբ ու ցատուով նա հույների երեսովն է տալիս նրանց որդեգրած մեծապետական և «խորշեցնող» դիրքորոշումը. «...մի է ՚ի Քրիստոս դաւանութիւն լատինացոց եկեղեցւոյն և հելլինացոցն. ՚ի նոսա ընդէր խառնեցան Հայք՝ և ՚ի ձէնջ խորշեցան: Տեսանէ՛ս. զի մրցելոյ խորշեցուցանէ և ոչ թէ առ դաւանութիւն թերի երկիւն»⁴⁵: Առանց չափազանցության կարելի է հիշյալ նամակը⁴⁶

⁴⁰ Ընտիր մատենագիրք, էջ 158:

⁴¹ Նույն տեղում, էջ 159:

⁴² Ն. Լամբրոնացի, Խորհրդածությունս սրբազան պատարագի, Երուսաղեմ, 1842 թ., էջ 28:

⁴³ Նույն տեղում, էջ 21—27:

⁴⁰ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1414:

⁴¹ Ընտիր մատենագիրք, էջ 50:

⁴² Տե՛ս Վարդան Արևելցի, էջ 184:

որակել որպես մեղադրական ճառ՝ ուղղված Հայ Եկեղեցու նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականության դեմ:

Իսկ արդեն հիշատակված 1197 թվականի Կ. Պոլսի բանակցությունների հետևանքով բյուզանդական կողմի հանդեպ Լամբրոնացու ունեցած վերաբերմունքը կարելի է բնորոշել լույ մեկ բառով՝ արգահատանք: Դրա լավագույն ապացույցը հենց բանակցությունների վերջում կայսերն ուղղված նրա խոսքերն էին. «Այդպես էք արարեալ, որ նաևիր քննութեամբ հաշխարհս թայս Աթոռոյս պատառեալ էք և ուրոշեալ»⁴⁷:

Արդ, ինչո՞ւմ էր Լամբրոնացու դիրքի դժվարվերծանելիությունը: Մեր կարծիքով դա արդյունք էր այն խիստ բարդ իրադրության, որի մեջ գործում էր նա: Մելջուկյան ահավոր սպառնալիքն էր ստիպել կիլիկիահայ բարձրաստիճան հոգևորականությանը թույլ տալու իրեն ներքաշելու հայհունական միաբարական բանավարությունների մեջ, բանավարություններ, որոնց դեմ էր արևելահայ հոգևորականությունը: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ խաչակրաց երրորդ արշավանքի (1189—1196 թթ.) ընթացքում և նրանից հետո խիստ ուժեղացավ Հայկական Կիլիկիայի արևմտյան կողմնորոշումը, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի իրարամերժ ուժերի հետ էր ստիպված գործ ունենալ Լամբրոնացին միության խնդրում, որոնք բնականաբար չէին կարող չազդել նրա դիրքորոշման վրա: Այդ ամենով հանդերձ Ներսես Լամբրոնացին մեզ ներկայանում է որպես մեծ հայրենասեր, որի համար հայրենասիրությունը ոչ թե միաբարական բանակցություններում ամբարտալվան բյուզանդացիների երեսին դուրը չըխկացնել էր, կամ էլ ամեն մի ազգային ջատագովությունը, այլ միության խնդրին վերաբերող բոլոր թեր և դեմ գործոնների մանրակրկիտ և տանջալից հաշվեկշռումը ի շահ գերագույն խնդրի՝ ռուբինյան պետականության պահպանման ու ամրապնդման և սեփական ժողովրդի գոյության ապահովության:

Միության խնդրի կարևորագույն կողմերից մեկն էլ այն բախումն էր, որ առաջ եկավ հայ հոգևորականության կիլիկյան և արևելյան (Մեծ Հայք) հատվածների միջև: Վերջինս դեմ էր քաղկեդոնական Եկեղեցու հետ որևէ հարաբերություն ունենալուն, իսկ եթե մեծ դժկամությամբ էլ ստիպ-

ված էր ընդունելու նրա հետ Հռոմկլայի բանակցությունների փաստը, ապա պահանջում էր դրանցում բացարձակապես ոչ մի զիջում չկատարել հույներին: Որոշ տեսակետից արևելյան վարդապետները թերևս ճիշտ էին. դարեր շարունակ Բյուզանդիան թե՛ ուժով, թե՛ նեղությունից ձգտել է կլանել Հայ Եկեղեցին և հետևաբար չարժեք գործ ունենալ նրա հետ: Բայց կիլիկեցիները պատմության դասերը յուրացրել էին արևելյան վարդապետներից ոչ վատ և հրաշալի հասկանում էին նաև միաբարական բանակցություններում կայսրության հետապնդած իսկական նպատակները: Պարզապես ռուբինյան պետականությունը Բյուզանդիայի թշնամական քայլերից զերծ պահելու և կայսրության տարածքում ապրող բազմահազար հայության դեմ կրոնական բռնությունների տեղիք չտալու հոգն էր ստիպում կիլիկեցիներին չհրաժարվելու բանակցություններից: Չնայած հայկական Կիլիկիայի և Մեծ Հայքի քաղաքական պայմանների հայտնի տարբերությանը, արևելյան և մասնավորապես Հաղպատ-Սանահինի վարդապետները Դավիթ Քոբայրեցու և Գրիգոր Տուտեղդու գլխավորությամբ պարտավոր էին հանդես բերելու իրադրության ըմբռնողություն: Փոխանակ անհարկի հարձակումներ գործելու Գրիգոր Տղայի և Ներսես Լամբրոնացու վրա և ավելորդ խռովություններ առաջացնելու Հայ Եկեղեցու ներսում, նրանց պարտքն էր սատարել Հռոմկլային և համատեղ ջանքերով լուծել Հայ Եկեղեցու առջև ծառացած խնդիրները: Սակայն պարփակվածության և լճացածության այն իրավիճակը, որ տիրում էր Մեծ Հայքում, խանգարեց նրանց ճիշտ գնահատելու իրերի դրությունը: Իրավացի էր Գրիգոր Տղան, երբ Գրիգոր Տուտեղդուն ուղարկած նամակում, նկարագրելով կայսրության հողերում հայ բնակչության և հայ հոգևորականության հանդեպ կատարվող անլուր բռնությունները, դրանցում մեղադրում էր նաև Տուտեղդուն, քանի որ վերջինիս պնդմամբ բանակցությունները ձգձգելու հետևանքով էին հույները դիմել այդ քայլին⁴⁸:

Հայ հոգևորականության երկու հատվածների միջև սուր տարաձայնության մյուս աղբյուրն էր միության խնդրի հետ սերտորեն առնչվող և նույնիսկ նրա մասը կազմող Հայ Եկեղեցու ծեսերի հարցը:

Ահա հենց ժամանակի հրամայական պահանջին էլ ընդառաջ գնալով Գրիգոր

⁴⁷ Հակոբոս Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1895 թ., էջ 386:

⁴⁸ «Արարատ», 1893 թ., էջ 242—248:

Տղան և հատկապես Ներսես Լամբրոնացին ձեռնարկեցին մի շարք ծիսական բարեփոխումներ, որոնք խիստ թշնամաբար ընդունվեցին ձորագետցիների կողմից: Այդ բարեփոխումները, որոնք Տուտեորդու և Արա հետևորդների կողմից հանիրավի որակվեցին որպես Հայ Եկեղեցու հունակաճացում, իրականում ոչնչով չէին խաթարում Արա ինքնությունը և կոչված էին դուրս մղելու այն եղծումները, որոնք ժամանակի ընթացքում թափանցել էին Հայ Եկեղեցու ծիսակարգը, ինչպես նաև ազատվելու այն ամենից, ինչը սպառել էր իրեն:

Առանձին-առանձին չխոսելով կատարված բարեփոխումների (շարժական գոհասեղան, եկեղեցական զգեստներ, երրորդ ամուսնություն և այլն), դրանց շարժառիթների ու նպատակահարմարության մասին, քանի որ միության խնդրում այս կետը լուսաբանված է առավել հաջող և անաչառ, մշտնաջարկ կարևոր հանգամանք: Եկեղեցական բարեփոխումների հարցը այն քչերից մեկն է, որ գրեթե տարակարծություններ չի առաջացրել միության խնդիրն ուսումնասիրողների շրջանում: Լամբրոնացու արդարացիությունն այստեղ ավելի քան ակնհայտ է: Իրոք, սեփական դիրքի իրավացիության հանդեպ խոր հավատը միայն կարող էր մղել Արա և Լևոն Բ-ին ուղղված իր մշանավոր «Թղթում» առաջարկել կազմակերպելու երես առ երես հանդիպում ձորագետցիների հետ, քննելու համար ցավոտ հարցը⁴⁹: Սակայն, դժբախտաբար ո'չ մտան հանդիպում տեղի ունեցավ և ո'չ էլ հաշտեցման որևէ այլ փորձ կատարվեց:

Կիլիկեցիների և մասնավորապես Լամբրոնացու նկատմամբ արևելյան վարդապետների անհանդուրժողականությունն ունեցավ այն տխուր հետևանքը, որ 1195 թվականին վերջիններս Բարսեղ Անեցի եպիսկոպոսին ընտրելով իրենց կաթողիկոս՝ էլ ավելի խորացրին ճգնաժամը Հայ Եկեղեցու ներքո:

Համառոտելով մեր խոսքը հայ հոգևորականության երկու հատվածների միջև միության խնդրով հարուցված տարաձայնության մասին, մշտնաջարկ հետևյալը: Հայ ժո-


ղովրդի ինքնության և Հայ Եկեղեցու անկախության պահպանումը՝ այն բարձրագույն նպատակն էր, որին հավասարապես ծառայում էին հայ հոգևորականության երկու հատվածներն էլ: Բայց այդ նպատակի իրականացման ուղիներն այնքան տարբեր էին արևելյան վարդապետների և կիլիկեցիների մոտ, որ անխուսափելիորեն հանգեցրին խոր թշնամանքի Արա և միջև: Ըստ այդմ միության խնդրի հանդեպ կողմերի ունեցած վերաբերմունքը լույս ափռեց մի այնպիսի կարևորագույն հարցի վրա, ինչպիսին էր հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու շահերի արժեքավորման և փոխհարաբերության հարցը: Արևելցիների մոտ այդ հարցը հանգում էր հետևյալ սկզբունքին՝ Եկեղեցին ամենից վեր, այն, ինչ լավ է Եկեղեցու համար, լավ է նաև ժողովրդի համար: Համեմայն դեպս Արա և միջև գործունեությունն այդ էր ասում: Կիլիկեցիների մոտ, ընդհակառակը, ժողովրդի շահերն առաջին տեղում են և հարկ եղած դեպքում հանդես է բերվում պատրաստականություն՝ Եկեղեցու շահերը ենթարկելու ժողովրդի շահերին: «Այսպիսով, սկզբունքորեն դեմ լինելով Հայ Եկեղեցու ավանդական դրույթների մեջ ու գործնականում փոփոխություն մտցնելուն, Լամբրոնացին միաժամանակ չէր կարող հանդուրժել, որ դրանց անադարտությունը պահպանվի ի հաշիվ քաղաքական ու տնտեսական կյանքի պահանջների: Եկեղեցին պետք է ծառայի հասարակության շահերին և ոչ թե ընդհակառակը»⁵⁰:

Ինչ վերաբերում է հայ-հունական միաբարական բանակցությունների արդյունքներին ու հետևանքներին, պետք է ասել հետևյալը: Հունական կողմի մեղքով այդ բանակցությունները լիակատար կերպով ձախողվեցին: Եվ հենց այդ ձախողումն էլ դարձավ դեպի լատինական Արևմուտքը Հայ Եկեղեցու, իսկ ավելի ճիշտ Արա և կիլիկյան հատվածի շրջադարձը պայմանավորող կարևոր գործոններից մեկը:

⁵⁰ Գ. Լ. Գրիգորյան, Հասարակական-փոխադասական միության Հայկական Կիլիկիայում, Ե., 1979 թ., էջ 180:

⁴⁹ Ընտիր մատենագիրք, էջ 245—246:





ԼՈՒԻ ԼԸԼՈՒՄ

Անդամ Կերվոյի աքբայության (Լյուքսեմբուրգ)

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՊԱՐԱԿԱՆՈՆ ԳՐՔԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ (1904) ԵՎ ՆՐԱ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1986)

1. ՀԱՐՑԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելական պարականոն գրքերի հումարեն առավել ամբողջական թղթածրարը կազմողներն են եղել Ռիշար Ադալբեր Լիպսիուսը և Մաքսիմիլիեն Բոնետը իրենց «Acta Apostolorum Apocrypha» աշխատության մեջ (1898, Լայպցիգ. վերատպություն՝ Դարմշտադտում, 1959, 3 հտ.): Ներկայումս, սակայն, մոր ձեռագրերի հայտնաբերման շնորհիվ, հնարավոր է ավելի լավը կազմել: Ծվեյցարացի և ֆրանսիացի պրոֆեսորների մի խմբի ղեկավարության ներքո զանազան հետազոտողներ եռանդուն կերպով զբաղվում են այդ աշխատանքով՝ հենց յկզբից ներգրավված լինելով կամ աստիճանաբար ներգրավվելով նրանց խմբի մեջ:

Corpus Christianorum-ը Տուրնհուտում (Բելգիա) նրանց համար բաց արեց Պարականոն գրքերի մի մատենաշար, որի առաջին երկու հատորները, որոնք լույս են տեսել 1983 թ., նվիրված են Հովհաննես առաքյալի նախնական գործերին: Երրորդը նվիրված է Հայր Զրաքյանի «Անկանոն Գիրք Առաքելականք» (Վենետիկ, 1904) հրատարակության առաջին մասի ֆրանսերեն թարգմանությանը՝ ամբողջացված զանազան ներածականներով: Այս հրա-

տարակությունը մեծարժեք և հիմնական մի աշխատություն է: Հիմնված լինելով միայն Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը եղած ձեռագրերի վրա (բացի Պրոխորոնի «Վարք Յովհաննես»-ից), հիշյալ հրատարակությունը հայերի և հայագետների տրամադրության տակ է դնում այդ ձեռագրերի զանազան հանդիսանում է հայերեն լեզվով առաքելական պարականոն գրքերին վերաբերող միակ ընդհանուր աշխատությունը, որին կարելի է դիմել այսօր: Պատիվն ու հաճույքն ունենալով անձամբ ճանաչած լինելու Հայր Զրաքյանին՝ այդ համեստ, աշխատասեր և հմուտ գիտնականին, որը խորապես կապված էր իր կրոնական իդեալին, ինչպես և հայ ժողովրդին ու նրա մշակույթին, ես ուրախ եմ, որ կարողանում եմ այս առթիվ իմ հարգանքը մատուցել նրան: Իր արժանավորությանը և առաքինությանը նա վստահություն ու հարգանք էր ներշնչում բոլորին:

Հայր Զրաքյանի հրատարակությանը, սակայն, եվրոպական լեզվով ոչ մի թարգմանություն չէր կցված: Աշխատության սկզբում կար միայն մի համառոտ ընդհանուր ներածական: Աշխատությունը չէր պարունակում առանձին ոչ մի ներածություն զանազան պարականոն գրքերի մա-

սին և, բացի այդ, չունենալ սուրբգրական մեջբերումների և ակնարկությունների վերաբերող որևէ հղում: Այս երեք բացերը հարկավոր էր լրացնել. և երրորդը մուկա՞ն անհրաժեշտ էր, որքան առաջին երկուսը, որովհետև պարականոն գրվածքները որոշակի կարևորություն են ներկայացնում Աստվածաշնչի և հատկապես Նոր Կտակարանի տեքստային ուսումնասիրության համար: Հայր Զրաքյանի աշխատության առաջին մասի (**Պետրոսի և Պողոսի, Անդրեասի, Հակոբոսի և Հովհաննեսի գործերը, Մատենաշար պարականոն գրքերի, հատ. Գ**) ֆրանսերեն թարգմանությամբ ես փորձել եմ կատարել անհրաժեշտ լրացումները: Հետագայում մի ուրիշ հատորով լույս կտեսնի հիշյալ աշխատության երկրորդ մասի՝ **Փիլիպպոսի, Բարթողիմեոսի, Թովմասի, Մաթևոսի, Հակոբոս Տյառնեղբոր, Թադևոսի, Նախանձահույզ Սիմոնի վկայաբանությունների** թարգմանությունը: Վերջին գլուխը՝ տասներկուերորդը, պարունակում է առաքյալների ցուցակներ: Այս երկրորդ հատորը, հակառակ թվով ավելի շատ գլուխներ ունենալուն, նվազ ծավալուն կլինի, քան առաջինը, որի մեջ **Պետրոսի և Պողոսի գործերի** որոշ հատվածներ, հատկապես սրա **Հայտնությունը**, ինչպես նաև **«Վարք Յովհաննու»**-ն, բաղկացած են բազմաթիվ էջերից: Ծառ չծավալվելու մտահոգությամբ՝ Հայր Զրաքյանը հրաժարվել է հրատարակել արդեն լույս տեսած մի քանի պարականոն տեքստեր, ինչպիսիք են՝ **«Թուղթ Կորնթացոցն առ սուրբ առաքելան Պաղոս և Գ թուղթ Պաղոսի առ Կորնթացիս, Հանգիստ սրբոյն Յովհաննու, Պատմութիւն վարդի սրբոյն Թեկղեայ, Առաքելական կանոնք»** և այլն: Պարականոն գրքերի մատենաշարի այս երրորդ հատորը, մյուս հատորի հետ, որը շուտով հաջորդելու է նրան, սուկ մեկնակետն է հանդիսանում այն ծավալուն աշխատանքի, որին ձեռնամուխ է եղել հայագետների խումբը: Այդ աշխատանքի նպատակն է ընդլայնել Հայր Զրաքյանի հրատարակության ձեռագրային հիմքը՝ ուսումնասիրելով Արևելքի և Արևմուտքի, հատկապես Երևանի, Երուսաղեմի, Լոնդոնի, Փարիզի և Վիեննայի գրադարանների համապատասխան բոլոր ձեռագրերը: Այս նախաձեռնությունը ներկայումս կազմակերպման ընթացքի մեջ է: Այն պետք է ի նկատի ունենա նաև, ձեռագրային ավելի լայն հիմքի վրա, հայերեն պարականոն գրքերի այն զանազան հատվածները, որոնք լույս են տեսել Զրաքյանի հրատարակությունից առաջ:

2. ՊԱՐԱԿԱՆՈՆ ԳՐՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՕԳՈՒՏ ԿԱՍՕԳՏԱԿԱՐ ԼԻՆԵԼԸ

Ամմիջապես, սակայն, հարկավոր է կատարել մի հիմնական հարցադրում. պարականոն գրքերի ուսումնասիրման համար արժե՞ կատարել գիտական այն մեծ աշխատանքը, որ ծավալվում է ներկայումս, և որի նախաձեռնողներից մեկը եղավ Հայր Զրաքյանը:

1986 թվականի մայիսի 18-ին Բենեդիկտյան հայրերից մեկը, որ իմ բարեկամն է և գրադարանավարը այն վանքի, որտեղ նա բնակվում է, ինձ հետևյալն էր գրում. «Ձեր առաքելական պարականոն գրքերը Տուրնհուտից հասան մեր ձեռքը, և ես դրանք կտրատեցի ցուցադրման դնելուց առաջ՝ ժամանակ առ ժամանակ մի հալացք գցելով ձեր թարգմանության վրա... Պետք է խոստովանեմ ձեզ, որ այդ կարգի գրականությունը ինձ շատ չի գրավում, և հետևաբար ես անկասկած հաճախակի շփում չեմ ունենա այդ հատորի հետ»: Այս առաջին հակազդեցությունը պարականոն գրականության հանդեպ, այս անհանդուրժողությունը (հեշտությամբ կարելի է խոստովանել այդ) լիովին հասկանալի է՝ նկատի ունենալով առասպելական և ուրվականային այն բազմաթիվ տարրերը, որոնք տեղ են գտել պարականոն գրվածքների մեջ: Ստույգ է, սակայն, որ եթե Հայր Զրաքյանը և Պարականոն գրքերի մատենաշարի հիմնադիրները կանգնած մնային այդ առարկության վրա, նրանք երբեք ձեռնամուխ չէին լինի այս աշխատանքին:

Կա ուրեմն մի այլ վերաբերմունք: Հիբրալի, այդ առաջին նամակից մի քանի շաբաթ հետո, ես ստացա 21 հունիս թվալիկի մի ուրիշ նամակ՝ գրված պր. Անտուան Գիյոմոնի կողմից, որը Փարիզում «Կոլեժ դը Ֆրանս»-ի դասախոս է: Դա շատ ջերմ մի նամակ էր, որի մեջ քրիստոնեության և վանականության հնագույն շրջանի պատմության այս ակնհայտ մասնագետը ինձ ասում էր, որ ինքը «պարականոն գրքերով վաղուց հետաքրքրվում է և «Բարձրագույն Ուսմանց Դպրոցում» իր «լսարանի ուսանողների հետ երկար տարիներ ուսումնասիրել» է դրանք Լիպսիուս-Բոնետի, ինչպես նաև (ասորական մի քանի գրվածքների համար) Վիլյամ Ռաթի հրատարակությունների հիման վրա: Նա իր ուրախությունն էր հայտնում, որ այժմ, շնորհիվ Պարականոն գրքերի մատենաշարի երրորդ հատորի, հնարավորություն ունի ծանոթանալու հայկական

թղթածրարին: Ինչո՞վ բացատրել այս երկրորդ վերաբերմունքը, որը որդեգրված է ժամանակակից գիտական աշխարհի կողմից, մի աշխարհ, որ սովորաբար շատ խստապահանջ է իր ուսումնասիրության առարկաների ընտրության մեջ՝ նախընտրելով դիմել այն գործերին, որոնք հետազոտման համար առավել արժեքավոր հետքեր են պարունակում իրենց մեջ: Անհրաժեշտ է այս մասին տալ մի կարճ բացատրություն:

Եթե այս վերջին տասնամյակներում աշխույժ հետաքրքրություն է առաջացել պարականոն գրականության նկատմամբ, դա մասամբ նրա համար է, որ այն կապված է արվեստի պատմության, հատկապես քանդակագործության և նկարչության, սրբաճակարների, ապակեճակարների և մանրանկարչության պատմության հետ: Մինչև ուշ միջնադար և նույնիսկ հետագայում էլ այդ գրականության թեմաները հաճախակի ի նորոգության օգտագործվել ու մշակվել են: Այստեղից էլ՝ նրա հարուցած մշակութային հետաքրքրությունը:

Այսօր պարականոն գրականությանը կարևոր տեղ տրվելու գլխավոր շարժառիթը առավել ևս այն է, որ այն հնարավորություն է տալիս վերակազմելու պատմական մի միջավայր իր կրոնական կողմնորոշումներով և մտահոգություններով:

«Ծնունդ Մարիամայ» գրվածքը, որն անկասկած Թ դարի երկրորդ կեսի կամ Ժ դարի մի գործ է և որը անանուն մի հեղինակի՝ գրչին է պատկանում, սկսվում է հետևյալ մի քանի նախադասություններով, որոնք բացատրում են, թե ինչու պարականոն գրքերի նկատմամբ երկար ժամանակ գոյություն է ունեցել այդպիսի անբարեհաճ և զգուշավոր վերաբերմունք. «Այս Մարիամի ծնունդը, մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծնունդն ու մանկությունը պարականոն գրքերում է, որ մենք գտանք [պատմրված]: Նկատի ունենալով, որ այնտեղ մեր հավատին հակառակ բազմաթիվ բաներ կան գրված, մենք հարմար դատեցինք ամեն ինչ մի կողմ գցել՝ վախճանյով, որ Քրիստոսի առիթով կարող ենք ուրախություն պատճառել Հակաքրիստոսին»: Սակայն և այնպես, ինչպես հասկացվում է վերոհիշյալ դատողությունից, **Պարականոն գրքերի** բազմաթիվ հատվածներ, իրականում, հիմնադրորեն ներդաշնակվում են Ընդհանրական Եկեղեցու բարեպաշտության հետ և կարող են ծնունդ առած լինել նրա ծնունդ: Ուրիշ հատվածներ, ընդհակառակը, մոտ են բարձրագույն կրոնագիտությանը կամ արտացոլում են կրոնական

այնպիսի մի իդեալ, որը դեմ է ամեն շրջանակի և ամեն կառուցվածքի: Դրանք երբեմն, նույնիսկ հաճախ, ավելի կրոնական բնույթ ունեն, քան եկեղեցական: Պարականոն գրքերը, համեմայն դեպս, իրենց տեղն ունեն քրիստոնեության զարգացման պատմության մեջ Բ և Գ դարերում, եթե նույնիսկ դրանց մեջ երբեմն թույլ է արտացոլված քրիստոնեությունը: Հնագույն **Պարականոն գրքերը**, թվում է, սկիզբ են առել Բ դարի վերջերին, և տվյալ ժամանակաշրջանից մեզ հասած այդ կարգի գրվածքները այնքան հազվագյուտ են, որ կարիք ունեն մանրակրկիտ ուսումնասիրության, մանավանդ եթե դրանք հանդիսացել են, ինչպես այդ թվում է, ժողովրդական լայն հետաքրքրության առարկա²:

Պարականոն գրքերից բազմաթիվ հիշատակություններ և պատմվածքներ կան Եվսեբիոսի «Եկեղեցական պատմության» մեջ, և հին գրողներից մի քանիսը, օրինակ՝ Տերտուլիանոսն ու Հերոնիմոսը, նշանակալից քաղվածքներ են կատարել դրանցից: Դա երաշխիք է այն հետաքրքրության, որ կարող են ներկայացնել նրանց վկայությունները: Սակայն քարոզներն ու աղոթքները հաճախ շատ ավելի քան են տալիս մեզ, քան պատմությունները: Ծարադրված լինելով, ինչպես թվում է, ավելի շուտ անձնական նախաձեռնություններ, քան որոշ մի միջավայրի պատվերով, դրանք, այնուամենայնիվ, համապատասխանում են այն միջավայրի զգայնությանն ու տրամադրություններին, որին ձգտում են հասնել ինքն: Եվ դրանց հեղինակները գրագիտությունից զուրկ մարդիկ չեն եղել բնավ³:

Պարականոն գրքերի արևելյան լեզուներով կատարված թարգմանությունները, հատկապես հայերեն թարգմանությունը, կարող են օգնել մեզ վերականգնելու տեքստերի բնագրային հարազատությունը և նույնիսկ վերագտնելու կորած ամբողջական հատվածներ: Դրանք նաև վկայում են տեքստերի տարածման պատմությունը: Դրանց առանձնահատկությունները, արտահայտված որոշ փոփոխություններով ու հավելումներով, մեզ ծանոթացնում են արևելյան որոշակի միջավայրերի մտահոգություններին, նրանց հետաքրքրություններին և ոգևորություններին, նրանց ավանդություններին և առասպելներին: Դրանց թարգմանությունը եվրոպական որևէ լեզվով այնքան ավելի անհրաժեշտ է, որքան մի հին լեզվի տիրապետող մարդկանց թիվը անհամեմատ ավելի քիչ է արաբերենի, ղպտերենի, եթովպերենի, վրա-

ցերեմի և ասորերեմի գծով, քան լատիներեմի և հունարեմի:

Մնում է որոշակի մի քանի օրինակներով ցույց տալ, թե ինչպես, բազմաթիվ շինծու տարրերի կողքին, պարականոն գրականությունն իր մեջ թաքցնում է որոշ տարրեր, որոնք իրական են ու պատմական, կամ գոնե հարց են առաջադրում:

3. ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ, ՈՐՈՐԸ ՈՒԾԱԴԻՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Այս գեկուցման սեղմ շրջանակում համարորություն չկա Պարականոն գրքերի մասին օգտակար տեղեկությունների կամ հաստատումների բազմաթիվ օրինակներ բերելու: Ես կբավականանամ միայն հինգ օրինակներով, որոնք վերաբերում են Նոր Կտակարանին:

ա. 1886 թվականին, Օքսֆորդում, Էդմենտ Ա. Ուալլիս Բըջը ասորերենից թարգմանեց և հրատարակեց «Մատյան մեղվի» գործը: Այս գրվածքի 48-րդ և 49-րդ գլուխներում տրված են Հիսուսի աշակերտների և առաքյալների անվանացանկեր: Արդ, 49-րդ գլուխը վերջանում է այսպես. «...Տասներկուսից և յոթանասունից յուրաքանչյուրը գրեց մի ավետարան: Բայց որպեսզի վեճ չլիներ, և առաքելական գրքերը չբազմանային, առաքյալները մի ծրագիր կազմեցին և ընտրեցին յոթանասունից երկուսին՝ Ղուկասին և Մարկոսին, և տասներկուսից երկուսին՝ Մաթեոսին և Հովհաննեսին» (հրատ. էջ 129—130, թարգ. էջ 114—115): Ենթադրությունը անհերքելի է: Հավանական է, իրապես, որ Տասներկուսից յուրաքանչյուրը, իր հիշողություններին համապատասխան, ունենար Հիսուսի պատգամը ներկայացնելու իրեն հատուկ եղանակը, և մույնը լինեք մաս աշակերտներից շատերի համար: Բազում վկայությունների առաջ հարկավոր էր ընտրություն կատարել, և մախընտրելի էր չվիրավորել ոչ մեկի դյուրագագությունը: Հետևաբար պիտի ընտրեին երկու ավետարան առաքյալներից և երկու՝ աշակերտներից. արդար ընտրություն, որի դեմ առարկելու ոչինչ չկար:

բ. Կորնթացիներին ուղղված առաջին թղթի է գլուխը նվիրված է ամուսնության և կուսակրոնության հարցին: 7-րդ և 8-րդ համարները հարց են առաջադրում. «Ուզում եմ, որ ամեն մարդ լինի այնպես, ինչպես ես եմ. բայց յուրաքանչյուր ոք իր շնորհին ունի Աստծուց, մեկն՝ այսպես, իսկ մյուսն՝ այնպես: Սակայն ամուսիններին և

այրիներին ասում եմ. լավ է նրանց համար, եթե մնան այնպես, ինչպես ես եմ»: Արդյո՞ք սրանով Պողոսն ուզում է ասել, թե ինքը ամուսին է:

Հայր Զրաքյանի հրատարակության վերջին գլխի վերջին մասում (12 դ.) բերված է մի ցուցակ, որի միակ նպատակն է ցույց տալ, թե առաքյալների մեջ ովքեր են եղել, որ ամուսին են մնացել, և ովքեր, ընդհակառակը, ընտրել են ամուսնական կյանքը: Այս վերջին դեպքում նշված են առաքյալների կանանց և երեխաների անունները: Զրաքյանի հրատարակության երեք ձեռագրերում պատմված ավանդության համաձայն, կուսակրոն կյանքով ապրել են միայն երեք առաքյալներ՝ Հակոբոս և Հովհաննես եղբայրները և Թովմաս առաքյալը: Ցուցակում Պողոսը մտցված է Տասներկուսի՝ խմբի մեջ և շատ լավ տեղ է գրավում. նրա անունը դրված է Պետրոսից, Հակոբոսից, Հովհաննեսից և Անդրեասից անմիջապես հետո: Պողոսը հավանաբար ամուսնացած է եղել. նրա կնոջ անունը եղել է Մարիադոն, որից մա ունեցել է երկու որդի, մեկի անունը՝ Սավղոս, մյուսինը՝ Տիքիկոս: Նրա կնոջ անունը կարևոր չէ մեզ համար, ոչ էլ նրա երեխաների թիվը և անունները: Բայց մենք նկատում ենք, որ Պողոսն այստեղ ներկայացված է որպես մի մարդ, որ ունի ամուսնական կյանքի ամբողջական փորձառությունը: Այդպես է ենթադրում մամանապես Կղեմես Ալեքսանդրացին իր Ստրոմատեններում՝ հիմնարկելով Կորնթացիներին ուղղված առաջին թղթի հետևյալ հատվածի վրա. «Միթե իշխանություն չունեն՞ք մեզ հետ ման ածելու քույր-կանանց, ինչպես որ անում են մյուս առաքյալները և Տիրոջ եղբայրները և Կեփասը» (Ա Կորնթ. Թ 5): Մյուս առաքյալները իրենց հետ ման էին ածում իրենց կանանց: Ինքը Պողոսը ոչ մի կին չունեք իր հետ, միանշեղ իրավունք ուներ իր հետ վերցնելու իր կնոջը: Եվսեփոս Կեսարացին մույն կարծիքն է հայտնում, ինչ որ Կղեմես Ալեքսանդրացին: ԺԳ դարի սկզբին ասորերեն լեզվով գրված «Մատյան մեղվի» գործը, որի հեղինակն է Սայմոն դը Բասորահը, մույնպես սուրբ Պողոսին դասում է ամուսնացած առաքյալների շարքը:

«Հանդես Նոր Կտակարանի գիտության» ամսագրում լույս տեսած երկու կարճ հոդվածներում՝ Յոհանիմ Հերեմիաք բացեփառ արտահայտվում է ի նպաստ Պարականոն գրքերի հաստատման՝ բայց Պողոսին ներկայացնելով որպես որբևայրի մարդու: Պողոսը, իր դարձի ժամանակ, ան-

կասկած կլինե՞ր քառասուն տարեկան: Անուղղակի կերպով այդ մասին են վկայում նրա դատարանական պաշտոնը, որ նա վարում էր քահանայապետների հրամանագրով՝ «...համասկոս էի գնում քահանայապետների իշխանությանը և հրամանով» (Գործք ԻԶ 26, տես նույնպես Թ 1—2 և ԻԲ 5), Պիսիդիայի Անտիոքում ժողովարանի առյալի առաջ խոսք առնելու մասին եղած հրավերը (Գործք ԺԳ 15—16) և մանավանդ ձայնի իրավունքը, որ տրվել էր նրան Հիսուսին հավատարիմ մարդկանց մահվան դատապարտելու հարցում. «...սըրբերից շատերին ես բանտարկում էի և նրանց միջից սպանվելու ենթակա եղողների համար հավանություն էի տալիս» (Գործք ԻԶ 10): Պողոսը, անկասկած, «կարգ ունեցող» մի դատավոր էր, և այդ կարգը, գոնե Բաբելոնյան Թալմուդի համաձայն, տրվում էր քառասուն տարիքը թևակոխած հրեաներին: Այդ, մյուս կողմից, ամեն երիտասարդ հրեա ամուսնանում էր շուրջ 18—20 տարեկան հասակում: Ուրեմն՝ Պողոսն ամուսնացել էր: Բայց, ինչպես թելադրում է Կորնթացիներին ուղղված առաջին թուղթը (Ա Կորնթ. Է 7—8), որ մեջբերված է արդեն, նա այդի էր թե՛ այն ժամանակ, երբ գրում էր այդ թուղթը, թե՛ նույնիսկ ի Քրիստոս իր դարձի եկած ժամանակ: Ծիշտ է, որ «Գործք»-ի Է գլխի 58 համարը Պողոսին ներկայացնում է որպես մի երիտասարդի (νεανίας). բայց հունարեն այս բառի իմաստը շատ նույն է, քանի որ Մաթ. ԺԺ 20—22-ը մի դեռահասակի (νεανίσκος) է վերագրում այն հարցումը, որ Ղուկասի ավետարանի ԺԸ 18 համարում ասվում է, թե ուղղված է եղել Քրիստոսին մի իշխանավորի (ἡγεῶν) կողմից, այսինքն՝ սովորաբար հասուն տարիքի մի առաջնորդի կամ մի ատենակալի կողմից:

Գ. Պարականոն գրվածքները մեզ լուսաբանություն են տալիս նաև սարկավագների կատարած գործերի մասին սկզբնական Եկեղեցում: Սարկավագները, ասվում է «Գործք»-ում, ընտրվում էին սեղաններ սպասարկելու համար (Գործք Զ 2), որպեսզի տասներկու աշակերտները հնարավորություն ունենային ավելի ազատորեն նվիրվելու աղոթքի և խոսքի սպասավորությանը (Գործք Զ 4): Հետաքրքիր է, սակայն, որ գլխավոր սարկավագը՝ Ստեփանոսը, որի անունը առաջինն է հիշվում (Գործք Զ 5), մեզ բնավ չի ներկայացվել որպես սեղաններ սպասարկող, այլ՝ որպես քարոզիչ, և հավանաբար ավելի փայ-

լուն քարոզիչ և առավել վտանգավոր իր ընդդիմախոսների համար, քան տասներկու աշակերտների խմբի աշակերտներից որևէ մեկը. «Ստեփանոսը, շնորհներով և զորությամբ լցված մի մարդ, ժողովողի մեջ զարմանալի գործեր և մեծամեծ նշաններ էր անում» (Գործք Զ 8): Եվ նրանք, ովքեր «վիճելու էլան Ստեփանոսի հետ... չէին կարողանում դեմ կանգնել այն իմաստությանը և Հոգուն, որով խոսում էր նա» (Գործք Զ 9—10): Երբ նա առյալ կանգնեց, «նրա երեսը» ատենակալներին երկաց այնպես, «ինչպես հրեշտակների երեսը» (Գործք Զ 15): Այն խիզախ ճառը, որ նա արտասանում էր առյալում, ավարտվում է հոգեկան մեծ հափշտակությամբ, և այդ հափշտակությունն էլ նրան նետում է մահվան գիրկը:

«Գործք»-ը մեզ շատ քիչ տեղեկություն է տալիս մյուս սարկավագների մասին: Մենք նրանց ճանաչում ենք ավելի շատ պարականոն գրքերի շնորհիվ: Այսպես, Պրոխորոնը, որի անունը երրորդն է հիշվում «Գործք»-ում (Զ 5), «Վարք Յովհաննոս»-ում մեզ ներկայացվում է որպես Հովհաննեսի եղբայրը, բարեկամը, բայց միաժամանակ և նրա սպասավորը: Նա Հովհաննեսի հետ բաժանում է նյութական կարգի ծառայությունները, կամ նույնիսկ փոխարինում է նրան, որպեսզի վերջինս կարողանա զբաղվել ուղղակիորեն առաքելական գործերով: Պրոխորոնը և մյուս սարկավագները, որոնց անունները նրանից հետո են հիշատակվում «Գործք»-ում (Գործք Զ 5), ըստ այս պատկերի, թվում է, թե միակ անձերն են, որոնք համապատասխանում են «Գործք»-ի Զ գլխի 2-րդ համարում արտահայտված նպատակին, այն է՝ ապահովել նյութական կարգի ծառայությունները և այդպիսով հեշտացնել առաքյալների հոգևոր սպասավորությունը: Դրան հակառակ, Ստեփանոսը նախա-քահանա մի սարկավագ պետք է եղած լինի: Ըստ «Գործք»-ի (Ը 26—40), թվում է, թե այդպիսին է նաև Փիլիպպոսը՝ «Գործք»-ի ցուցակում (Զ 5) հիշատակված երկրորդ սարկավագը, որովհետև եթովպացի քարձրաստիճան մի պաշտոնյայի բարի լուրը ուսուցանելուց հետո նա միևնույն գործը շարունակում է՝ «շրջելով ավետարանում և բոլոր քաղաքներին» (Գործք Ը 40): Նա ևս, ինչպես Ստեփանոսն ու առաքյալները, նվիրված է «խոսքի սպասավորությանը»:

Դ. Պարականոն գրքերում եղած մի երրորդ տվյալ մեզ դնում է ավելի անհաստատ մի գեղմի վրա, տվյալ, որին բնա-

կանաքար կարելի է հակադրվել: Ներկայացված վարկածը խախտու է, և սակայն առաջին հայացքից թվում է գրավիչ:

Ըստ այդ տվյալի, Հովսեփը՝ կույս Մարիամի ամուսինը, առաջին մի ամուսնությունից ունեցել է չորս որդիներ՝ Հովսե, Հուդա, Հակոբ և Սիմոն: Այս չորս որդիների վրա հունարեն մի ցուցակ առատաձեռնորեն ավելացնում է երեք աղջիկներ՝ Եսթեր, Թամար և Սողոմե¹¹: Սրանք եղել են Հիսուսի խորթ եղբայրներն ու խորթ քույրերը: Հովսեփի առաջին կնոջ անունը մույնպես եղել է Մարիամ. սա կույս Մարիամի մոր՝ Աննայի քույրն էր: Այսպիսով կույս Մարիամը լինում է Հովսեփի քենու դուստրը:

Առանց կանգ առնելու պատմվածքի մանրամասնությունների վրա, ուր անկասկած երևակայականը իր բաժինն ունի, այնուամենայնիվ պետք է ընդգծենք մի քանի առավելություններ, զոնե երևութական, որոնք այս վարկածի էական մասն են կազմում, որովհետև այդ դեպքում թերևս հնամուտ, որովհետև այդ դեպքում ավետարաններում գործածված որոշ խոսքեր, ինչպես, օրինակ, Մարկոսի հետևյալ խոսքերը. «Սա հյուսնը չէ՝ միթե, Մարիամի որդին, Հակոբի, Հովսեի, Հուդայի և Սիմոնի եղբայրը. և սրա քույրերը այստեղ մեզ մոտ չեն» (Մարկ. 23): Հակառակ Մաթևոսին (ԺԳ 55), որը խոսում է հյուսնի որդու մասին, Մարկոսի ավետարանում (23) Հիսուս կոչվում է հյուսն, իսկ Հովսեփի մասին ակնարկություն չկա: Տարիքով զգալիորեն ավելի մեծ լինելով իր քենու դուստր Մարիամից՝ Հովսեփը գուցե վախճանված էր Հիսուսի հրապարակային քարոզության ժամանակ, մույնիսկ դրանից էլ առաջ, և Հիսուս վերսկսել էր զբաղվել իր հոր արհեստով, ապա թողել էր այն՝ հնազանդվելու համար իր մեսիական առաքելության պահանջներին:

Փորձելով վերականգնել Մարիամի հղության ժամանակ տեղի ունեցած եղելությունները՝ ենթադրենք մի պահ, որ Հովսեփը, այդիանալով և, անկասկած, այդ շրջանում քառասունի, մույնիսկ հիսունի ահմամներում լինելով, ցանկանում էր ամուսնանալ լուրջ և վստահելի մի աղջկա հետ, որը միաժամանակ հաճելի և ընդունելի լիներ իր երեխաների համար, կարողանար զբաղվել իր ընտանեկան օջախով և բաժանել նրա պատասխանատվությունը: Նկատի ունենալով նրա առաջին և համեմատաբար երկար փորձառությունը ամուսնական կյանքում, դրա հետ մեկտեղ նաև նրա առաքինի վարքը և այն հանգա-

մանքը, որ նա զգացական հողի վրա լիովին բավարարված էր իր երեխաների սիրով, Հովսեփի համար հեշտ էր հարգել իր քենու աղջկա՝ Մարիամի կուսությունը, որին նա ճանաչում էր նրա ծննդյան օրից, և որը այդ շրջանում հազիվ 16-ից 17 տարեկան կլիներ:

Այս ենթադրությունը ինչքան էլ գրավիչ լինի, այնուամենայնիվ մեզ դնում է որոշ դժվարությունների առաջ: Երբ Հիսուս իր Հարությունից հետո երևում է սուրբ կանանց և նրանց ասում՝ «Մի՛ վախեցեք. գնացե՛ք-սասցեք իմ եղբայրներին, որ զբնան Գալիլիա և այնտեղ ինձ տեսնեն» (Մաթ. ԻԸ 10), պարզ է, որ այդ եղբայր բառով նա մատնանշում է տասնմեկ աշակերտներին, որոնց եղբայր է կոչում, որովհետև նրանք եղել են Հիսուսի մտերիմ բարեկամներն ու հավատարիմ ընկերները: Հիսուսի «եղբայրներն ու քույրերը» կարող էին միայն նրա բարեկամները եղած լինել, որոնց հետ, որպես երիտասարդ մարդ, սիրահոժար և հաճախակի մտքեր էր փոխանակում և այդպիսով առանձնապես սերտ հարաբերությունների մեջ էր: Կամ էլ նրանք նրա զանրիկներն էին՝ բառիս մեղ կամ լայն իմաստով: Ավելի շուտ այն ուղղությամբ է ընթացել քրիստոնեական մեկնողական գրականությունը:

Բացի այդ, այս ենթադրությունը, այնպես, ինչպես ձևակերպված է Պարականոն գրքերում, ունի հիմնական մի անհավանականություն, որովհետև Մարիամը՝ Հովսեփի առաջին կինը և կույս Մարիամի մորաքույրը, այնտեղ (IX 2) հանդես է բերված որպես մանուկ Հիսուսին դիտեցող կին: Նա, ուրեմն, ողջ էր, իսկ այդ դեպքում Հովսեփը կլիներ երկու կնոջ ամուսին, ինչ որ անընդունելի է: Կացությունը առավել ևս բարդանում է այն իմաստով, որ Գողգոթայում ներկա էր «Մարիամը՝ Հակոբի... և Հովսեի ու Սողոմեի մայրը» (Մարկ. ԺԵ 40): Թվում է, որ սա մույն Մարիամն է, որի հետ նախապես ամուսնացել էր Հովսեփը՝ նկատի ունենալով արտաքին նշանների նմանությունները: Այսպիսով մենք գտնվում ենք անլուծելի մի խառնաշփոթության առաջ, հակառակ այն հետաքրքրության, որ կարող էր ներկայացնել տվյալ ենթադրությունը:

Ե. Նշենք վերջապես այն բարձր արժեքը, որ քրիստոնեական ուսուցման մեջ տրվում է Մաթևոսի ավետարանին: Այդ ավետարանը միակն է, որ Բարթողիմեոս առաքյալը մեկնաբանում (VI. ա, պրոֆ. 8. 9. 14. VI. բ, պրոֆ. 7) և նրա վրա է հիմնվում իր ամբողջ ուսմունքը: Բնական

է, որ Հովհաննէսի ավետարանը հիշատակված չլինի, քանի որ այն գրվել է, գրանէ իր վերջնական ձևի մէջ, միայն առաջին դարի վերջին: Մաթևոսի ավետարանին տրված նախընտրությունը առաջ է գալիս գուցէ նրանից, որ, ինչպէս Հերոնիմոսն է ասում, այն առաջինն է երևացել և օգտագործվել ավետարանի աշխատավորների կողմից, կամ էլ գրվել է տասներկու առաքյալներից մեկի կողմից, քանի որ Մարկոսն ու Ղուկասը աշակերտներ էին միայն: Բացի այդ, Հիսուսի մի քանի մեծ ճառերի մաթևոսյան խմբավորումները հեշտացնում էին քրիստոնէական ուսմունքը: Ինչպէս Եվսեբիոսն է գրել՝ «Միայն Մաթևոսը և Հովհաննէսն են մեզ թողել հիշողություններ Տիրոջ խոսքերից»¹³: Վերջերս, օգոստոսի 8-ին, «Օրերի գրքից»¹⁴ մենք ծանոթացանք, թէ ինչպէս սուրբ Դոմինիկը (1170—1221), ըստ նրա սրբացման հրամանագրի (1234-ին), «միշտ իր վրա էր կրում սուրբ Մաթևոսի ավետարանն ու սուրբ Պողոսի թղթերը և այնքան էր ուսումնասիրում դրանք, որ համարյա անգիր գիտեր»: Քարոզիչ Եղբայրների Միաբանության հիմնադրի՝ Մաթևոսի ավետարանին և Պողոսի թղթերին տված նախապատվությունը անտարակույս գալիս է նրանից, որ դրանք մեծապէս հեշտացնում էին քրիստոնէական վարդապետության ուսուցումը: Ծառ բնական է հետևաբար այն, ինչ այդ մասին մեզ ասում են **Պարականոն գրքերը**:

Մենք շատ քիչ տեղեկություններ ունենք այն մասին, թէ երրորդ դարից և սուրբ Անտոնիոսից առաջ ինչպիսին են եղել Աստուծո ծառայությանը նվիրվելու քրիստոնէական առաջին փորձերը: Արդ, **Պարականոն գրքերը**, զանազան առիթներով, հիշատակում են սուրբ ուխտի ուսուրերին և դուստրերին, որոնք պարտավորություն էին ստանձնում ծառայելու Եկեղեցուն¹⁵ և օգնում էին տեղական եկեղեցու պաշտոնյաներին: **Փիլիպպոսի գործերը** գրվածքում պատմվում է (պրգրֆ. 142) կույսերի մասին, որոնք հավաքվում էին «մի տան մէջ» (V. ա—2), «ուխտել էին ապրել կուսության և արքայական մէջ... հետամուտ էին աղոթքների, ծոմապահությունների և փոխադարձ սիրո, խոնարհ էին և աստվածավախ, անբաժան՝ մեկը մյուսից, բայց պահելով միաբանությունն ի Տեր: Թող նրանք այցելեն հիվանդներին ու աղքատներին և [հետևեն] տարբեր դասի հավատացյալների այլ կարիքներին: Թող նրանք ուղարկվեն երկու-երկու» (V. ա—1)¹⁶: Այս վերջին պատկերը մեզ հիշեցնում է Ղու-

կասի ավետարանի Ժ գլխի առաջին համարը, որտեղ նշված է Հիսուսի աշակերտների առաքելությունը. «...Տերը նշանակեց ուրիշ յոթանասուններկու հոգի ևս և նրանց իրենից առաջ երկու-երկու ուղարկեց այն բոլոր քաղաքներն ու վայրերը, ուր ինքը գնալու էր»: Կրոնական առաքելական կյանքը, ուրեմն, ըմբռնվել է որպէս շարունակություն Հիսուսի աշակերտների առաքելության, և նրա հիմքն է աղոթքը, զոհաբերությունը, փոխադարձ սերը, խոնարհ եղբայրասիրությունը: Այս ուխտյալ անձանց մտատիպարը պիտի լինի, ասված է **Փիլիպպոսի գործերում**, «սուրբ Մարիամի կյանքը» (V. ա—1): Այս Մարիամը բնականաբար կարող է լինել այն Մարիամը, որի մասին խոսվում է **Փիլիպպոսի գործերում**, և որը Փիլիպպոսի և Բարթողիմեոսի ուղեկիցն է եղել նրանց առաքելական ուղևորությունների ժամանակ, բայց նա երբեք սուրբ չի կոչվել: Բնական է, հետևաբար, հարց տալ, թէ խնդիրը չի՞ վերաբերում արդյոք կույս Մարիամին, որը մեծափայլ, ցայտուն դեմք է պարականոն գրականության մէջ: Դեռևս նախքան սուրբ Իրենեոսի և սուրբ Եփրեմի գրվածքները, **Պարականոն գրքերում** վկայված է կույս Մարիամի նկատմամբ քրիստոնէության մէջ եղած ջերմեռանդ սիրո խոր հնությունը:

Աստուծո ծառայությանը նվիրվելու առաքելական այս ձևից բացի, **Պարականոն գրքերում** նշված է նաև վանականների նվիրումը, որոնց նկատմամբ անսահման հիացում է արտահայտում Պողոսի Հայտնությունը և նրանց ներկայացնում այնպիսի իդեալական չափազանցված գույներով, որոնք չեն կարող համապատասխանել իրականությանը: Երկու հատկանշական գրծեր մանավանդ բնորոշում են նրանց. աշխարհից հրաժարումը և աղոթքը: Հրեշտակներն ամեն օր նրանց կողմից Աստուծուն բերում են [աղոթքների] նավաբեռներ և բարի լուրեր»: «Նրանք հրաժարվել են աշխարհից և բնակվում են քարանձավներում և լեռների խորշերում. նրանք կոծում և մաշվում են» հաճում Աստուծո (I. գ, օրինակ 1, պրգրֆ. 3):

Հայր Զրաքյանի սույն աշխատությունը ներկայացնելիս հարմար կլիներ անշուշտ նշել որոշ գծեր, որոնք ցույց են տալիս հայկական ավանդության ազդեցությունը պատմվածքների բովանդակության վրա, սակայն դա դուրս է մնում այն խնդիրների շրջանակից, որի մէջ այս գեկուցման սահմաններն ինձ ստիպում են մնալ: Հետևաբար կբավականանամ նշելով, որ Հայաս-

տանում հարթողիմենուի ունեցած առաքելության մասին պատմվում է Հայր Զրաքյանի հրատարակած գրքի այն գլխում, որը նվիրված է Արամ (գլուխ VI. ա և բ մաս, պրգրֆ. 18—22): 6-րդ գլխի գ մասը նվիրված է Արա աճյունի հայտնաբերման պատմությանը:

Մյուս կողմից՝ 12-րդ գլխի գ մասի սկզբում հանդիպում ենք մի թեմայի, որը կենտրոնական տեղ է գրավում Թոմսոնի կողմից հրատարակված Հայկական սկզբնական քրիստոնեականի մեջ¹⁷: Դա հաբելոնի աշտարակի թեման է, աշտարակ, որ սկզբնապատճառը հանդիսացավ խառնաշփոթության և ցրվումի, մինչև Բրիտանի խաչը մարդկանց հավաքում, միացնում և վերադարձնում է Աստծուն: Եթե հայկական ավանդությունը այդքան կարևորություն է տալիս այս աստվածաբանական թեմային, անտարակույս դա Արա համար է, որ հայ ազգը շատ է տառապել բազում տարագրություններից ու բաժանումներից, որ Արամ պարտադրել է Արա ցավագին պատմությունը:

«Անդրեասի և Մաթիասի գործերը մարդակերների մոտ» գրվածքի մեջ (2-րդ գլուխ, 1-ին մաս) հայերեն թարգմանությունը որոշակիորեն ավելի ուսուցողական և քրիստոնեական ուղղություն ունի, քան հունարեն և ասորերեն համապատասխան տեքստերը: Այնտեղ կարելի է գտնել հինգերորդ դարի Հայ Եկեղեցու աստվածաբանական ուսուցման գլխավոր գծերը¹⁸: Այստեղ նույնպես մենք անդրադառնում ենք այն կարևորությանը, որ կարող են ներկայացնել Պարականոն գրքերը որպես պատմական փաստաթուղթ: Բավական է միայն ընտրություն կատարել և աշխատել որոշել, թե որտեղ կա ճշմարտություն և որտեղ է միջամտում մտացածինը: Դա հաճախ հոգնեցուցիչ և դժվարին աշխատանք է, բայց ձեռք բերված արդյունքը արժե այն հոգնությունը, որ մարդ հանձն է առնում դրան հասնելու համար:

Թարգ. Պ. ՇԱՀԱՍՋՅԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարականոն գրքերի մասնագետների Ժնև-Լոզան-Փարիզ խմբի անդամներից մեկը՝ Տիկ. Ռիտա Բելլերը, Անվերսից (Բելգիա), պատրաստում է «Ծնունդ Մարիամայ» գրվածքի մի հրատարակություն: Հակադրվելով Տ. Սյրիլ Լամբլի «Եկեղեցիում մտնելու ճանաչում» վերափոխման մասին և Մարիամի ծննդյան ավետարանը ըստ Հենկմարի անտիպ մի նամակի» հոդվածին՝ («Revue bénédicti-

ne», № 46, 1984 թ., էջ 265—282) նա չի կարծում, որ այդ գրվածքը կարող է վերագրվել Պարականոն գրքերին: Հավանաբար նա ծագումով ֆրանսիացի է, իսկ դրա հեղինակը այնքան լավ է վերամշակել իր օրինակը՝ Կեղծ-Մաթևոսը, որ կարողացել է Արևմուտքում տասնմեկերորդ դարի մարիամագիտական ուսմունքի վկայի տեղ ապահովել իր գրվածքի համար և այն մտցնել տալ ծեսի մեջ:

2. Հմմտ. Էրիկ Ժունո, «Թե ինչ նպաստ կարող է քերել առաքյալների պարականոն գրքերի ուսումնասիրությունը առաջին դարերի քրիստոնեության ճանաչման համար—«Վարք Հովհաննոս»-ի պարագան» (Travaux en cours et problèmes actuels dans le domaine des sciences humaines), Համալիտար գիտությունների շվեյցարական ընկերություն, 1980 թ. (էջ 19—26), էջ 19 և 22:

3. Հմմտ. Աույնը, էջ 22—23 և Աույն հեղինակից՝ «Actes apocryphes et Hérésie: le Jugement de de Photius», dans F. Bovon, M. van Esbroeck, R. Goulet, E. Junod, J.-D. Kaestli, F. Morard, G. Poupon, J.-M. Prieur, Y. Tissot, Genève (Editions Labor et Fides), 1981 թ. (էջ 11—24), էջ 18—19:

4. Գլուխ XII. դ, Զրաքյանի հրատարակություն, էջ 476:

5. Վենետիկի № 822 ձեռագրում չկա Նախանձաֆուլ Սիմոնի անունը, որը գլխավոր վկան է Զրաքյանի հրատարակության մեջ:

6. III, 6, 6 (58, 1):

7. «Եկեղեցական պատմություն» III, 80:

8. Էռնեստ Ա. Ուալիս Բըջ, «Մատյան մեղվի», Օքսֆորդ, 1986 թ. գլ. 50, բնագիր էջ 180, 6-րդ տող, թարգ. էջ 115:

9. 25 (1926), էջ 810—812: «War Paulus Witwer?», 28 (1929), էջ 321—323: «Nochmals: War Paulus Witwer?».

10. Գլուխ IX, 2, Զրաքյանի հրատարակություն, էջ 449—450:

11. Հմմտ. Th. Schermann, Prophetarum vitae fabulosae. Indices apostolorum discipulorumque Domini Dorotheo, Epiphanto, Hippolyto aliisque vindicata, Leipzig, 1907, col. 162.

12. De Viris illustribus, 3, PL 23, 613—614 AB.

13. «Եկեղեցական պատմություն», III, 24, 5:


14. Livre des Jours. Office romain des lectures (ֆրանսերեն թարգմ.), Փարիզ, 1976, էջ 1542:

15. Առաջին հիշատակությունը երևում է Զրաքյանի հրատարակության մեջ, գլ. IV, բ, 2, էջ 222. Լըլուարի թարգմանության մեջ՝ էջ 327 (տես Աույն տեղ, էջ 86):

16. Զրաքյանի հրատարակություն, էջ 318—319:

17. The Teaching of Saint Gregory. An Early Armenian Catechism. թարգմանություն և մեկնաբանություն Ռոբերտ Վ. Թոմսոնի, Քեմբրիջ, Մասչուսետս, 1970 թ., էջ 28, 141 (պրգրֆ. 581), 141—142 (պրգրֆ. 585), 156 (պրգրֆ. 681):

18. Հմմտ. թարգմանություն Լըլուարի, էջ 195—197:



ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԱ ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 639
ՏՕՍԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 67:— Պրակները՝ 6, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա՝ 10, Բ՝ 11 և Դ՝ 10 թերթից են:— **Մեծությունը՝** 44.7×33.2×1.6 սմ.:— **Նույնը՝** դեղնած և թրջված թուղթ:— **Կապը՝** սև լիտերինով ծածկված հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում կա մի հատ դեղնած և թրջված թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 66ա—67բ:— **Տողերը՝** 38:— **Գծումները՝** թուղթ ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Չարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Չաքարիա ավագ քահանա Չարդեղյանց, միաբան Ավետյաց-Չգրաշեն Ս. Աստվածածին եկեղեցու Տփիսխի:— **Ժամանակը՝** 1922—9 թթ.:— **Վայրը՝** Տփիսխ (Թբիլիսի):— **Ծանոթագրություն՝** մատյանն ստացված է 1983 թ. ապրիլի 13-ին Մայր Աթոռի արխիվից: Չեռագրի հեղինակը՝ Չաքարիա ավագ քահանան ժամանակին այն կտակել է Թիֆլիսի բնակիչ Հակոբ Տեր-Հարությունյանին, իսկ այս վերջինս էլ 1949 թ. այն նվիրել է տոմարագետ Սահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանին, հետագայում արքեպիսկոպոս և լուսարարապետ Մայր Աթոռի (1879—1965):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Չեռագիրն ունի երկու բաժին.
Ա. Կա 1921—2512 թթ. (592 տարվա) ժամանակաշրջանի յուրաքանչյուր տարվա Փրկչական թվականը, տարվա գիրը, տոմարական և հայկական թվականները, յոթներեակը, վերադիրը, արևի շրջանը, Ս. Չատկի ամսաթիվը և այլ հաշվումներ: Կա նաև վաղապես հաշվումների այլ տախտակներ (թթ. 1ա—28ա, 37բ—38ա, 42բ, 53ա—55ա, 59բ—60բ և 62բ—63ա):

* Ծարումակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № ՆՆ ԺԱ.—ԺԲ-ից:

Բ. Այստեղ ձեռագրի հեղինակը արտագրել է իր գրած և ստացած կարևոր նամակների պատճենները, կոնդակները և վկայագրերը: Տալիս է Ս. Չատկի օրը ճշտելու հաշիվը, ժամանակի չափումը, հոտվմայեցվոց օրացույցը, նոր տոմարի և այլ հարցերի մասին (թթ. 28բ—37բ, 38բ—42ա, 43ա—53ա, 55բ—59ա, 61ա—62ա և 63ա—65բ):

Ստորև տրվում է միայն կարևոր վերնագրերը.
Թ. 1ա.— Մշտնջենաւոր տարե-տօնացոյց ըստ Նոր Տոմարի (ըստ Չաքարեանն է այս):

Չկնի Ծննդեան Յիսուսի Քրիստոսի 1921—2512 թ. (ներդիակ):

Թ. 5ա.— Գիր տարւոյն կամ տարեգիրը գտնելու օրինակներ և ձևեր ըստ Նոր տոմարի: Կանոն: 1921 թականից Դ-րդի կցորդն է ԻԴ և Ե-րդի՝ Ե:

Թ. 9ա.— Մշտնջենաւոր-յաւիտեանական տարե-օրացոյցի շարունակուող և շարունակելի տախտակ (ըստ Գրիգորեան Տոմարի)—վերին կարմիր շարքն են վերադիրք, միջին սևքն՝ Եօթներեակի կամ Կիրակագիրք և ստորին կարմիրք՝ Տարեգիրք:

Թ. 9բ.— Մշտնջենաւոր ձայնագիտ ըստ նոր (Չաքարեան) տոմարի: Ծան. ամսաթիւն նախ անելացնել 13 թիւ, ապա կցորդն անելացնել և հանել 8—8:

Թ. 10ա.— Մշտնջենաւոր օրացոյց՝ ըստ Նոր տոմարի. անցեալ, ներկայ և ապագայ թուականների շաքաթուայ օրերը գտնելու յաւելումներ կամ կըցորդներ:

Թ. 10բ.— Մշտնջենաւոր օրացոյց ըստ Նոր տոմարի:

Թ. 11ա.— Տարեգիրն անելացնելով գտնել տարուայ բարեկենդաններն և նշանաւոր տօները:

Թ. 14բ.— (Նամակի պատճեն՝ ուղղված Գեորգ Եպս. Չորեքչյանին, 10 նոյեմբերի 1924 թ., Տբիլիսի):

Թ. 15ա.— Մշտնջենաւոր տարե-տօնացոյց ըստ Գրիգորեան Նոր տոմարի՝ (իսկապէս իմ Չ. ա.ք. Չարդ.) Չկնի Ծննդեան Յսի Քսի ի 1920 թ-ից յետադարձ՝ ցճնունդն Քրիստոսի:

Թ. 28ա.— (Այստեղ երեք տող վրացերեն է գըր-

Ս. Աստուածածին եկեղեցոյ Հայոց
Տփիսխայ.

Սկսեալ ի 12/25 օգոստոսի 1922 ամի.
ի ք. Տփիսխայ:

Թ. 1ա.— Աստուած, տուր ինձ խելք ու ջնորհ.
աւարտել այս Տօմար Նոր: Ձաք. աւագներէք Ձար-
դեղեանք:

Թ. 1բ.— Նոր-Տօմարով նոր-տարիք՝ թող տան
մարդոց նոր բարիք (նայն ատորագրութիւնը միշտ
կրկնուիւմ է):

Թ. 2ա.— Նոր տօմարով միշտ անշեղ՝ տօնէք տօ-
ներ վեհ, շքեղ (ստորգր.):

Թ. 2բ.— Նոր տօմարով Ծնունդ-Չատիկ՝ տօնիդ
վտարք բերանալատիկ (ստոր.):

Թ. 3ա.— Նոր Տօմարով ամեն տօն՝ կատարելու
եղիր պօսն (ստորագր.):

Թ. 4ա.— Ով Նոր Տօմարս այս հերթէ, նոյն թէ՛
մատով ջուր հերկէ (ստորգր.):

Թ. 4բ.— Նոր Տօմարս այս իմահնար՝ սիրտ-հոգ-
այս է անոյշ քնար (ստոր.):

Թ. 5ա.— Մտաւոր մեր աչաց լոյս. որ է ի մեզ
ընդաբոյս, ծնանէ վհաւատ, վՍէր և վՅոյս. մեր
սիրտ-հոգւոց ոյժ, խրախոյս (ստորգր.):

Թ. 5բ.— Մեր պագսմանց ազնիւ բերք. որ է ա-
նոյշ, քաղցրիկ երգ, յար կը բուժէ, ով ընկերք. մեր
սիրտ-հոգւոց խորունկ վէրք (ստորգր.):

Թ. 6ա.— Արևի պէս մաքրիր ամեն տեսակ ապա-
կանութիւն, բայց ինքդ մի ապականուիր (ստորգր.):

Թ. 6բ.— Պաշտօնիդ մէջ հաւատարիմ, նաև արի.
իսկ մարդոց հետ՝ եղիր խաղաղ, անկեղծ, բարի
(ստորգր.):

Թ. 7ա.— Իբրև ստուեր է աշխարհիս կեանք,
միանգամայն և սուտ իւր փառք (ստորգր.):

Թ. 7բ.— Թէ ծովի կոհակք և թէ մարդոց կեանք.
յար կը փոփոխին, ո՞հ բիւր-բիւր տեսակի (ստոր-
գր.):

Թ. 8ա.— Յո երթայ (կամ բնակի) մեղու. պջաղ-
ցըր պիիսք հեղու, եւ քեզ ի մարդկան. այն է միշտ
պատկան (ստորգր.):

Թ. 8բ.— Արևն երկնից բոցավառ՝ կեանք է շնոր-
հում բնութեան. իսկ կայծակ, շարժ ու հրաբուխ՝
մահ տայիս հեզ մարդկութեան (ստորգր.):

Անսահման անհուն. ունինք մեծ հօր տուն, կըն-
դունէ մեզ հայրն՝ քաղցր երբ մըտնենք քուն (ստոր-
գր.):

Թ. 11ա.— Ամեն նոր գարուն, նոր կեանք է տա-
րուն (ստորգր.):

Ամեն կեանք՝ անձին թանկ (ստորգր.):

Երկնից անմահ Տէր. չի խնայի մեզ սէր. Երբ ի-
րան էլ մենք՝ ջերմ սիրով սիրենք (ստորգր.):

Թ. 12բ.— Ամպ և մեզ, նոյն և մեք: 10 նոյեմբ.
1897 թ. Յօք (ստորգր.):

Թ. 13ա.— Արև և ջեռ, նոյն է և սէր: 10 նո-
յեմբ. 1898 թ. Յօք (ստորգր.):

Թ. 13բ.— Սէր Յիսուս, լեր յիս յոյս: 6ն Յունվ.
1898 թ. Յօք (ստորգր.):

Թ. 14ա.— Վաղեմի ծանօթ՝ է փորձուած անօթ:
11-ն Յունվ. 1898 թ. Յօք (ստորգր.):

Թ. 14բ.— Հեզաբարոյ մարդ՝ է մայիսեան վարդ:
14-ն փետր. 1898 թ. Յօք (ստորգր.):

Թ. 15ա.— Չը յարգողը հօրն ու մօր՝ կը թափառէ
միշտ մոլոր (ստորգր.):

Թ. 15բ.— Անպատկառ և չար որդին՝ նման է
յիմար հորթին (ստորգր.):

Թ. 16ա.— Մարդն ապերախտ և դաժան՝ կը ծախէ
հօրն էլ արծան (ստորգր.):

Թ. 16բ.— Երանի փոքր եղբօրը՝ միշտ կ'օրինեն
միմեանց օրը (ստորգր.):

Թ. 17ա.— Երանի հօրն ու որդուն՝ երբ գործին
են ծիր, արթուն (ստորգր.):

Թ. 17բ.— Երանի դըստերն ու մօր՝ շէնացնում
տունն ամեն օր (ստորգր.):

Թ. 18ա.— Երանի խոհեմ հարսին՝ սկեսրին կը
պահէ վարսին (ստորգր.):

Թ. 18բ.— Երանի ծիր գիւղացուն՝ լաւ կը պահէ
սերմնացուն (ստորգր.):

Թ. 19ա.— Քըրտնաթոր ծիր գիւղացին՝ հրաւի-
րում աշխարհի հացին (ստորգր.):

Թ. 19բ.— Գիւղացին և իր հողը՝ բըռնաւորին
են դողը (ստորգր.):

Թ. 20ա.— Գիւղացին, իր մանգաղը՝ միշտ հա-
րում չարի խաղը (ստորգր.):

Թ. 20բ.— Գիւղացին ու բանուորը՝ չարերին թա-
փում հորը (ստորգր.):

Թ. 21ա.— Բանուոր-գիւղացին բազմում անյաղթ
պետութիւն կազմում (ստորգր.):

Թ. 21բ.— Վայ նորան, ով բանուորին թող մա-
տով տայ սիրտ-փորին (ստորգր.):

Թ. 22ա.— Բանուորն և իր ծանըր մուրճ՝ փըշրում
արքայից անուրջ (ստորգր.):

Թ. 22բ.— Ժրաջան բանուորն և իր մուրճ՝ գործ
կատարում հաշուն (ստորգր.):

Թ. 23ա.— Բանուորի բազուկն և մուրճ՝ կերտում
գիտութեանց կամուրջ (ստորգր.):

Թ. 23բ.— Չօրքն և բանուոր-գիւղացին՝ ստրուկնե-
րի շղթայք բացին (ստորգր.):

Թ. 24ա.— Չօրքն և բանուոր-գիւղացին՝ բըռնաւո-
րին վիհ բացին (ստորգր.):

Թ. 24բ.— Մարդ չըկայ բնաւ անկըրօն՝ անճաւատն
էլ ունի կրօն (ստորգր.):

Թ. 25ա.— Մի լինիր հաւասարով թեր՝ տիեզերքն
ունի մեծ սէր (ստորգր.):

Թ. 25բ.— Սկզբունք բռնաւորին՝
Եթէ դու իմն ես. նոր տուն կը հիմնես,


Իսկ եթէ դու իմ չես. հողիդ պիտ փըջես (ստորգր.):

Թ. 26ա.— Թէ փառքի հասնի անկիրթ տըգէտը.
Նրանից պիտ փախչի կիրթ-խոհեմ-գէտը:

8-ն Մարտի 1895 թ. Բիւզանդ Կողբացի (ստորգր.):

Թ. 26բ.— Թէ ունես տէր, հովանի
Միշտ արդար ես, գովանի:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АВГУСТ 1987 г.)

Обмен телеграммами между Его Святейшеством Католикосом Всех Армян Вазгеном I и Его Высокопреосвященством предводителем Армянской епархии в Румынии архиепископом Тирайром Мартикяном в связи с открытием музея и Армянского Дома Культуры в Бухаресте и описание торжеств (стр. 3—7).

2. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Нерсеса Бозабальяна в Первопрестоле на праздник Успения Святой Богородицы, 16 августа 1987 г. (стр. 8—10).

3. Биография преподобного иеромонаха Асогика Аристакесяна и присвоение ему степени архимандрита (30 июля и 1 августа 1987 г.)—(стр. 11—13).

4. Церковная хроника, новости. Описание проповедей, литургий и других торжеств в Первопрестоле за август месяц 1987 года (стр. 14—15).

5. В патриаршей Араратской епархии (стр. 16—18).

6. В Армянской епархии Египта (стр. 18—19).

7. Дьякон Саак Сукиасян.—В Армянской епархии Франции (стр. 20—21).

8. Иеромонах Арам (Бояджян)—Церковь Армянская (стихотворение)—(стр. 22).

9. Ерванд Мелконян—Внимание Его Святейшества к сокровищам Армянской Церкви (стр. 23—26).

10. В. Киракосян—Муж благодатный с небес (в честь 90-летия Егише Чаренца)—(стр. 27—33).

11. Володя Абрамян—Новый сборник Богородицы вдохновенных трудов (рецензия)—(стр. 34—35).


12. Карен Матевосян—Гохти, Ериджак, Цагук, Нахджаван... (рецензия)—(стр. 36—37).

13. Анна Аревшатыан—Н. К. Тагмизян.—Григор Нарекаци и армянская музыка V—XV вв. (рецензия)—(стр. 38—42).

14. Рафик Тадевосян—Униатские переговоры в киликийский период (XI—XIV вв.)—(исследование)—(стр. 43—50).


15. Луи Лилуар—Армянское издание апостольских апокрифических книг (1904) и его перевод на французский язык (1986)—(исследование)—(стр. 51—58).

16. Нубар Микаелян—Список новых рукописей, полученных Первопрестолом (№ 639)—(стр. 59—61).




"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(AUGUST 1987)

1. Cables exchanged between His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, and Archbishop Tirayr Martikian, the prelate of Roumanian Armenians' diocese, on the occasion of the inauguration of the House of Armenian culture and museum of Bucarest (29 and 30th May 1987) and the description of the ceremony (pp. 3—7).
2. The sermon of Archbishop Nerses Bozabalian in the Holy Cathedral on the occasion of the feast of Assumption of Holy Virgin (16th August 1987)—(pp. 8—10).
3. Delivery of special doctoral degree to Reverend Asscghik Aristakessian (30-th July and 1-st August 1987) and his biography (pp. 11—13).
4. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of August 1987 (pp. 14—15).
5. In the Araratian Patriarchal diocese (pp. 16—18).
6. In the Armenian diocese of Egypt (pp. 18—19).
7. Deacon Sahak Sookiassian—In the Armenian diocese of France (pp. 20—21).
8. Reverend Aram Boyadjian—"The Armenian church" (poetry)—(p. 22).
9. Yervand Melkonian—Patriarchal appreciation in regard the values of the Armenian Church (dp. 23—26).
10. V. Kirakossian—A graceful man from the very origin (on the occasion of the 90-th birthday anniversary of Yeghisheh Charentz)—(pp. 27—33).
11. Volodya Abrahamian—A selection of religious articles (critical article)—(pp. 34—35).
12. Karen Mathevossian—Goghln, Yerndjak, Djahook, Nakhdjavan ... (critical article)—(pp. 36—37).
13. Anna Arevshatian—N. K. Thahmizian—Gregory of Narek and the Armenian music of 5—15th centuries (critical article)—(pp. 38—42).
14. Rafik Thadevossian—The unitary negotiations during the Cilician period (11—14-th centuries)—(study)—(pp. 43—50).
15. Louis Leloir—The armenian publication of the Apostolic Irregular books and its french translation (1986)—(study)—(pp. 51—58).
16. Nubar Mikaelian—Index of the manuscripts which the Holy See of Etchmiadzin has received recently (No. 639)—(pp. 59—61).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փոխանակված հեռագրեր Բուխարեստում Հայ Մշակույթի Տան և թանգարանի բացման առթիվ	3
Պուրբեշի Հայ Մշակույթի Տան և թանգարանի բացման հանդիսություն	4
ՆԵՐՍԵՍ ԱՌՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ—Քարոզ	8
Մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն	11
Տ. Ասողիկ վարդապետ Արիստակեսյան	13
ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	14
ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ	
Արարատյան հայրապետական թեմում	16
Եգիպտոսի հայոց թեմում	18
ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ—Ֆրանսիայի հայոց թեմում	20
ԱՐԱՄ ԱՔԵՂԱ—Եկեղեցին Հայկական	22
ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ—Կաթողիկոսական գնահատանք հայ եկեղեցական ար- ժեքների մկատմամբ	23
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ—Այր շնորհյալ ի վերուստ	27
ՎՈԼՈՂՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ—Կրոնաշունչ գործերի մոր ժողովածու	34
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Գողթն, Երմշակ, Ծափուկ, Նախնական	36
ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ—Ն. Կ. Թահմիզյան.—Գրիգոր Նարեկացին և հայ երա- ժըշտությունը 5—15-րդ դդ.	38
ՌԱՖԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ—Միարարական բանակցությունները Կիլիկյան շրջա- նում (11—14-րդ դարեր)	43
ԼՈՒԻ ԼԸԼՈՒԱՐ—Առաքելական պարականոն գրքերի հայերեն հրատարակությունը (1904) և մրա ֆրանսերեն թարգմանությունը (1988)	51
Ցուցակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոր ստացված ձեռագրերի	59
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	62
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	63



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Հանձնված է արտադրության 13.08.1987 թ.: Ստորագրված է տպագրության 23.09.1987 թ.:
Տպագրական 4 մամուլ + 5 մերդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 1095

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1987 թ.